844

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ՄԱՍՆ Ա.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԱՏ ԵՐԳԵՐ

ՀԱՒԱՔԵՑ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

1909

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՍԱՒԹԱՆ ՀԱՄԱՄ, ՄՕԼԱ ԹՒԼԸ

ՀՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
1-844ահ

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՍՆ Ա.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԱՏ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ չունչ փչել,
Իմ հոգանըթի չինուածքին
Կենդանութիւն պարգեւել.
Ես անթարթառ մի մանուկ
Երկա՜ ձեռքս պարզեցի,
Ես իմ անպօր թեւերով
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրացած կապկապած
Լալիս էր անդադար,
Մօրս քունը խանգարած,
Ինքըսիմ էի նորանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ատեցի
Ազատութիւնը սիրել։

Թռչիմ լեզուս մինչ կապերը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Ինքացին ա՜ր բերկրեցան,

Նախկին խօսքն ար ասացի,
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ։
«Ազատութի՛ւն» զուր թուաւ։
Իմ մանկական բերանից։

«Ազատութի՛ւն», ինձ կրկնեց
Ծակատագիրը վերեից։
«Ազատութի՛ան զուր պինատր
Կամիս պըտիլ այս օրից։
Ո՛չ, փչուտ է ճանապարհդ,
Քեզ չատ փորձանք կը սպասէ։
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիտ նեղ է»։

Ազատութի՛ւն, գոչեցի
Թո՛ղ որուսայ իմ գլխին։
Փայտակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ զուր գնէ թշնամին։
Ես մինչ ի մահ, կախազան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար, Ազատութի՛ւն։

(Հիւսիսափայլ, 1859) Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՍՈՒԳ ՄՕՐՆ

Իմ սիրելի զաւակունքըս,
Կը թախանձեմ օտար աշխարհ։
Ես ո՞ւր գիտեմ, ո՞ւր փընտռեմ,
Կը ծառայեմ այլոց խոնարհ։
Եկա՛յք, սրտեակըք իմ,
Ձեր մօրն այցելութեան։ (Կրկնէ՛)

Դարերը անցան, լուր մը չտուի,
Իմ սրտիկս մնաւ կարան։
Կուգա՛մ, արիւնըս կը սառի...
Մէկը չունիմ, սաղ ինձ գթանի։
Եկա՛յք, սրտեակըք իմ, եւայլն։

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տրիտուր մինչ յաւիտեան։
Ես կարօտաւ իմ սրտիկաց,
Պիտի իջնեմ սեւ գերեզման։
Եկա՛յք, սրտեակըք իմ, եւայլն։

Ես զուր տալիս թախտական,
Կ'երթես տրիտուր ի մէջ տղոցդ,
Է՛կ, արտասուենք թանգ կարտեան,
Տրիտուր մանուան մեր սրտիկաց։
Եկա՛յք, սրտեակըք իմ, եւայլն։

Իսկ զուր, կրտուենք իմ հայրենեաց,
Գընա՛ տեսու աչքէս ի բաց...։
Ցեղին ողջոյնս տա՛ր զաւակաց,
Չի կեանքիս մէջ յոյս է մնաց։
Եկա՛յք, սրտեակըք իմ, եւայլն։

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնաթեան չըքնիզ
Թէ երգք թըռչին սիրողաբար,
Մատունք կատին ամենագիտ
Թէ որ գարնան փափուկ քրնար,
Զանին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի հզրայր անուն։

Տա՛ր ինձ քո ձեռքդ, եղբայր համբ մեր,
Որ մըրըրկաս էինք զատուած,
Բազդին ամէն ոտ չարանենդ՝
Ի մի համբոյր ցըրուին ի բաց։
Ընդ ասեղօք ի՞նչ կայ սիրան
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ լայինք մենք ի հնում,
Եկէ՛ք զարձեալ յար անբաժան
Խառնենք զարտասր եւ բղխընդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան։
Ընդ ասեղօք ի՞նչ կայ սիրան
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ հագնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներնիս։
Ըղձանձ բարեաց յերկինս քաղենք,
Որ կեանք առնուն Հայոց զաւակիս։
Ընդ ասեղօք ի՞նչ կայ սիրան
Քան զանձկալի եղբայր անուն։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Ի ՄԽՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Անա՛ հրեշտակ ոսկեփետուր
Թռուցեալ բարձուստ երկնաձեմ,
Հայոց բազդին հեծեալ ի կառս բարձրը գոչէ
զատարմադիւ.
Հրոզօր պատգամ,
Ի վերատես գամ։
Միաբանին Հայք,
Եւ նար ձեզ կեանք։
Տրտմեան ուժգին եւ ցանկք եւ սիրտք,
Խազայ արիւն ի թինդ ի թինդ։

Մեղքը կամէ տարբ սէրն ի խինդ,
Յառաքինուց ի Հայու սիրտ։
Սիրաբորբոք համբոյրք բըղխեն,
Արտասուախառն աչուընք ցօղեն։

Արիք Հայկազունք,
Ի սէր փառատուր։
Եռանգեան մատ՛ք
Ի համբոյր հեղիկ։
Տա՛ք համբոյր մի եւս,
Բաղէ՛ք ըզձեր թեւս,
Տա՛ք համբոյր մի եւս,
Սիրոյ է պարգեւս։
կեցցե՛ն յաւերժ վեհ Հայկազունք,
Անմահ թեան սիրան սերտնդք,
կեցցէ յաւերժ Հայկայ ոգին,
Մեզ են վկայ երկիր, երկին։

Անկա պարիսպ ժառա նախահանճան
ոչ ի չանթից ահարկու,
Այլ յակնարկի եւեթ սիրոյ վերատեսչական
կենսատու։

Երկին երկիր
կան ի յակճիռ
Ընդ Հայ ազգիս
Բիւր տրաչալիս։

Բացցին անգունդք սեաւ անյատակ,
Ծածկել զբազդին հին յիշատակ։
Տիեզերաց բացցին մատեանք,
Անպէն դրոշմել Հայոց պարծանք։
կեցցէ՛ Հայոց սէր պանծալի,
Բերոյ փառաց նախանձելի։
Արիք Հայկազունք, եւայլն։

Գ. ԱՊՏՈՒԼԼԱՀԵԱՆ

ՈՒՐ ՀԱՅ, ՉԻՔ ՎԱՅ

Աբգածք Հայոց ժամանակին ընդ անխ-
փչելին տակաւ մինչեւ սիրոյ համբաւին,
Ուխտեմք ի սէր եղբօր՝ ըզկեանս գնել պատ,
Օ՛ն անդր ի մէջ այր ընկերին լարել պատ։

Սրացաւ ի մէնջ բազդն անհամբոյր,
Այլ նոր բազդիս քաղցր է համբոյր։
Եղբայր զեղբայր գըգուէ Սիրով,
Ձոխն ապքաւին մասչի Գրիգով։
Էանոյ պիչեր՝ արդ առաւօտ,
Ի ցօղ ժըպտի Մասեաց արօտ։
Եւ ահա ի վառ չոգչոգիմ
Լոյսն արեգին ծըխայ ի ծով։

Հա՛պա մանկտանք,
Վեհ քաջազունք
Ի գլուխ պըտակ
Ի յաղթանակ,
Աւետ նուագս
Արագս արագս,
Օ՛ն փութացուք
Օ՛ն երգեցուք,

Մէր եւ գութ
Մեր պըտակ,
Այս մեր բազդ
Հրաւիրակ,
Ցընծացեն
Որք լսեն՝
Թէ՝ «ուր Հայ,
Չի՛ք անդ վայ»։

Ե. ՄԵԼԻՔԵԱՆ

ՇՈՒՇԱՆԵՒՍ

Է՞ր հեռանաս քո մայրենի ախտարիւղ,
կարօտ թողուս սերտ բարեկամ քեզանից։
Մեր ամենուս դու մայր էիր գըթառատ,
Արդ հեռանաս՝ մեզ մահ պատէ անթափառ։

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը չատ անգամ
Լատանայիր՝ դեղ դընէիր ամէն ժամ։
Քո մազերից պատրէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար էր անկապ։

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի։
Մեր սիրան, հոգին քեզ հետ տանիս, մաքրուհի,
Գընաս բարեաւ, մեր յոյս, հաւատս քեզ ընկեր,
Այլն ու խաչը քեզ պահապան զօր պիչեր։

Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի զուր ամպերն պատատին,
Ու ամէնուն սիրտ զով առաւ։
Ի զուր Հրեշտակ Մասեաց սարին՝
Հայոց բազդին վերայ լացաւ։
Սեւ ամպերուն մէջէն պարզուր՝
Տեսէ՛ք, ի՛նչպէս կ՛ելլէ պայծառ,

Ու պայ ցնծալով
Լինծայ բերելով
Բիւր երջանկութիւն,
Սահմանադրութիւն։

Ողջո՛յն աւուրն այն վերապանծ
Ուր բարձրացաւ ի լոյս յաղթող,
Արդարութեան եւ իրաւանց

Եւ ապրումներս յաւերժ կմնայ ։
Արևդն հիմնուն անպէնպալիր
Եւ մեծ գործդն հանդիսապէր ։
Կռապայ ցընծալով , եւ այլն ։

Նա բարձրացաւ , ու սեւ ամէմ
Աստուածն խրոխտ անպարտակ
Ինկաւ կործան , ու յաւիտեան
Թաւալ առ մեզ սէր անուշակ ,
Որ գամբարտակն այն խորտակից
Ու գերեզ անուշ մեզի գրկից ,
Կռապայ ցընծալով , եւ այլն ։

Մ. ՊԱՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՈՒՌՆԿ

Կռունկ , ուսոի՞ կուգաս , ծաւալ եմ ձայնիդ ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Մի վազեր , երամիդ չատազ կը հանդիս ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մը չանե՞ս ։
Թռղեր եմ ու եկեր իմ մըլթերս ու այգիս ։
Քանի որ ա՞ս կ'անեմ , կատղասլէ հոգիս ,
Կռունկ , պան մի կացի՛ր , ձայնիկդ ի հոգիս ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Քեզ խաղար հարցնողին չես ասներ ասլատ ։
Ձայնիկդ անուշ կուգայ քան գինւոյ ուրատ ։
Կռունկ , Պաղատաս իմնաս կամ թէ ի Հալատ ,
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Սըրտերնիս կամենան , երանի գընացանք ,
Այս սուտ աստրնուրիս գարկերն խնացանք ։
Աղուհացիկը մարդկանց կարօտ մրնացանք ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։

Աստղնուրիս բաները կամաց կամաց է ։
Մինչ Աստուած լըսէ , պըռնակէն բացցէ ։
Դարիպին սիրան է սուզ , աչերն ի լաց է ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Աստուած , քեզնէ խնդրեմ մուրհէմ ու քէրեմ ։
Դարիպին սիրան է խոց , ճիկերն է վէրեմ ։
Կեցած հայն է լեզի ու ջուրն է հարամ ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Ոչ ըզլաւ օրն պիտեմ ոչ ըզկիրակին ։
Զարկած է պիս չանիրուն , բրտնած կըրակին ։
Այրիկս չեմ հոգար , ձեզնէ կարօտ եմ ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Պաղատաս կուգաս , կ'երթաս ի Սէհրատ ,
Թըղթիկ մի պըրեմ , տամ քեզ ամանաթ ։
Աստուած թող վերկայ լինի քու վըրատ ։
Տարեալ հասուսցես գայդ իմ սիրելեաց ։
Գըրեր եմ մէջ թըղթիս , թէ հոս մրնացի ։
Օրիկ մի օրեր գաչերս չըբացի ։
Սիրելիք , ձեզանէ կարօտ մրնացի ։
Կռունկ , մեր աշխարհէն խաղրիկ մի չանե՞ս ։
Աչտենն է մօտեցեր , գնալու ես թէ ոպիկ ։
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր ։
Ինձ պատասխան չատ իր , երթ գնացիր ։
Կռունկ , մեր աշխարհէն գրնա՛ հետացի՛ր ։

ԱՐԱՐԱՏԻ ԱՐՏԱՍՈՒԵԼ

Մայր Արարատ սիրելով
Քայլառատը գընում եմ ,
Հին հին գարուց յիշատակ
Աչեաց մէջը պատրաստ եմ ։

Բայց նորա միշտ ցեղ ցեղատակ ,
Պրպտար չըլով հերբրին

Դարիս դարիս խրխնելով
Փախչում էին լաստային։

— Ա՛խ, ի՞նչս ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու գետ ծովը չը հասած
Սըպասար ես ինձ նման։

Ի՞նչս արցունք ցայտում են
Քո սէգ, հըպարտ աչերից,
Ի՞նչս արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ յաստակ,
Հանգարտ հոսի՛ խայտալով,
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնիս դէպ ի ծով։

Վարդի թըփեր թո՛ղ բուսանին
Քո հովըտնկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ։

Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջըրին,
Ձըկնեն ոստերն ու տերեւ
Թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թո՛ղ քան համարձակ,
Գառն ու ուլը քո վրճիտ
Ջուրը մրանեն միչտ արձակ։ —

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իր ակիից,
Ամպի նըման գոռալով
Լռեցաւ խօսեց յաստակից։

«Ախտա՛խ, անմի՛ա պատանի,
Ներհըս ի՞նչս գարեւոր
Վըրդովում ես, նորգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

«Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել որ այրին
Ոտից ցգրուխս պըճնուի
Իր զարգերով թանկագին։

«Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Շատերն ինձ են տեսել,
Շատերին ես օտար եմ։

«Կար ժամանակ որ ես էլ
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով
Փախչում էի ափերէս։

«Ցաստակը պարզ ու վրճիտ
Կոհակներըս ոլորան,
Լաստերը մինչեւ այգ
Ջըրիս միջին էր լողում։

«Ի՞նչըս մրնաց այն օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ չէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։

Տուրքը ջըրի ամէն օր
Իր տուրը ծոցէն Արարատ
Մայրահոսում ինձ սընուցող
Պարգեւում է լիառատ։

«Բայց ես այն տուրը ջըրերով
Տուրը Յակոբայ աղբիւրին,

Գնաք ցոլամ արտասո՛ւք
Իմ առելի սահին ։

«Կամ կնոտաւոր իմ ջլերով ,
Ափերիս մօտ կլկլդած՝
Իւր ձեռնո՛ւքը լա անոյ
Գարն՝ ատազակը հոտած ։

«Մինչ իմ սրտիկ (ա՛խ պիտէ)
Ծարաւ , նօթի , անուսանոչ ,
Օտար աչխարհ չաճատ են
Թող ատրերով կխաչանոչ . . .

«Հեռո՛ւ հեռո՛ւ քրչեցին ։
Բնիկ ազգը իմ Հայկեան ,
Նոցա տեղը ինձ տուին
Անգութ խուժանը պարսկական ։

«Ցաւա հասո՛ւր զարկարեմ
Իմ հիւրընկալ ափերը ,
Եւ կամ գոյա՞ հրապարեմ
Ձրպտուս , պրկած աչերը ։

«Բանի որ իմ զաւակունք
Խպէս կու մրնան պանդխտի ,
Ինձ միշտ սրտոյր կը տեսնէք ,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ ։»

Էլ չը խօսեց Արտքը ,
Ցօրձանք տուեց անապին ,
Օդակ օդակ օձու պէս
Առաջ սողաց մոլեգին ։

Ա· Տ· Գ· ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութեան առտուը պայծառ ,
Որ վերատին չոգայ փարատուս ,
Ամէն սրտերն է հնչակը
Կեցցէ՛ներով գոռաց այլը ։

Ազատութի՛ւն այս խաղաղիկ
Սիրոյ յուսոյ անմեռ ծաղիկ
Ծրլի փայլակ անակընկալ ,
Հալեցնէ հին սխեմն ալ ։

Ձեռնակ կարմիր պրոչներ վէա վէա
Կը ծածանին հավերան հեա ·
Այդ զոյգ գոյներ նուիրական
Ցիշատակօք կը պարծենան ։

Լուսապսակ է ազատութիւն ,
Բազարագոյն գոյնին արիւն ·
Այն արիւնով օծուած անմիզ
Ազատութիւնն է փառաւիզ ։

Ազատութի՛ւն կ'ուզենք սակայն ,
Իմաստուն , լուրջ , հայեացքով լայն ·
Ազգապատիւն չզօր բազուկ
Մեր իրաւանց բլայ նեցուկ ։

Արեւելքի ազգեր ենք քոյր ,
Թող հալածի նախանձոտ կոյր ·
Ջեռք ձեռքի տանք , ա՛յ հաչուենք ,
Եղբայրութեան ձգենք գաչինք ։

Հայրենիքին մի եւ ազատ
Օտարոյրներ ենք հաւատաւոր ·

Զևոր ձևոքի տանք եւ աշխատինք
Այս աւրը ոխտին վկայ երկինք ։

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք , եղբարք , մարդկութեան մէջը ,
Հայ կընդրեր է մեզ Պատմութեան էջը ·
Հայ անուանր զմեզ կ'ղձանեն երկինք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Հա՛յ ապրինք · — Մեր հայրն է այն Դիւցազուն
Որ զԱզատութիւն սրբեցոյց մարզուն ,
Ու մեզ վեհ անուն մը արաւ բաժինք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Մեր աշխարհն է տ՛ւրբ ։ — Մեր հողուն վրան
Աստուած է քալեր , հանելով զԱդամ ·
Լեզուն առեղծեր ու խօսեր է նախ ինք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունէն օրրան ·
Երկիր մարդութեա՛ն է մերա Հայաստան ,
Կրօնից նախկին սեզան է Մասիք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Հայուն պերճ անուն ո՛չ միայն յերկիր ,
Յերկի՛ց մէջ չոզայ լուսալիր ·
Քաջ Հայկին աստեղք անմա՛հ են յերկինք , —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Հա՛յ ապրինք · — Ո՛ր ազգ կայ Հայուն նրման ,
Որ ունենայ հին պարծանքներ այսքան ,

Ո՛ր ազգ Հայուն պէս չքեզ Հա՛յրենիք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Ըսէ՛ք , ո՛ր Ազգին չորս Առաքեալներ
Երկնեց Թագաւորն է փառաց զրկեր ,
Ո՛ր Թագաւորին հետ Թղթակցեր ինք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Ո՛վ կրնայ համրել Սրբոց մեր զանուանք ,
Մեր պատմութիւնն է Նահատակա՛յ ցա՛նկ ,
Մեր եկեղեցին յերկրի է երկի՛նք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Քրիստոսի անունք անպրանիկ օրհնինք ,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մե՛նք ·
Հայր պարծայոյց վերկին եւ վերկինք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Մեր ապր հետեւող է ճիշդ Քրիստոս ,
Որ խաչն ա՛յսչափ զար առած յուսոյ ,
Ո՛չ , չի՛ խոնարհիր , չի՛ լար պատալիք ·
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Այ՛ , Խաչին կեանք՝ կեանք է վըշտալից ,
Այ՛ , Հայուն կեանք՝ կե՛անք է ցաւալից ·
Բայց Խաչն յաղթութիւն անոր վեհ կընիք ·
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Մեր քաղցր Հայրենիք , մեր Թագ , պատանդ
Ամպեր են ծածկեր Արեւդ նման ·
Ցաւագի՛ր , արեւ կաւատար մեզ երկինք · —
Եղբա՛րք , Հա՛յ ապրինք ։

Ո՛չ , Տակաւին մեր չէ միշտ արեւդ
Ըզ[illegible]ութեան ատեղ Հայն ա՛յսր ·

1 — 84կան

ԱՐՑԱԽԻ

Նոր երջանկութեան ապագայ մ՚ունինք . . .
Եղբա՛ր ք , Հա՛յ ապրինք :

Հա՛յ ապրինք · — Օր մը յաղթական մտնուն
Պիտի բարձրանայ անմա՛հ Հայաթիւն . . .
Ո՛հ , ա՛յն օր մեզի չտա ծագէ , երկինք . . .
Եղբա՛ր ք , Հա՛յ ապրինք :

Հա՛յ ապրինք , որ մեր արիւնք ալ , եղբարք ,
կարենան պարծիլ որ գմեզ ունին հարք ·
Զրկա՛նք Հայ անուան , չըլլանք նախատինք · —
Եղբա՛ր ք , Հա՛յ ապրինք :

ԽՈՐԻՆ ԵՊՍ · ՆԱՐ-ՊԷՅ

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳ

«Մեր Հայրենիք թշուառ անուէր ,
Մեր թշնամեաց ոտնակոխ ,
Իւր որդիքը արդ կանչած է
Հանել իւր վրէժ , քէն ու սուր :

«Մեր հայրենիք չըմռնևրով
Այսքան տարի կապկապած ,
Իւր քաջ որդւոց սուրը արևնով
Պիտի լճնի ազատած :

«Ահա , եղբայր , քեզ մի դրօշ
Որ իմ ձեռքով գործեցի ,
Գիշերները ևս քուն չեղայ ,
Աշուաւ քով լուսցի :

«Նայի՛ր նորան , երիք գոյնով
Նահրական մեր նշան ,
Թո՛ղ փողփոզի թշնամւոյն դէմ ,
Թո՛ղ կործանուի սէգ հրեան :

«Ինչքան կին մարդ , մի մոլ էակ ,
Պատերազմի գործերուն
կարէ օգնել իւր եղբօրը ,
Զանոյ չարեցի քո սիրուն :

«Ահա իմ գործ , ահա դրօշ ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս ,
Գրնա՛ փրկել մեր հայրենիք ,
Պատերազմի վառ հանդէս :

«Ամենայն ազգ մահը մի է ,
Մարդ մի անգամ պիտ՛ մեռնի ,
Բայց երանի՛ , որ իւր Ազգի
Ազատութեան կը զոհուի :

«Գնա՛ , եղբայր , Աստուած քեզ յոյս ,
Ազգի սէրը քաջալերէ ,
Գնա՛ թէեւ չեմ կարող գալ ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր :

«Գրնա՛ , մեռիր գոնէ քաջի պէս ,
Թող չի ուռնայ թշնամին
Քու թիկունքը , թող նա չտեսէ
Թէ վատ է Իտալացին :»

Աստուա , ուսից օրիորդը
Իւր եղբօրը մի դէրօշ ·
Մնաւաքսից էր , աղնիւ գործած ,
Ուր երիք գոյն կար որոշ :

Եղբայրն առաւ և ապջռանեց
Իւր սիրական քնքոյշ քոյր ,
Առաւ գինքը , սուր , հրացան ,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր :

«Քուրիկ , — կանչեց քաջ պատանին , —
Մնաս բարեաւ , սիրական ,
Այս գիշերային պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալեան :

«Նա սուրը է ինձ , երբ մկրտուած
Արտասուքով ու կընքած ,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ ,
Հայրենիքի նուիրուած :

«Թէ մեռանիմ , գու մի՛ արտար ,
Իմացի՛ր որ սարեցի
Դէպ ի մահու արքայութիւն ,
Իմ հետ քանի թշնամի :»

Առաց , վազեց դէպ ի հանդիս
Աւստրիացւոց յանդիման ,
Իւր արիւնով գրնել յաւերժ
Ազատութիւն Իտալեան :

Ո՛հ , իմ սիրտը կըտրատւում է
Տեսանելով այսպէս սէր ,
Դէպ ի թշնաւ մի հայրենիք
Որ առհասին եղած էր :

Սերա կէսը , կէսն կէսը ,
Գէթ երեւէր մեր աղգում .
Բայց մեր կռնակը ... ա՛լը , Եղիչէ ,
Ո՛լը մեր «Տիկնայք վախկաուն :»

Ո՛հ ... արտասուք ինձ խեղդում են ,
Այլ չեմ կարող բան խօսել :
Ջի՛ ... Թշնաւ չէ Իտալիան ,
Եթէ կանայք այսպէս են :

Թարգմ. յետաց կոմս Իմմանուէլի
Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՀԱՅՐԻԿՅԱՆ

Եկել է պատան , սոխակը սիրան
Վարդի թփի տակ , Հայրիկեան ,
Երգէ հայրենիք :

Մրմնջնտակ , բազէ , թռչուններ համօրէն ,
Քաշում են միչտ ա՛խ , Հայրիկեան ,
Օտարաց երկրին :

Կուռնակ մեր պանդուխտ իւր բարձր գիրքով ,
Փութայ ձայն տալ մեզ , Հայրիկեան ,
Հայրենեաց սիրով :

Վասպուրականի երիտասարդներ ,
Եւ օրիորդներ , Հայրիկեան ,
Սիւեր են հազեր :

Պատանիք , մանկունք , օրիորդ , կուսանք ,
Հայրիկ կանչելով , Հայրիկեան ,
Քայլեն հառաչանք :

Մեր սիրան ու հոգին քու հոգւոյդ զուգան ,
Հրնչուակ Հայ ազգի , Հայրիկեան ,
Դարձիր Հայաստան :

Մեր սիրան ու հոգին քու մարմնքեցիր,
Քաղցր ու անուշիկ, Հայրիկճան,
Թողիր քնացիր։

Վախերի ափեր, վաեմ, չես սիրում,
Վարագայ վանքիդ, Հայրիկճան,
Կարօտ ես քաշում։

Հրաժարական քարոզդ տուիր,
Խեղճուկ սրտերնուս, Հայրիկճան,
Կրակ վառեցիր։

Իսկ երկուշաբթի, որ օրն էր Աւագ,
Ի Սուրբ Յակոբէն, Հայրիկճան,
Դառնացիր աղագ։

Ո՛ւր որ ալ լինիս, ո՛ւր որ ալ երթաս,
Քու վայրկեան ջահէդ, Հայրիկճան,
Մեզի լոյս կուտաս։

Երբոյ ճանաչէ քու բարձր արժանիք,
Մինչ քու կարօտով, Հայրիկճան,
Կ'այրինք ասդրինք։

ԵՐԳ.

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազատութեան սիրոյն համար չատ արիւններ թափուեցան,
Անոնց հայրեր ու զաւակներ եկան այստեղ թաղուեցան։ (կրկնէ)

Ահա, եղբայրք, ես ալ կ'երթամ Ազգիս համար մեռնելու,
Ազատութեան սիրոյն համար ամբողջ կեանքիս պահելու։

Գերեզմանիս հոգին վրայ թափէ արցունք հայր և մայր,
Սիրէ ծաղիկ բուրաստանէս, նահատակ եմ ես քաջէս։

Ահա այսօր Հայ եղբայրներ կոչան այստեղ ազգասէր,
Նահատակաց հոգին վրայ աղի արցունք թափելու։

Ո՛վ եղբայրներ, դուք ալ եկէք գերեզմանին խոնարհէն,
Ուրախացէք և ցնծացէք Ազատութեան գոչերէն։

ՄԱՂԹԱՆՔ

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան,
Եւ արժանի անոնց հոգին երկնից սուրբ արքայութեան։

1908 Օգոստոս 8 ԳՐԻԳՈՐ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ
Երաժիշտ

ՎԱՐԴԱՆԻ

Իմ հայրենեաց հոգիս վարդան,
Հոգիս հզօրդ եղնի զուրգան,
Որ Տրդատի սիեղի քով
Վաթսուն հազար կարիճներով,
Զարկիր, զարկուար, ինկար քաջ քաջ,
Պարսիկք սրսիած ի ճախք ու յաջ։

Իմ հայրենեաց հոգիս վարդան,
Հոգիս հզօրդ եղնի զուրգան։

Աւետարան ու խաչն ամբիր ,
Տարիր երկինք բարձրացուցիր ։
Եւ դու ալ հետ Թոզիր գացիր ,
Անուշ արեգ հոգին տուիր ,
Որ հայրենեաց չոգայ արեւ ,
Շատարչանի գաչուն վերեւ ։

Իմ հայրենեաց արեւ վարպան , եւայլն ։

Սրբանդ կարմիր կարմիր թափաւ ,
Դաչան ու ծաղիկ ներկուեցաւ ։
Լուսնակն եկաւ ամպի տակից
Պաղ պաղ թափից ցօղիկն յաչից ,
Որ հայրենեաց վարդեր բացուին ,
Երգէ պըլպուլ գրախտի ծաղին ։

Իմ հայրենեաց արեւ վարպան , եւայլն ։

Ս· Հ· ՖԻԼԼԻԿԵԱՆ

ԽՐԱԽՈՑՍ

Հերի՛ք, որդեա՛կք, այսքան տարաւան տառապանք,
Հերի՛ք անգութ գաժան քրդին տարն ինկանք՝
Քանի՛ խռնարհ գլուխ գրինք գայլերին ,
Այնքան ծանրը բեռներ գրին մեր վզին ։

Հերի՛ք , երնեկնք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հայ քաջերի արիւնից ենք եւ ազատ ։
Թէեւ չունինք ո՛չ տուր , ո՛չ թագ , ո՛չ նիզակ,
Մեր բառերն էլ կ՚անեն նրանց չար տառակ ։

Ինչո՞վ են նրանք մեզ սիրելու արժանի ։
Նրանք մարդ չեն, այլ վհուկական վայրենի ։
Մեր է ձիրքը , մերն է ուսումն ու հանճար,
Մերն է հողը , մենք ենք նրա տէրն արդար ։

Հերի՛ք, երնեկնք, ցոյց տանք թէ մենք հարազատ, եւլն։

Նրանց են մեր կոյս աղջիկները , հարսունքը ,
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը ,
Նրանց սուրբ ծայրն է կարծես մեր հոգին ,
Նրանց գամիրը մեզնից չատ է թանկագին ։

Հերի՛ք , երնեկնք , ցոյց տանք թէ մենք , եւլն ։

Մենք եղբայրներ ունինք հեռու տեգերում ,
Նոքա մեր վրայ լուիկ արցունք են թափում ·
Չեն խնայել թէեւ ու թիկունք , կը տանին,
Շատով կուգան կը միանան Սուրբ Գարթին ։

Հերի՛ք , երնեկնք ցոյց տանք թէ մենք , եւլն ։

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ
ՋԷՅԹՈՒՆՑԻ ՊԱՏԱՆԻՈՑ

ԵՐԳ

Դա զո՞վ խնդրես, մայր իմ անուշ ,
Է՛կ մի գազար , մօտեցիր հոս ·
Անլայ աչօք պիտ զորգիդ ,
Ու իւր վէրքերն արիւնաշաղ ։

Քրտաց մայրիկ թագ չան , ու գան
Ուրախ լուրեր սար ի Զէյթուն ։

Ի՛նչպէս երբեմն օրրանիս մէջ ,
կակուղ ձեռամբ փայփայելով ·
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր ,
Իբրեւ հրեշտակ նազապերով ։

Զիս հանգչեցուր ի հոգ , ու գան
Ուրախ լուրեր սար ի Զէյթուն ։

«Նորեկ արքայ կենաց արեւ ,
Ձեզի համար փայլի, Հայե՛ր» ·
Այսպէս յայնժամ ըսւ երգէիր ,
Օրօրոցիս ետեւէդ քալէր :

Անանց համար չիջա , և գուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Կարմիր կայլակը ցայտուն վէրքէս ,
Սակայն , մա՛յր իմ , նայէ չո՛ւռ պիս ·
Զարիւնաւէտ Քնարաձեւն տե՛ս ,
Հազարնեւրալ փոսւած գեհին :

Կերար գանոնք առ մեր , ու գուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ինչպէս վիշապ մըսլընչեալ ,
Ցանկարծ մեր վրայ յարձակեցան ·
Ցնցեց Զէյթուն դլուխն ժայռատ ,
Իւր վիհից մէջ թօթափուեցան :

Կարմիր նետիւս քորք մեր , ու գուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ու ծախ զարկին մեր հարց սատերն ,
Չի չէ մեռած Հայոց կրակ ·
Ու ցնծացին այնչափ գոռեր ,
Չի լսծաւ վրէժ յարեան վաղակ :

Ինգայ Մասիս , մայր իմ , և գուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Վերջին համբոյր առայ քեզ , մայրիկ ,
Հառաչանօք գայն սիրտս ուռոյց ·
Վերջին անգամ պրկեմ մեր նոր ,
Ոյր արդ կ՛իջնեմ ի ծոցն անոյշ :

Խաչ մի անկէ վերաս , ու գո՛ւն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

ՍԱՍՆՈՑ ԿՈՏՈՐԱԾ

Սասուն ելաւ ապառամբեց ,
Աչխարհի մէջ հանեց թնդոց ,
Ամերիկա , Եւրոպ ցնցեց ,
Քաջաց բանակն գոնդագոնդ :

Հայոց սրտեր թրթռացին ,
Հայաս ձայներ արտասուց ,
Կլսարիճք յառաջ չուաս խաղացին ,
Ազատութիւնը թնդաց :

Ա՛խ , Սասունցիք , քաջ Սասունցիք ,
Ձեր արիւնին մենք զուրան ·
Հնչակեան սուրբ սերմեր ծլին ,
Ազատութեան մենք զուրան :

Քառասուն տեսաս և կատարեց ,
Զօրքեր հանեց բիւրաւոր ·
Յիսուն հազար զօրքեր կանչեց ,
Աբիւնաբրաս , զօրաւոր :

Եւ Սասունը պաշարեցին
Ամէն վայրենի քիւրտերը ·
Թնդանօթներ արտասցին ,
Քարբանդ երին գիւղերը :

Ա՛խ , Սասունցիք , քաջ Սասունցիք :
Ձեր արիւնին մենք զուրան ·
Ա՛խ , սուրբ հազիւ անմահ սրտիք
Դիահներուս մենք զուրան :

Մօր արցունքը վառ պատուց ,
Գլուխներ անցուց նետակով ,

Մինչ վերջին չանչ Սասնոն կանչեց
Ազատութեան կարօտով :

Եւ արիւնը գետի նման
Թրջեց Սասնոյ վէհ սարերը,
Հայոց բնութիւնը կատարեալ
Գարշ բռնութեան սուրը զոհեր :

Ա՛խ, քնքոյշ ու վառ բանաստեղծներ,
Նզովք ըլլայ ձեր գլխուն,
Միշտ կարիճ էն Սասնոցիները,
Նզովե՛ք, Չէքի՛, քո անուն :

Երազ անուա, գնացիր անդէն,
Աչքած նայեց Հայերուն,
Տեսաւ վիհակ պէշ է թուրքին
Եւ խորտնցաւ չաներուն :

Հայուն արեան չը հատաւայ
Եւ յանձնախումբ մը ծնաւ,
Թուրքին ալ աւազ իրեակ՝ խնդալ,
Ջինուած լեռներ ցոյց տուաւ :

Ա՛խ, երազա, մօր մը պէս խորթ,
Հայ դիակնե՞ր կը ծաղրես,
Թուրքի՞ն կ'ընտրես քեզ աւազնորդ,
Այս ի՛նչ կատակ մեզ կ'ընես :

Կեցցէ՛ կախ, կեցցէ՛ արիւն,
Այս է ճամբան միշտ մեզի,
Մեր արիւնը եւ թոպալին
Անշուշտ թէ քիչ կը թուի :

Ազատութեան համար անհամ
Թող եղէ ազգ Հայաստան,

Մեր արիւնով է մեզ ներված
Շահախնդիր եւ թոպան :

Սասնոյ կին, Սասնոցի քոյր,
Քեզ արիւնին մենք զոհ պան,
Հնչակեան սուրբ սերմեր ծլին,
Ազատութեան մենք զոհ պան :

ՄԱՀՄԵՐՁ ՀԱՅԲԵՆԱՍԷՐ

Ազնիւ բնկեր, մեռանում եմ
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքըս ես օրհնում եմ, —
Օրհնում եմ քեզ Աստուած :

Հեռանում եմ, անգին բնկեր,
Զրկնահատած ոչ սիրից,
Բայց հաստատուն անձնուէրը,
Ապիս մրչակ կը հաշտեմ :

Ազի՛ւ բնկեր, չը մեռանիս,
Անպատճառն ջեմ սիրով
Ես սիրել եմ իմ Հայրենիք, —
Գիտե՛ւ ու դու նոյն չափով :

Ինչո՞ւ թիւնը Հայոց ապրի՝
Կարեկցարար մտածիր,
Ոսկեզբօդին եղիչէի
Քաջ աւազնորդ քեզ գնարիր :

Անմահ սուրբ կրօն, ազգի մխիթար
Ազատ կամքով ու խրոխտ,

Ա՛յնտեղ վարպան, անմա՛հ վարպան՝
Իւր խրնկելի քաջերով։

Հայրենի՛ք, — սեղան սրբութեան —
Եւ՝ Աստուծոյ տաճար
Շատ կ՚աղաչեմ, չատ կ՚արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արեւ։

Իմ մրաներիմ, մահրա մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետեւ խիղճս արդար է,
Ձըմարտութեան ջատագով։ —

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԵՐԳ ԱԽԱՐԱՅՐԻ

կտուեցէք, տղերք, կտուեցէք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած թշնամւոյն առաջ,
Ցանկալի է մեզ մինչ ազնիւ մահը,
Հեռու մեզմէից ոսոխին ահը։

Յառաջ խիզախենք իրրեւ նահատակ,
Ի զուր թող չանցնին մեզմէից մէկ գնդակ։

Ահա՛, քրդերը վախչէն սարսափած,
Ահա՛, դիակներ արեամբ շաղախուած։
Կրակ անզգայէք, անդադար կրակ,
Փառք մեր զէնքերին, առատ է գնդակ։

Ա՛յս անգամին ալ ցոյց տանք թշնամւոյն
Թէ ինչ է Հայու ոյժն ու քաջութիւնն։

Մեզ սոնտամարեն մեր նախնի քաջերը,
Մեզի կըսպասեն մեր հին եղբայրներ։

Ազատ չը ծնանք, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրան ու հոգին պահենք անարատ։

Դէ՛հ կտուեցէք, տղերք, մինչեւ չանչ վերջին
Արժանի լինել փառաց պսակին։

Մեռնինք յաղթով, մերն է ազատան,
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան,
Ա՛յսպէս յարդարեց եւ լինկա արին
Թողլով մեզ անուն վիշտակ բարին։

Անեղ կատի մէջ մի փոքրիկ հերոս,
Անհուանալի կարիճ Մարաթոն։

ԱՆԳՐԱՆԻԿԻ ՄԱՐՏ

Պաշնակցական խումբ, գնանք մենք Աստուն,
Մեր Հայ եղբայրներ մեզ են սպասում։
Անգրանիկը քաջ իւր ընկերներով,
Կ՚ուզէ պատերազմ, կ՚սպասէ գարնան։

Մօտ է գարունը, չատուկ կը բացատի,
Հայու խօսքը քաջ չատուկ կը լսուի,
Հայերը անվախ հոգով միացած
Հրացան ամրողջ ոսքի են կանգնած։

Խմբապետները հոգով են երջատ։
Ձիերպի ուժով գնում են առաջ։
Առաջ է կանգնած Անգրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կ՚ուզէ պատերազմ։

Հերիք, եղբայրներ, մենք չատ գնացինք,
Բատական չէ՞ մեզ այսքան հարեւանցք։

Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմայ ուժ ունինք, զարձեալ եա կ'առնենք։

* * *

Հայ եղբայրնե՛ր, թիկունքի զանգ,
Աբեան զաչալ մենք նետաւինք,
Սարը ձեռին, հողը կռնծքին,
Սառած սրտեր փորփռքենք։
Աբեւելից լոյս է ծագում
Եւ Հայաստանը ուժգին ցնցում, օն,
Օ՛ն յառաջ, օ՛ն մարտ,
Օ՛ն ի հրազայր մեր արիւնով, մեր արիւնով,
Ազատ բանանք, Հայ եղբարք, ձան եղբարք
Թշնամու դէմ մենք սպանանք,
Հեղեղի պէս, փոթորկի պէս լուայ արիւնով,
Ներկեր ներկենք, պիղծ գիակով գաշտեր
պատենք։

Թող գնդակի տարափ թափի,
Թող մեզ մահը անարգ լափի·
Թշնամուն դէմ մենք սպանանք,
Հեղեղի պէս, փոթորկի պէս
Ելա արիւնով ներկեր ներկենք,
Պիղծ գիակով գաշտեր պատենք·
Թող վերջապէս տեսնէ վաթան
Պարզուած դրօշը ազատութեան·
Թող վերջապէս տեսնէ վաթան
Պարզուած դրօշը ազատութեան։

ԵՐԳ ՉԷՅԹՈՒՆՑԻՈՑ

Զէյթունցի ենք, ժայռի ձագ ենք,
Կը թրսչքտինք սարէ սար,
Որ օրս գըտնենք ու բըզըկտենք
Եւ յօշոտենք չարաչար։
Զէյթունցիին կերակուրն է
Արիւնապաթ, ոսկրէ թան
Զոր բանուածեան տեւ արիւնէ
Կը պատրաստենք միաբան։
Մենք վախ չունինք ոչ գնտակէ
Եւ ոչ սուրէ երկսայրի·
Քաղ մ'է մեզի, Աստուած գիտէ,
Թափել արիւն գազանի։
Ազատաժի քաջ զաւակց
Վախ ու երկիւղն ամօթ է·
Զէյթունցիին պատկ փառաց
Լեռի գաշտի կռիւն է։
Զէյթունցի ենք, մարդ ենք կռուի,
Միշտ չարդելու ենք յօժար·
Այս է կոտակ մեր պապերի
Զարնել մէկի դէմ հազար։
Ուրիշն հաստափոր գուք հարուստներ,
Գըզրոց, սընտուկ բաց ըրէ՛ք·
Ծրարներով չատ ոսկիներ
Մեզի պաշար զըրկեցէք։
Եւ գուք, եղբա՛ր ք, օն անդր յառաջ,
Զէնք ու զրահ կապեցէք,
Բա՛ւ է այլ եւս լացն ու հառաչ,
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ գոչեցէ՛ք։

Յ. Յ. ՉԱՒՐԵԱՆ

ՍԵՐՈՒ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է, ի՞նչ կը սպասէ.
Արդէն ժամանակ է, թո՛ղ գայ.
Մահ պատերազմի օրհաս է.
Ո՛վ որ անվախ քաջ է, թո՛ղ գայ։

Կա՛մ կռուեն՛ք պարպենք, վերջանանք,
Կա՛մ ղէնքով փրկու թիւն ստանանք,
Կռուելով փրկենք Հայաստան,
Ազնիւ մտածողը թո՛ղ գայ։

Այս մեր Սասուն սարէ Սիփան,
Կոիւ ունէ միշտ անխափան,
Կռուելով փրկենք Հայաստան,
Այս յոյս ունեցողը թո՛ղ գայ։

Այս հինգ զար է մեզ կը սպաննեն,
Բռնի կրօնքէն կը հանեն,
Մեր կիներ աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թո՛ղ գայ։

Երկաթէ մարդ, քարէ հոգի,
Վրէժխնդիր լինի քուրդին,
Անվախ քարի տակ չոքողը,
Անսխալ խփողը թո՛ղ գայ։

Վերջապէս ժնդ ունինք կռիւ,
Ջէնքով պիտի մաքրենք հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ։
Սերուը փայլային սիրողը թո՛ղ գայ։

ԽԱՆԱՍՈՐԱՑ ԱՐՇԱԻԱՆԲԻՆ ԱՌԹԻԻ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,
Ցէտահներ դաշնակցեցան, վրէժխնդիր գոռում են.
Սոսկաց Քիւրտը, լեզապատառ Մազրիկցին,
Ջէր սպասում խոպառ ջնջուիլ ցէտահի գնդակից,

Եամա՜ն, Աստուած, ցէտահն եկաւ, ո՞ւր փախչենք
Այսաց, որդուն կրծքին սեղմած լեզապատառ քրդուհին.
Մի, վախեցար, հանգիստ եղիր բալլի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրիժառու քաջ ցէտահն

Մի ժամւայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանայք դաշտեր կարմիր գոյնով ներկուեցան.
Հայե՛ր, յիշեցէ՛ք նուիրական այս օրը.
Ցուլիս ամսի քսան հինգին կատարեցէ՛ք մեր տօնը։

Ա Ղ Ա Ս Ի ԵՒ Ը Ն Կ Ե Ր Ջ Ի Ւ Ր

Այն որ ծանօթ է պատմութեան Ազգին,
Ճանաչէ Վահան, Մուշեղ, Գարեգին.
Նոքա զընային, Տէր եւ մեզ կըրկին,
Սէգ կարօն, Մուսէն եւ քաջն Աղասին։

Ապրի՛ն պաշտպանք մեր Ազգին,
Կարօն, Մուսէն, Աղասին։
Կեցցե՛ն դիւցազք մեր Ազգին,
Կարօն, Մուսէն, Աղասին։

Միշտ պիտի պարծի Քանաքեռ սուան,
Որ ծընաւ ձեզ պէս կորովն անընկճան.
Դուք Աբարատայ ամուր ախոյեան,
Փառք և ցընծութիւն Աւգանազեան տան։

Ապրի՛ն պաշտպանք մեր, եւն.

Մասիս, Արագած, Նըպատ և Զիրաւն,
Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան.
Դուք նոցա գըլխին կեցէ՛ք Հայաստան,
Ո՛ւր տեղ վըտանգը կայ, հասէ՛ք օգնութեան։

Ապրի՛ն պաշտպանք մեր, եւն.։

Մինչ մեր սեւ բաղդէն՝ Սատանն այն գաղան,
Լըլկէը խեղճ Հայոց՝ վըշտօք զանազան,
Դուք նորա գարձաք սարսափ յաւիտեան,
Զօրս նորին վանեալ տարայք ցիր ու ցան։

Ապրի՛ն պաշտպանք մեր, եւն.։

Զի մունար Անին զայն ձեր յաղթութիւն,
Որով Թըշնամին արարիք նըկուն,
Այնու Հայ գերեաց հասաք յօգնութիւն.
Խումբ խումբ փրկեցիք զառնալ յիւրեանց տուն։

Ապրի՛ն պաշտպանք մեր, եւն.։

Ղ. Վ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ

ԵՐԳ

Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,
Այժմ ինձ յետ գար, կըտրիճ գառնայի.
Նըժոյգ ձի նըստած, բեխերս ոլորած,
Ձեռըս թուր առած, ես գաշտ կ'երթայի։

Ես գաշտ կ'երթայի, գաշտ Աւարայրի,
Ողջած ցօղած Հայոց արիւնով.
Մ'ղձ իմ սիրական, դո՛ւ ազգ Թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի։

կ'ասէի Հայոց օրիորդներին.
«Ծախեցէ՛ք հագի ձեր թանգ շորերը,

Թողէ՛ք պաճուճանք, զարդ, մարգարիտներ,
Ժանգոտած ու դուլ են մեր թըրերը։

Տուէ՛ք բեհեզեայ մեզ ձեր չապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը.
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից.
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը։

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Սընտուկներըս լի ոսկւով արծաթով.
Շատերի նըման ես չէի լինել,
Երբեք աղգասէր ունայն խօսքերով։

Շանապանիա գինու, ալմաս խաչին տեղ
կ'առնուի առատ գինակ ու վառօդ,
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ
Հայաստեաց աղգին, անթիւ զօրքերով։

Թէ ես լինէի մի երկրի իշխան՝
կուտայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպ ի Հայաստան,
Խեղճուկ Հայ աղգին լինել օգնական։

Բայց եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ,
Ազատած լինէի մեր հողագընտին,
Ի՛նչ սուր սըլաքներ պիտի չաղ տայի,
Մեր արիւնարբու թշնամեաց գընդին։

Ենդ՝ վատ ու մոլի, պարսիկ ոխերիմ,
Դարեւոր ոսոխ դու Հայն կրօնամոլ.
Գիտց՛ր որ իմ այն երկայրի սրից,
Անմաս չէր մնալ ոչ մի ձեր օրդին։

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Վարդան մեր քաջ զօրավար,
Սուրն ի ձեռին ոսկեվառ,
Կանչում է իւր քաջերին
Զարկել զգլուխ Ճաղկերտին.
Ո՛հ, Վարդան, Վարդան, Վարդան:

Հայոց զօրքեր դունդագունդ
Ժողովում են կորով թունդ
Մայրաքաղաքն Արտաշատ,
Մայրաքաղաքն մարզաչատ.

Հայոց զօրքերը անհամար,
Դրօշակներով պայծառ,
Ամէն կողմից ընտրած՝
Վազվզղեցին կատաղած:

Ղեւոնդեանց խումբը անհամ,
Անվախ, անդող և անհամ,
Խաչը բռնած Քրիստոսեան,
Բորբոքեցին զօրք Հայկեան:

Փառք և պարծանք յաղթական
Քե՛զ, սիրելիդ իմ Վարդան,
Որ քո սիրով բորբոքիչ
Հանդիսացար քաջ փրկիչ:

Դու և քո քաջ ընկերներ
Անխոցապար անվհներ
Զարկեցիք զօրք պարսկական
Դրիք գետին անկենդան:

ԱՌ ՍԷՐ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած,
Անքուն աչօք կամ ցաւած,
Իմ սիրելւոյս կարօտցած.
Զըկայ մէկն որ կարեկից
Ըլլայ ցաւած իմ սըրտիս:

Ո՛վ Հայրերիք իմ սիրուն,
Ա՛հ, առչորէ զիս անուշ.
Արեւօք պիտի չը տեսե՞մ
Քու լուսափայլ զուարթ դէմքդ:

Հառաչանք բիւր ի սըրտէս,
Արտօսր հեղում ակերէս,
Զեն լինձ երբեք մըխիթար,
Ոսկի, պատիւ, սէր օտար:

Ա՛յլ ես անար սիրոյն զոհ,
Կ'ընեմ զամէնք սըրտով զոհ.
Միայն թէ յոյս մ'ունենամ,
Իմ սէրս տեսնել միանգամ:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏԱՐԱԳԻՐՆ

Ընդ աստեղօք օտար ափանց,
Տարագրելոյս չի՛ք բերկրանք.
Լըքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց,
Դու ես միայն ըմխիթանք:
Օտար աստղեր լոյս չունին,
Օտար երկիր լինձ մըխին:

Օտար բոյսեր դառն ու անհամ,
Ջրերը պըղտոր ու լեղի,
Դաչտը անապատ հովիտը արտեր
Ու պարտէզներն անբերրի։
Օտան ծառեր չուք չունին.
Օտար ծաղիկ հոտ չունին։

Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր այդ պայման ինձ համար.
Ջիւն ձըմեռ են իւր դարուններ,
Ջունի երբեք ինձ ամառ։
Օտար երկինք ամպոտ են
Օտար սըրտեր անգութ են։

Օտար թէեւ չընչեմ ես օդ,
Ցաւօք սահին իմ օրեր,
Բեզ, Հայաստան սիրակարօտ,
Սիրոս համայն քեզ նուէր։
Օտարութիւն, դու փուշ ես,
Այլ Հայրենիք, դու վարդ ես։

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՈՒԵՆՔ

Մենք պէտք է կռուենք. և ոչ լայ լինենք,
Ազգի կորուստը ղէնքով յետ խլենք.
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ ի՞նչ չան բերեց արցունքի ծովը։

Այլ ևս չլանք և ոչ լայ լինենք,
Կրակուած սրտով մեր գործը վարենք,
Անվեհեր քայլին այս է պատկանում,
Միչտ ազատ մեռնիլ կռուի լայն դաչտում։

Մոլի և երկչոտ թշնամին թո՛ղ լայ.
Երբ հայ քայլի դէմ կռիւ դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք մահից սանձանքից,
Եւ ոչ ալ մահու դաժան դնտակից։

Անէծք այն հօրն, որ չի մղում որդուն,
Որ ազգի սիրուն նա թաւիէ արիւն.
Աւո՛ք այն Հայկն և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք։

ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Խնուսից գալով Հայ զինուորները քայ,
Արեան դաչտից եկած և պարտաճանաչ.
Հին վրէժներ առնել էր նոցա պահանջ,
Քայլի պէս վազեցին թշնամու առաջ։
Մօտ թուով տասն ու չորս, և իրանք անվախ,
Ղեկավար՝ Տիգրանն էր, գործում էր անկախ.
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք։
Թաթօն ընտրեց Մօսոյ, Շապուհ և Մխիկ,
Անուանեցան սրանք խմբեր թուցիկ.
Խարխուխ թաղի դիրքերումը միչտ անքուն,
Այրեցին, ջարդեցին անգութ Մօլի տուն։
Վրաստանի չքեղ Թիֆլիս քաղաքը,
Չէր ճանաչում կանխաւ իրա որդուցը,
Երբ նրանք Մուշնու թաղում կանգնեցան,
Այն ժամանակ Հայերն ուրախացան։
Թէպէտ քայլ Մուշեցին նրանք զոհ տուին,
Անգութ թշնամեացը չուտով յաղթեցին.
Կը լինի ազատութեան գրաւական,
Նրանք պատիւ բերին հայ Դաշնակցութեան։

ՅԱԽՈՒՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

24 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր,
Ի՞նչ կը յապաղէք եկնել ի հանդէս։
Ի՞նչ կը յապաղէք. — սիրտ կը դիմանա՞յ,
Սիրտ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ։
Տեսնել Հայրենեաց այսքան բիւր ազէտ,
Եւ դեռ անտարբեր ցարդ մնա՞լ յաւէտ։
Խեռ աւելութեան ու չար նախանձու
Սերմերն ու հոգին հեռո՛ւ մղենք, հեռո՛ւ.
Սիրտ սրտի կապուած, թեւ թեւի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած,
Օ՛ն, վազենք յառաջ ի սուրբ խաչն վառած,
Օ՛ն, երթա՛նք յառաջ, և անձնանուէր՝
Հայրենեաց օգին ըլլանք ուխտանուէր։
Հա՛յ, մի՛ վհատիր, սիրտ ա՛ռ և սիրտ տո՛ւր,
Տկարք զօրանան, քաջք խրախուսին.
Վաստերը բացուին, վաստերը զաւուին,
Ճշմարիտ Հայեր յառաջ թո՛ղ անցնին։
Ա՛խ, սէ՛րն են նշան ճշմարիտ Հայուն,
Ա՛խ, սէ՛րն են պարծանք ճշմարիտ Հայուն։

Սիրոյ զբօսիներ
Թող արդ պարզուին.
Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչուին։
Հայ մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ.
Սուտ են որ, ըսեն,
«Հայք զիրար կ՚ատեն»։

Սուրբ Աբրահամեան Մայր Աթոռոյն դիրքը,
Եկէ՛ք Հայկազունք, եկէ՛ք մխանանք,
Եւ սիրտ մտքերնիս վշտացած մօր սիրտը,
Օրհնելով Տէրը, որ մեզ պարգեւեց
Մեր Ազգին կապն ու հոգին,
Ազգային սահմանադրութիւն.
—Յաւերժացի արդիւնաւէտ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԵՐԳ ՔԱՋԱՐԻ ՀԱՅՈՒԿԻ

Կովկասի քաջե՛ր, խմբեր կազմեցէ՛ք,
Փաջ Անդրանիկին օգնութեան հասէ՛ք.
Առած իր չուրջը զինուորներ ութսուն,
Մաքրէ ճանապարհ նա դէպ ի Սասուն։
Քուրդը սարսափած, ձարը կտրած,
Հազար ոսկի է գլխին խոստացած։

Հայ պատանիներ, չուտով չարժուեցէ՛ք,
Երթանք մի՛ք վախնայ, սուրեր չարժեցէ՛ք,
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Կեռնալու ժամ չէ, չուտով քալեցէ՛ք։
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ունենանք, հայեր, սուրբ ազատութիւն։

Օտար հողի մէջ չը մնանք հայերս.
Հերի՛ք է հային այս պանդխտութիւնն։
Թող չը ծաղրե մեզ անգութ թշնամին,
Մինչեւ մենք հասնինք մեր նպատակին։
Սիրենք միութիւն . . . և այլն։

Փաջ Անդրանիկը անվախ, սուր առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած.
Այլ ու ձախ ջարդել տանիկաց զինուորին,

Քիւրդերից մատաղ բերել վանքերին։
Դէ՛հ, Շաքիր փաշայ, մտածիր հնար,
Հազար ոսկիքով անես դէսիպ ճար։

Կովկասի քաջե՛ր, առիւծի ճուտեր,
Սրէ՛ք ձեր սուսեր, առէ՛ք նիզակներ։
Հա՛յ օրիորդներ, պճնեալ տիկիններ,
Մախ՛էք ձեր զարդեր, առէ՛ք գնտակներ։
Հարուստ՛ք ձեր ոսկին տուէ՛ք մեր աղքին,
Ձեր անգին անունը յիշենք սերունդներ։

Դէ՛հ, Հայ ընկերներ, հեծէ՛ք ձեր ձիեր,
Բաց թողէ՛ք սանձեր, անցէ՛ք սար ու ձոր,
Ահա՛ կուռւ գաշտ, թշնամին անհաշտ,
Մեր սուր թող ուտէ օսմանեան վաչտեր։
Աստ քաջ Մուրադ, առած եմ խրատ,
Կամ կուռել ազատ, կամ մահ անարատ։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՌԸ

Հայ երիտասարդներ, չուտ չտապեցէ՛ք,
Րոպէն չատ թանգ է, առաջ քալեցէ՛ք.
Օտարք հայերին կ՛ասեն վախկոտ են,
Քաջութեան դրօշակը պարզեցէ՛ք։

Մինչ մենք վարդանի ցեղից չե՞նք.
Մէկս հազարի դէմ կը կուռենք.
Մի ժամանակ մենք չղթայած էինք,
Հիմա ազատ ենք և ուռնինք չատ դէնք։

Օգնութեան հասան քաջ Խան ու Մուրադ,
Ձիչտ հայու զաւակ ծնունդ անարատ.
Մոկացի Գրիգոր և երկու Աբչակ,
Գնտակ թափում են կարկուտից արագ։

Քաջ Թումանեանցը, որսորդ Գէորգը,
Կազմել պատրաստել են իրանց խմբերը,
Դաշնակցութեան դրօշակի ահից,
Սարսափահար փախչում էին Քրդերը։

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր սիրուն վայելչական տեղերն օտարներ են առեր.
Արի՛ք, եղբարք, իմիասին. դո՛ւ Դատաստան, ուր տե՞ղ ես.

Ո՛վ որ իւր ազգն ուրանայ,
Երկու աչքը կուրանայ.
Ցետնեալ աղքատի նման՝
Դառնէ ի դուռ մուրանայ։

Ճանապարհումդ նայելով՝ աչքերումըս լոյս չը մնաց.
Երկնային աստղերո՞ւ մէջ ես, դու Հայաստան, ո՞ւր տեղ ես.

Կչտին զոյչի գեղարդը,
Փորիցը թափի լեարդը,
Գետինն անցնի բիւր անգամ՝
Ազգն ուրացող վատ մարդը։

Քու փափաքով վառուում եմ ես, իմ սիրական, ո՞ւր տեղ ես.
Երկնային աստղերո՞ւ մէջ ես, դու Հայաստան, ո՞ւր տեղ ես։

Ո՛վ որ իւր ազգն ուրանայ,
Երկու աչքը կուրանայ.
Ցետնեալ աղքատի նըման՝
Դառնէ ի դուռ մուրանայ։

ՆՊԱՏԱԿԻՍ

ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ ԿԱՏԱՐՈՒԷՐ

Նպատակիս գէթ մի մասը կատարուէր,
Եարալի բըլբուլ եմ.

Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնեմ.
Եար արի, տուն արի, չուա արի բըլբուլ,
Սարերի գիւղն եմ։

Ա՜խ, իմ դարդս չատացել է, չեմ կարող,
Եարալի բըլբուլ եմ.
Դարդի ձեռքից ո՞ր ջուրնընկնեմ ազատուեմ.
Տուն արի, չուա արի, եարալի բըլբուլ եմ,
Սարերի գիւղն եմ։

Ա՜խ, անբախտ հայդուկիս, Տէր իմ, դու խղճայ,
Եարալի բըլբուլ եմ.
Մի՛ թողնիր գուրգի գնդակով դուբ գնամ կորչեմ.
Եար արի, տուն արի, չուա արի բըլբուլ եմ,
Սարերի գիւղն եմ։

ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞րն է աշխարհ Հայաստան, մի՛թէ սա՞ է Ռուսաստան
Որ իւր բռնաւթեամբ գերել է զաշխարհ.
Ազգին կեանք, կրօն յափխեան կորան։

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան. մի՛թէ սա՞ է Պարսկաստան
Որի պատկերն է Սոդոմ ու Գոմոր,
Ընտանի կեանքն է Բաբելեան խառն։

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան, մի՛թէ սա՞ է Տաճկաստան
Որ իւր փառքերէն ընաւին զրկուած,
կանանոցի մէջ կենդանի թաղուած։

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան, մի՛թէ սա՞ է Ֆրանկիստան
Որ իւր ճոխ զգեստով տիրել է աշխարհ.
Լուսաւորութեամբ առաջինն է այն։

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան, ահա՛ սա է Հայաստան,
Որ իւր քաջութեամբ, հաւատն ու կրօն
Պահպաներ է իսկ, մինչեւ ի յայս օր։
Հա՛, հա՛, հա՛, հա՛, ճիշդ է, մեր աշխարհն այս է։

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք-գետին տենչալառ.
Սուրը անուշդ պիտի յիշուի դարէ դար,
Հակայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ։

Փիւրդ ու Տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Զը ցամքէ մինչեւ յաւիտեան, Անդրանիկ։

Հայոց կուսանք, դաինեայ պսակ թո՛ղ հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն.
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
կեցցես յաւէտ դու անսասան, Անդրանիկ։

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թո՛ղ զայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.
Անյաղթ մնաս, դու քաջ կռուի սիրահար,
Հայրենիքի տէր, պաշտպան, Անդրանիկ։

ԵՐԳ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՑԻՍ 24

Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ՚ալ տանք.
Ո՛ր ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նա՛ր հոգի, նա՛ր կեանք անոր պարգեւեց:

Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած՝
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած:
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Ջնջեց ամենայն կարծիք անձնական.
Խեղդեց ամենայն ձայն անհատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային:

Ա՛յն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնաւ ձայնով մ՚այնպիսի.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայերս անարգուած փրկից բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շընորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:

Որուն չնորհիւն յարգ առացանք մենք.
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Դուռ ալ, Հայաստա՛ն, սիրուն հայրենի՛ք,
Ալ այսուհետև մի սգար լսիկ.
Չի ա՛լ քու որդիք նոր ոգով բերկրեալ,
Չքեզ հարս կ՚ուզեն տեսնել զարդարեալ:

Ալ մի՛ լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայե՛ր միանանք, մեր մօր հետ օրհնենք
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի բարունակ:

Թո՛ղ և մեր որդիք հետ անանց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Ց. Գ. ՍՐՎԱՃԵԱՆ

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա՛ բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւէտ միութեան,
Զի՛ վայելուչ որդիք Հայկեան,
Մէկտեղ հրճուին և ցնծան։

կեցցէ՛ սէր և միութիւն.
կրեմք մի սիրտ մի արիւն։

Վերցուր աչքըդ յերկինից կամար,
Փայլի հեռուն աստղ մի պայծառ,
Եւ դու, ո՛ Հայ, զարթի՛ր, սիրտ առ,
Հայոց բազդըն ա՛լ չէ խաւար։

կեցցէ՛ սէր և միութիւն
կրեմք մի սիրտ մի արիւն։

Բա՛ւ է այսչափ բաժանուած,
Հլլամք ուրախ և խնդուած,
Նախանձ, վրէժ ձեզ թողուած,
Անդունդք և վիհք անհատնուած։

կեցցէ՛ սէր և միութիւն.
կրեմք մի սիրտ մի արիւն։

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ՛ալ ընենք միութեան,
Լեցուի փառաբգ Հայաստան,
Տես որդիք քո միանան։

կեցցէ՛ սէր և միութիւն.
կրեմք մի սիրտ մի արիւն։

Ի՛նչ և ընեմք, ի՛նչ կերպ առնեմք,
Ո՞ չը պիտայ քէ մեք Հայ եմք,
Ո՛վ չը պիտեր քէ եղբայր եմք,
Արիք ծիծաղ դիմօք երգեմք։

կեցցէ՛ սէր և միութիւն.
կրեմք մի սիրտ մի արիւն։

Ո՞ր քոնաւոր, ո՞ր օրէնքներ,
Կը պատուիրեն քէ մի՛ սիրեք
Աղգիդ օգուտն ու բարիքներ.
Սիրոյ գանձն է յերկինս ի վեր։

կեցցէ՛ սէր և միութիւն.
կրեմք մի սիրտ մի արիւն։

Ս. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ Հայրենիք պիտ կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայելէ՞
Հեռանալ Հայաստանէն։

Մի՛թէ արծաթ ոսկի գանար,
Կը սիրէ՞ Հայաստանը.
Այն որ կ՛ողբայ որդւոց համար,
Ողճալի Հայաստանը։

Ինր սրբազան մէջ է թաղուիր
Թագուհի Հայաստանը.
Բոլիկ ոտքով, արձակ մազով
Կ՛արտասուէ Հայաստանը։

Անգութ երկինք ալ չը յիշեր,
Մուսեր է Հայաստանը.
Անախրտ հայերն ալ չեն սիրեր
Անուշիկ Հայաստանը:

Ո՛հ, թողէ՛ք զիս, խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անուշ երկիր՝ կոյս անարատ,
Անընման Հայաստանը:

Արև ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը.
Հայոց արևն ալ մարեր է,
Սև հագեր է Հայաստանը:

Թշնամւոյ սրտիս ձայն կը՝կարէ,
Ողբալով Հայաստանը.
Ո՛հ, չի կայ Հայ, որ լսելէ
Նուագեալ Հայաստանը:

Թէև կարի իմ վերջին չունչս,
Պիտի պոռամ Հայաստան.
Պըլլուիմ մէյ մ՝իմ Հայրենեացս,
Հապա մըռնեմ դերեզման:

Անգորրութիւն ես կը խնդրեմ,
Սիրելի Հայաստանին.
կըտրել այս ձայնս չէ՛, չէ՛ կարող
Սոսկումըն դերեզմանին:

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

ԳԱՐՈՒՆ

Ո՛հ, ի՛նչ անուշ և ի՛նչպէս գով,
Առաւօտուց փըչես հովիկ.
Ծաղկանց վըրայ զուարթաբով,
Եւ մազերուն կուգին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գընա՛, անցիր սըրտէս ի բաց:

Ո՛հ, ի՛նչ ազու և սըրտագին,
Ծառոց մէջէն երգես, թըռչնի՛կ.
Սիրոյ ժամերն ի յանտառին,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թըռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛ թռի՛ր, սըրտէս ի բաց:

Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես, վըտա՛կ,
Ականակիտ և հանգարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ,
Նային զիրենք վարդն ու աղջիկ:
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց,
Գնա՛, հոսի՛ սըրտէս ի բաց:

Թէպէտ թըռչնիկ և հովն Հայոց.
Աւերակաց թըռչին վերայ.
Թէպէտ պըղտոր վտակն Հայոց,
Նոճիներու մէջ կը սողայ.
Նոքա՝ հառաչք են Հայրենեաց,
Նոքա չերթան սըրտէս ի բաց:

Մ. ՊԱՇԻԿՊԱՇԼԵԱՆ

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպ ի ո՞ւր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։

Ա՛խ, թռիր, ծիծեռնակ,
Ծրնած տեղը Աչտարակ,
Անդ չինի՛ր քո բոյնը,
Հայրենի կըտուրի տակ։

Անդ, հեռու, ալեւոր
Հայր ունիմ սրտաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր,

Երբ տեսնես դու նորա,
Ինձնից չատ բարեւ ասա՛,
Ասա՛, թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վրայ։

Դու պատմէ, թէ ի՛նչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել է կէս։

Ինձ համար ցերեկը՝
Մութ է չրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս՝
Քունը մատ չի պարես։

Ասի՛ր, որ չի բացուած՝
Թառամեցայ մենացած,
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զըրկած։

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ,
Դէպ Հայոց երկիրը,
Ծրնած տեղս — Աչտարակ։

Գ. Ա. ԴՈՂՈՆԵԱՆՑ

ԱՒԵՏԱՒԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՌ ՀԱՅՏՂԱՆ

Ահա, ազատին
Նոյեան տապանին։

Թռած մասեաց մառախլապատ երկինքէն,
Հրաւէր կարդայ ազատութեան Հայրենեաց.
Ազգին անգին թախտաւական Հայկազն,
Զայն աւետեաց Հայաստանի բերանէն.
Ողջոյն կուտայ Հայոց, ողջո՛յն նոր փառաց,
Հերիք կ՚ըսէ այսչափ հարիւր տարուան քուն։

Օ՛ն ա՛յք,
Մեր Հայրենեաց հրաւիրակին.
Ակա՛նջ,
Չի պատգամ է այս երկնայինն։

Արթնութի՛ւն արդ, պանդուխտ Հայեր,
Հասաւ, կ՚անցնի Հայոց օրեր.

Առե՛ք ողջոյնս ազատութեան, գմբեթաձ
Ողջո՛յն սիրոյ եղբայրութեան։
Վե՛րջ վիճակի գերութեան ձեր,
Ցերկնից Հայոց այս է պատուէր.

Դարերէ ի վեր արիւն արցունքով,
Թռաւ Հայրենեաց քաղցր աւերակներ.
Թռչող հրեշտակն ալ անա ինձ ընկեր,
Վկա՛յ է խօսքիս խնդամբ երեսով։

(Հրեշտակը)

Այո՛ այո՛ Հայ ազաք,
Վկայ ես ձեր հրեշտակ.

Հայաստանի նոր զարնան,
Ծաղկունքն անա՛ ձեզ կուտամ։
Օն արդ քաջք և եղբարք սրտիկ պիւցաղանց,
Ձերթ թռչնիկ զարնան զեղ զայլայիկով,
Սփռանք փոյթ գիրկ հայրենի փառաց։

Հոս թողունք, հոս,
Վաստիար սրտեր.
Հետ առնունք սէր,
Հոս թողունք հոս
Աստուածին,
Ոտիկն Հայուն.
Հոս թողունք, հոս։

Ազգերնիս մէկ, հայրերնիս մէկ, փառքերնիս մէկ,
Հայրենիք մէկ, լեզուներնիս մէկ, հաւատքնիս մէկ,
Ինչո՞ւ չըլլայ սրտերնիս մէկ։
Եւ արդ հոս ի սեւ կըբից զինաթափ,
Սմենքս ալ ենք Հայ հաւատար եղբայր.
Մեր զէնքը խաչն ի կուրծս վառ ի վառ,
Օ՛ն զհետ հրեշտակիս ծափ ի ծափ։

Ձարնենք տաւիղ, ոսկեքնար,
Սրբե՛նք դառն ցաւի աչեր.
Աչխոյժ ի սիրտ ձայն վար ա՛ւիւր,
Ապրի Հայոցս Աւետարեր.
Ուրախութեան այս Հայոց գար։
Օ՛ն պար խաղ,
Մէն մ՛ի ձախ.
Մէն մ՛ի յաջ,
Եա յառաջ։
Ուրախութեան այս Հայոց գար։

ՆԵՐՍԷՍ ՄԵՋՊՈՒՐԵԱՆ

ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՑ

Ձայն մը հնչեց Էրզրումի Հայոց վեհներէն,
Թունդ թունդ կլան Հայոց սրտեր զէնքի չափնէն։

Հայ գիւղային գարուց ի վեր զէնք, սուր չէր տեսած,
Դաչտը թողուց, սուր, հրացան բահի տեղ առած։

Հայ ծերուկը ցուպն ի ձեռին լալով խնդրեամ է,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։

Հայ տիկինք սոխպամ է ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ՝ առնուլ։

Քնքուշ կոյսը ծանր է թուում Հայ օրիորդին,
Ձէն ի ձեռին սիրտ է տալիս Հայոց քաջերին։

Երիտասարդք թոխով լծուած դաշակ ցրուել են,
Աբարատայ դաշտին վրայ զինուոր խմբուել են։

Ա՛լ բաւ լացէք, Մայր Հայաստան, երկիրդ փառաց,
Քու զինուորներդ միշտ կարիճ են, ո՛րչափ ալ քաղցած։

Ա՛ռ ու գդուխ այդ քաջերը քու սրտիդ վրայ,
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վրայ։

Անմխիթարին, տունը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ, տեղի տուաւ միաբանն ձայնին։

Լսեց Փիւրան ու սառեցաւ արիւնը խեղճին,
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին։

Ցընծա՛, մայր մեր, ո՛վ Հայաստան, որդիդ միացան,
Ու՛ր սրուան սուգ ու թախիծ մնդնից վերացան։

Ուրախացաւ Մայր Հայաստան, եղաւ կանդնեցաւ,
Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ։

Ա. Ո Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ա՛ռ ընկալ ի գիրկդ, մայրըդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուեալ աստ և անդ.
Տես՝ ի՛նչպէս սիրով և քու կարօտով,
Վառուած բորբոքած՝ քու տեսլդ ցանկան։

Ծորդորակ

Սրի՛, կա՛ց ուրնին, ո՛վ մայր Հայաստան,
Նոր ոյժ գգեցիր փառօք անվախճան։

Օ՜ն, զրահաւորիմք, ո՛վ որդիք Հայկեան,
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան.
Զօրանանք սիրով և սէրը միաբեւեռ,
Ըլլալ ահռելեան ընդդէմ թշնամեաց։

Ծորդորակ

Հապա գործելու ժամանակն հասաւ,
Հայրենասիրին կայ փառք անպրաւ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՈՂԲԱԼԻ ԲԱՆՔ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ

ԱՌ ՀԱՑԱՋԳԻ ՈՄՆ ՈՐ ԳՆԱՑԵԼ ԷՐ ՆՄԱ Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անի քաղաք նաեր՝ կուլայ,
Չկայ ըսող՝ մի՛ լայ, մի՛ լայ.
Կ՛ըսեն քիչ է, թո՛ղ ինայ լայ,
Ա՛խ, ե՞րբ լսեմ՝ մի՛ լայ, մի՛ լայ։

Շատ ցաւերով կ՛այրիմ տապիմ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս դայ մօտենայ,
Հէչ չէ ըսէ՝ մի՛ լայ, մի՛ լայ։

Ծորդորակ

Ա՛խ, Հայ ազայ, խղճա՛ ինծի,
Տես թէ քու Անին ի՞նչպէս է.
Հերիւք ես լա՛ւ, դու չգիտաս,
Չէ՞ քու Անին ափսոս է։

Ա՛խ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ.
Որք ինային ինձ վիճակեցաւ,
Բախտս բնաւ դիս մոռացաւ։

Կորուցեր եմ թագաւորներ,
Ժողվեր եմ գլխիս քոս բուվեր,
Որք միշտ կ՛երգեն «Անին անցաւ,
Անին անուէր աւերեցաւ»։

Անին եմ չատ մարդարնակ,
Մնացեր եմ գառն աւերակ.

Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ,
Անառէր որբերու նմանակ։

Երբեմն էի չատ անուանի,
Հայոց քաղաքն արեւելեան.
Աչերէս եմ սեւթահատակ,
Նառեր կուլամ, ես մխիթնակ։

Եկար՝ տեսար, զարձեր՝ կ'երթաս,
Լալով կ'ըսես «քարեաւ մնաս».
Առուած սիրես չմոռնաս,
Մասիս սարին երբ մօտենաս,

Ըսես իմ քա՛յլ Աբարատին,
«Նաւեր կուլայ ֆո խեղճ Անին».
Կ'ըսէ, ե՞րբ աւետիք կը տաս,
Թէ «իմ Անի, ձերիմ է չաս»։

ՀԱՅԱՍԷՐ ՈՄՆ

ԵՐԳ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԻ

Հիմի՛ էլ լանք, եղբարք, հիմի՛ էլ,
Երբ մեր թշնամին իւր սուրն է զըրել։
Իր օրհասական սուրը, մեր կրծին,
Ականջ չի դնեմ մեր լայ ու կոծին.
Աւացէ՛ք, եղբա՛րք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի՛ էլ լանք։

Հիմի՛ էլ լանք, երբ մեր թշնամին,
Դաւով, հրապուրքով սիրեց մեր երկիրն.
Ջընջեց աչխարհքից Հայկայ անունը,

Հիմքից կործանեց Թորգոմայ տունը.
Խըլեց մեզանից Թագ, պահ և ազատ կրօն,
Հիմի՛ էլ լանք։

Հիմի՛ էլ լանք, երբ մեր թշնամին,
Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին.
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այլ սուր ու խոփից մեր չքնաղ կրեց.
Վա՛յ մեզ, չքնաղով կապած գերի ենք,
Հիմի՛ էլ լանք.

Հիմի՛ էլ լանք, երբ մեր թշնամին,
Սոսկալի գէնքը բըռնած մեր գլխին.
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Սպէտակ բոզոք վարսից ափերատ,
Մեր գլուխ լուալու ելերատ ո՞ւր փնտռենք,
Հիմի՛ էլ լանք։

Հիմի՛ էլ լանք, երբ մեր թշնամին,
Լիբը գառազուխամբ լըցած էր հոգին.
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտասրամ է մեզ մեր բընիկ երկրից.
Պանդո՛ւխտ, հալածեալ, եղբա՛րք ո՞ւր գնանք,
Հիմի՛ էլ լանք։

Հիմի՛ էլ լանք, երբ մեր թշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին.
Իւր լիրք, նըզոված ձեռքը կարկաւեց,
Արդարութեան վերջին կոպը պատառեց.
Հայն կորուսաը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի՛ էլ լանք։

Հիմի՛ էլ լանք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր վատն ազգային.

Մեր եկեղեցւոյն ձեռնամերձ եղայ, դաշ
Գայլազգեաց գաւրն մեզ գերութիւն գերառ։
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի՞ եւ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, մարդիկ ի՞նչ կ՚ասեն,
Երբ մեր տեղ բարինք, ապառաժք խօսեն։
Չե՞ն ասիր որ Հայք արժանի էին,
Այդ ազգրկական անարգ վիճակին,
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը պիտենք։
Մինչեւ ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անգամալոյծը,
կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը։
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ երթանք թըշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,
Ու այնպէս լռենք։

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԱՌ ՀՆԱՉԱԿ

Հեռաւոր երկիր նըստած դու նժդեհ
Հայրենեաց բաղդին մօտաւոր ես տեղեակ
Քարոզ քաջարի նոր սկզբանց վէհ
Ցեզամխոխքեան ձայնատու Հնչակ։

Նոր գաղաթարի քո ցանած սերման
Աշխոյժ պատուղներն հասունցնան արագ
կարին եւ Պոլիս որոտման նման
Անդրանիկ չարժմանդ ծնան քու, Հնչակ։

Զար բռնաքիւնը՝ Հայոց կեղեքիչ
Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ
Ինչ Եւրոպայի թնդաց մէն գաւիճ,
Հայը յիշուեցաւ, կարմրեցաւ Հնչակ։

Այսօր քո սերմանց նոր պտուղք անա
Հասած կարմըրին արեան նմանակ
կենաց եւ մահու սուրբ ժամ մերձենայ
կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչակ։

կոչնակդ հնչեցո՛ւր, հնչեցո՛ւր արագ
Թո՛ղ Հայք ամբ եղնեն ծագէ մինչեւ ծագ
Փըշրի ծանր չղթայն, ծագէ նոր արշալ
«Ազա՛տ ենք» հնչէ, ոսկեզօծ Հնչակ։

ՊԵՐՃ ՄՈՒՇԵԼՈՒ

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին գոներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.
Զքնաղ երկինս մեր Աբեղեանոյ.
Երբ փայլէ իւր գաղտրիկ օդեր։
Երբոր ծիծառն ի բոյն գառնայ,
Երբոր ծառերն հագնին տերև.
Ցանկամ տեսանել զիմ կիլիկիա,
Աչխարհ որ ինձ հասուր արև։

Տեսի գաշտերն Սիւրիոյ,
Լիառն Լիբանան եւ իւր մայրեր։
Տեսի զերկիրն Իսպահոյ,
Վենետիկ եւ իւր կռնատներ։

Կզգի նման չիք մեր կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարև.
Յանկամ տեսնել զիմ կիւրեղեայ,
Աչխարհ որ ինձ նուռբ արև։

Հասակ մը կայ մեր կեհապ մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հէգին ի տենչ
Ցիշատակաց իւր կարօտի.
Ցորժամ քնարս իմ ցըրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւս.
Երթամ նընջել ցիմ կիւրեղեայ,
Աչխարհ որ ինձ նուռբ արև։

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԵՆ ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՄԱՆԸ

Հիմի՞ էլ խօսինք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ ընտանեկան երկպառակութեամբ,
Ուրիչ բան չունինք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ազգութացութեամբ.
Մեր նախնեաց ոխերս ատրով կոխել ենք,
Հիմի՞ էլ խօսինք։

Հիմի՞ էլ խօսինք, երբ քաջն Վարդան,
Վահունի հազարին, հազարով մնաց։
Մինչ մնացել էր Պարսից լոկ Մահեան,
Գունդը, մեր վահուն հազարի դիմաց.
Երբ մեր վահութեամբ՝ ո՛ղջ կորաւել ենք,
Հիմի՞ էլ խօսինք։

ՏԱԼԻՈՐԻԿ

Տալորիկի զաւակ եմ ղորդ,
Քաղքըցու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ։

Տալորիկի զաւակ եմ քաջ,
Ձեմ խոնարհիր Թրքի առաջ.
Քարուտ լերանց եմ ազատ լաճ,
Ձեմ տեսել ո՛չ արօր, ո՛չ մաճ։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք,
Տալորիկի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրոյն համար
Եկէ՛ք դէպ ինձ յառա՛չ յառա՛չ։

Երբ իմ աչքերս բացի յաչխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչ չիակեմ աչքս ի խաւար,
Պիտ՝ չկոխեն հոս ոտք օտար։

Իմ մամ ծնաւ դիս սարերու ծոց,
Ընկոյզի կոճղ մ'ինձ օրօրոց.
Տըկլոզ ծընայ, մեծցայ տըկլոզ,
Կեանքիս բաժինն է կոխ ու բոց։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևայլն։

Ոտքըս բոպիկ, կուրծքըս միշտ բաց,
Ինչ վոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց.

Ինձ մօտ մէկ արեւ, փուք, ցուրտ,
Բաւ է՝ չիչխէ Պարսիկ կամ Ռուբդ։

Իմ կեանքըս խիստ է և չարքաշ,
Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ,
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշարժ։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն.։

Հարստութիւն, ուսում, հանճար,
Փառք ու պատիւ չկն ինձ համար,
Բաւ է ունիմ տէգ, թուր, խանչար,
Բնաւ չի խրտխտար վրաս օտար։

Սիրած ղէնքերս չեմ ձգեր ձեռքէս,
Ազատն անվախ չէ ինծի պէս,
կը սիրեմ արա, կռիւ, աւար,
կը սպասեմ երբ ինկնի հաւար։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն.։

Թո՛ղ Հայք բնակին հովիտ ու դաշտ,
Վատ աղգին հետ չը լինին հաշտ,
Ես պիտի ձիամ միշտ աննուաճ,
Թէև վրաս գայ քսան վայտ։

Ծորենի տեղ կ'ուտեմ կորեկ,
Երկաթ ձեռեմ գիշեր ցորեկ,
Շինեմ փետաս, խոփ, խաչերկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն.։

Այծեամի պէս կը ցատկռտեմ,
Ագռաւի պէս կը մռնչեմ,
Ծովի նման կը փրփրիմ,
Կայծակի պէս կը հարուածեմ։

Կուզ գաշտը բաղդն է կեանքին,
Երբ կը ծագի արշալոյսը
Կամ աւետիս տայ գրաչակին,
Կամ պազ տեսնէ քու երեսը։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն.։

Հաւար ինկնի, երթամ յառաջ,
Սատնոյ լերինք հանեն հա՛ռաչ.
Հառաչ հանեն և ներկուին
Իւր կարճի արիւնով քաջ։

Կարճին սիրտ, կարճին ձեռք,
Ի՞նչ փոյթ քաջին հազար մէկ վէրք.
Մէկ հարուածին կուտաս հարիւր,
Ագռաւին լէչ կ'անես հազէր։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն.։

ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բարով եկար դու սիրուն կռունկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս,
Ասա՛ր ինձ հետ ազատօրէն,
կեանքս կը նուիրեմ ես քեզ։

Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարուած գոյնը,
Նորա սիրուն տանջուած եմ,
Աչքերիցս կտրաւ քունը։

Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը,
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի, կորիւնի նետերը։

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
վարդ, մեխակ, չուշաններ չատ կան.
Եդեմական դրախտավայր,
Նա կոչուած է Հայաստան։

Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Մինչ ապ ի՞նչ կը սպասես ի զուր.
Արի առնեմ իմ թևերուն,
Գնանք այնտեղ ուրախացուր։

ՀԱՅՈՒՆ ԵՐԳԸ

Նուիրուած Հ. Ը. Դաշնակցականներուն

Ազատութի՛ւն, եկո՛ւր հոս.
— Մեր փրկութեան հրեշտակ.
Հին ոչխմէն բարբարոս
Ալ մի՛ թողուր յիշատակ։
Սփոփանքի չունքըդ բեր,
Քեզ կը սպասենք անհամբեր.
Բընակութեանդ ենք տեղեակ,
Հոգինեերնիս քեզ ըզգեակ։

Ազատութիւն, քեզ տեսանք.
Հայոց Ազգն ա՛լ ապահով
Քեզ կը կարդայ գովասանք
Հայրենասէրնէ բառերով։
Կեանք, ինչք, պատիւ, արդար աւերք
Քեզ կը պարտին Հայ և Թուրք։
Բընակութեանդ ենք տեղեակ,
Մեր Թուրքիան քեզ ըզգեակ։

Ազատութի՛ւն, քեզմով մենք
Պիտի ապրինք երջանիկ.
Ալ ուխտած ենք սէր մ՚աննենգ
Բոլոր Հայ, Թուրք պատանիք։
Աստղութեան չունինք թոյն,
Մեր դաչինքն է միութիւն։
Բընակութեանդ ենք տեղեակ,
Խըզմըտանքնի՛ս քեզ ըզգեակ։

ԹԷՈԴԻԿ

ՍԱՍՈՒ

Ահա՛ կ՚երթամ, սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու,
Քաջընկերօքս ես միասին,
Անգութ թուրքին չարդելու։
Մի լար, մայր իմ, մ՚ողբար, մայր իմ,
Վերապարձիս ըսպասէ,
Ազգիս Հայոց ազատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ։

Ահա՛ կ՚երթամ, սիրելի քոյր,
Նպատակըս է բարի,

Ձենք դիմանար, մենք գերի ենք,
Իբր վեց հարիւր տարի.
Մի՛ լար, քոյր իմ, մ՚ողբար, քոյր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս Հայոց աղատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ։

Ահա՛ կ՚երթամ, սիրելի հայր,
Մնաս բարեաւ դու հիմայ,
Այսքան ճընշման տակ ինկած է,
Հայը ինչպէ՞ս դիմանայ։
Մի՛ լար, հայր իմ, մ՚ողբար, հայր իմ,
Վերադարձիս ըսպասէ, եւն։

Ահա՛ կ՚երթամ, սիրելի կին,
Քու արտասուք չը հոսէ,
Պատերազմի դաշտին վրայ
Իմ ընկերը կը սպասէ.
Մի՛ լար, կին դու, մ՚ողբար, կին դու,
Վերադարձիս ըսպասէ, եւն։

Ո՛վ բարեկամք և ազգականք,
Թողէք մեզի որ երթանք,
Պատերազմի դաշտին վրայ,
Վէրքեր տանք ու առնանք.
Մի՛ լար, եղբայր, եւն։

Թէ յաղթողիմ ողջ կը դառնամ,
Այս ամէնը կը մոռնաս,
Թէ պակուիմ ես սուրբ մահով,
Օր մը անշուշտ դու կուգաս.
Մի՛ լար, մայր իմ, եւն։

Գերեզմանիս քարին վրայ
Թափէ, արցունք, ո՛վ մայրիկ,
Թափէ, արցունք, ցանէ, ծաղիկ,
Երիտասարդ եմ, մայրիկ։
Մի՛ լար, մայր իմ, եւն։

Սերտաստիա երբ կ՚երթայի,
Երկու օրէն դառնայի,
Երկու օրս ալ կ՚ըլլար տարի,
Ես քեզ չատ կարօտնայի։
Մի՛ լար, մայր իմ, եւն։

Կ՚ելլէի լեռանը վրայ,
Քար մը զարնէի գլխուս,
Իմ գլխուս եկած ձիւները
Մասեաց զագաթն ալ չըկայ.
Մի, լար, մայր իմ, եւն։

Պարէգիս մէջ երկու ծառ կայ,
Տեսնողին զարմանք կուտայ,
Հայ քաջերու արիւնովը
Կարծես ներկած ճիւղեր կայ։

Արդեօք այս մեր քաջածները
Պիտ՚ վերջացնես, ո՛վ Աստուած,
Գուցէ ողջ ողջ պիտի տեսնենք
Հայ դրօշակը պարզուած։

ԱԱՐԾ

Մնասցես բարեաւ, սէր իմ սէր,
Հրաւէր մարտին որոտաց.
Թէ չեմ քաջայց ես ընկեր,
Զը կայ քաժին ինձ փառաց:

Մի՛ լար հոգւոյս իմ հատոր,
Գուցէ գառնամ, ո՛հ, մի՛ լար.
Թ'անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մեք պիրեար:

Եղբայրատաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հոգոյ Հայկազանց,
Բառնամ ըզլուծ օտարի:

Ի ԲԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՑ

Բազասն ի վեր ի Մասիս,
Արիք, որդիք Հայկեան,
Ցրուեալք ի մի խումբ պարուր,
Բառից հոգմոց փող ազգուր
Բաստուածախրախոյս ձայն:

Նախնի կամար բազմերփեան,
Ահա պատի գնովաւ.
Բամպրոպայոյզ մըրըրկաց,
Հաչտարան պատերազմաց,
Տարփային ցոլացաւ:

Զայն որոտաց, ձայն առնղ,
Ներառնաձեւ յարկէն.

Արիագունդ տուն Հայկայ
Զատպալեալ գահիդ արքայ,
Վերականգնեմ անդրէն:

Երդուեալ յաղեղն երկնածիր,
Բարձի զբազդ ձեր ի միտս.
Թաթ ձեր յեթեր արլացաւ,
Հակառակորդըն սուզաւ,
Վայր սանդարամետս:

Դիւցազանց պար Թորգոմեան,
Տըխրագգեաց յեղխեանս,
Ըզլըրթագոյն զիմաց մէզ,
Աստեղաց բոց վառեն չէկ,
Բաւեսեաց հրաւիրանս:

Արդ, իմ արի սպառազէնք,
Տուք կայթս հակայաքայլ,
Դաշտք ի պըղինձ բոցացին,
Լերինք ի նշոյլ վառցին,
Զօկատիգք ի գետալ:

Սրա ձեզ Հայկ երկնաձեմ,
Հայր ձերոյմ բանակի,
Ասպարտիակ հովանեաւ,
Զձեօք ի բարձանց փարեցաւ,
Անթափանց նիզակի:

Շուրջ պար առեալ զարքայիս,
Զօրավարք Արամայ,
Բոլորեցէք համբերամ,
Պատկ փառաց անթառամ,
Կեցցէ՛ Տրդատ մեր արքայ:

Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՀՆԶԱԿԵԱՆ ՄԱՌԸ

Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ,
Օգնութեան հասէք Հայկայ զաւակներ,
Վրտանգը մեծ է, չըկայ մի օգնող,
Այրող տանջուղին մի ձեռք կարկառող։

Նա դաւաճան է իր հայրենիքին՝
Որ օգնել չուզեր ճիշդ ժամանակին.
Հարաւ և հիւսիս չատ թափառեցինք,
Պապական տանն էլ հետքը կորուցինք։

Զար թշնամիքը միշտ անաբեկիչ՝
Թոյն են սերմանել մեր մէջ վարակիչ.
Բա՛ւ է, բա՛ւ, Հայեր, օտարք մեզ խաբեն,
Եւ մեր արիւնով իրանք աշխատեն։

Ասպարէզը բաց է մեզ անա՛,
Զարդում փչրում են մեզի անխնայ,
Բաւ է մեզ, ընկերք, լայ ու կոծ անել,
Անարատ Հային երբեք չի վայլեր։

կարիճ Հնչակեան, դուրս եկ համարձակ,
Պարզիր քո մաքուր անբիծ դրօշակ,
Վտան քայլերով սլացիր յառաջ,
Եղիր քաջ զինուր և պարտաճանաչ։

Ի ձիշատակ Հնչկ. կուսակց. խանգաւեկին Վառնայի Մասնաճիւղի «ԳԻՏԱԿԻՑ» խումբին։

ՎՐԷԺՔ

Բա՛մբ. որոտան բարձրաստ բոմբիւնք յԱյրարատեան
դաշտն ի վայր,
Աբի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրազայր,
Հրաւէր հայրենեաց հրաչակի ընդ հանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորին պաակին էք կարօտ,
Որք երկրաւորին փառաց երկնայորդ.
Հասո՛ւն, արի արանց մանկունք,
Հայրենասիրէք Հայկազունք։
Հասո՛ւն, ի զէն գունդազունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ.
Ի ղէ՞ն ի վրէ՞ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի ղէ՞ն ի վրէ՞ժ, մի՛ ձախ, մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Յառաջ յառաջ,
Հասո՛ւն յառաջ։

Հայկեան վանդռանց որոտընդոստ գունչին բարբառք
մարտագոռ,
Դառնագոռոչ անդրադարձեալ Պարսիկ կերկերն ի չէիսր.
Շարժեն հրեչտակք թեւըս լուսափողփողս,
Ճիւաղք ճռճաղաց կայտառեն ի գըժոխս.
Շուներըն չանթառաք զեթերօք փարի,
Սարսափին սանդարք ի խոլ խաւարի։
Հասո՛ւն, արի արանց մանկունք, եւն։

Մամիկոնեան սատառնեցաւ գրօշն յայերս գոգ ծալ ի
ծալ,

Ի ճակատուց ի Քընձամեաց սա ո՛չ դիտաց յուրաստ
կալ,
Հեծեալ հրանժոյգ վեհին վահանայ՝
Վրէ՞ժ կանչէ արեան կարմիր վարդանայ.
Փոքընչեալ բոցաշունչ դաիր ի գարչապար.
Ռազմամուտ վարդի յանժոյժ երիվար։
Հապ՝օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Ի գուալարել մարտայարդար գարշապարաց Արամայ,
Գոռան կորդրիք, Մասիք սարսին, հնընչեն սահանք
Երասխայ.
Ի պրոյ ի պրոյ տալ բիւրուանց ոտնատրոփ։
Տատանին դաշնակք՝ յոտնէ չինդն ապչոպ,
Կռուի առ կռուի կռիւն կըմբայք տէգ առ տէգ,
Դիզորդ առնուն տարերք՝ կորովեացն ի վէգ։
Հապ՝օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Արի՛ք ի կռիւ, քաջակորովիք, ընդ կորակոր հրոան
Արեաց.
Հա՛պա համարձիք մեր բիւրայաղթիք ձեզ նոր հանդէսք
են փառաց.
Թռի՛ք ի ռազմ ի խաղմ, առէ՛ք զէն և զարդ,
Երեսնիւք չըսնիւք հարուլ բիւրս հազարս.
Ի սուր ի սուրեր, կարչնեզ յաղեղունս՝
Ըզսեաւ Սասանեանց չարդել կառափունս.
Հապ՝օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Մինչև ցե՞րբ ցե՞րբ սուգ ունի զՀայս, հառէ՛ք զար-
տօսր, որբք, այրիք,
Հարանց՝ հարսանց՝ եղբարց՝ որդւոց, հանուրց Հայոց
վրէժխընդիրք,
Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց,

Ծուխիկ հընչեն ձայնք արեան սիրելեաց.
Մօսաիիւնք յերկնից՝ արեաւիրք յերկրէ
Քաջացս օժանդակ՝ ըզՊարս հերքեսցէ։
Հապ՝օ՛ն. արի արանց մանկունք, եւն։

Օ՛ն անդր ի բա՛ց հայկեան հողոյ հրեակայազանց և
սրբոց,
Ի բա՛ց ջոլիր չուառական մոխրապաշտիցըն պղծոց.
Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ,
Աբիւնք վրէժայից զճապաղիան անժամ.
Ոան ընդ դիս տոտնեալ գարձցին ի փախուստն,
Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին հեռուստ։
Հապ՝օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Արք աղեղանց, բարձր ի թիրախ թոզաչի՛ք՝
վերչին ձեր խրախոյս,
Առեալ տարցուք զանթիւնապարձ զայս վարդապետն
դրօշ անխոյս.
Ի վերայ յիսնից յաղթից վարդանայ,
Պարսկական բազուկս արուսն վահանայ,
Շեչտ ի ծայր չիրմի դաշտին Շաւարշան
Տընկել յաղթանակ անմահ Հայութեան։

Հապ՝օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Հ. Ղ. Վ. Սիւնի

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պըղտի՛ ալըգայ, չեմ օրօրեր օրօրանքըդ, որ քունն լաս,
Հայ աղբարքըդ ոտքի ելան, մենակ դո՞ւ ետ պիտ՝ մընաս.
Զարթի՛ր, հոգիս, անուշ քունէդ, թող աչքերդ լուս տեսնին,
Արեւմուտքէն արեւ ծագեց, բաղդը բանեց Հայ ազգին:
Զար բռնութեան ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգայ ազատութիւն ծագեցաւ.
Ով որ չուզավ ոտքի ելլէ, ազատութիւն կը գանէ,
Սիրտն որպի՞ս մինակ մինակ չար լուծի տակ պիտ՝ մընէ:
Մենք սուլթանէն չատ խնդրեցինք կոզկոզապին ու,
լացինք,
Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտքը լուացինք,
Բայց նա չանուաց պաղատանքին ողորմիլ հայերուն.
Այժմ, նայինք, նա կը լա՞յ չառաչիւնը սուրերուն:
Տուր, սիրական, քակեմ ձեռքիդ պաղուընները, արձակեմ,
Ու այդ թուխիկ աչքիդ մէջը մի պղպատէ սուր դընեմ.
Ըսարուկ ըլնա՝ արեան գաչտը, վերադարձի՛ր ազատուած.
Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած:

ԴԱՄԱՌ-ՓԱՓԻՊԱ

ՀԱՌԱՋԱՆՔ

Նպատակիս հասնիմ միայն,
Թո՛ղ դիս հանեն կախաղան,
Կախաղանէն խնդուկ ձայնով,
Պիտի գոչեմ, ա՛խ, Հայաստան:

Ա՛խ, Հայաստա՛ն, սիրտս ու հոգիս,
Քեզ նուիրեմ, ընդունի՛,
Թէ կարելի, թո՛ղ ես մեռնիմ,
Վերակոչնդնի, ա՛խ, Հայաստան:

Անոր սիրոյն բանտն ալ դըրաւիմ,
Պալատ է այն ինձ համար,
Ոտքերս, ձեռքերս չըրխան զարնեն,
Երջանկութիւն է ինձ ան ալ:

Թէ մինչեւ իսկ ածսորուիմ ալ,
Թափառական կ՚ընէ դիս բախտ,
Հայաստանի սիրոյն համար,
Փըչոտ վայրեր կ՚ըլլան դըրախտ:

Ա՛խ, Հայաստան, դու սիրուն մայր,
Մինչ ե՛րբ այսպէս քու որդիք,
Քեզնէ հեռո՛ւ պիտ հառաչեն,
Իսկ դո՛ւք, մինչեւ ե՞րբ թափառիք:

Ե՞րբ պիտի գայ իմ թագաւոր,
Որ ես հասնիմ իմ ուխտին.
Դըրօշակներ ծածան ծածան,
Ականատուր թագի պըլխին:

Ա՛խ, Հայաստա՛ն, աչքըդ գարձուր
Քեզ փընտրող որբերուն,
Պէս պէս ցաւօք կը տանջուին,
Դարման եղիր հայ քաջերուն։

Վախնամ մեռնիմ ես այս ցաւով,
Ու իմնեմ սև գերեզման,
Գերեզմանէն մեռած ձայնով
Պիտի գոռամ, վա՛խ, ՀԱՅԱՍՏԱՆ։

Ա՛Ր ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հնչուն բարբառ մայրական,
Փափկահնչիւն բառերուդ,
Նման արդեօք այլ տեղ կա՞ն։
Դու նախ ինձ հընչեցիր,
Նախ սիրոյ, ո՛հ, հնչուն խօսքեր.
Այն նախ ըղձեզ թոթովելս,
Դեռ իմ մըտքին չէ ելեր։

Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ.
Կեա՛ց միշտ լեզուդ Հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից ծաղկաւէտ։

Ի՛նչ գառըն վիշտ է սըրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու.
Բըռնի իրեն զիս քաշէ,
Սըրտէս արիւն կը հեղու։
Ո՛հ, զայն օտարն ես սիրել,

Բնաւ չեմ կարող ի սըրտէ.
Զէ, այն չէ քաղցր իմ լեզու,
Որ սիրով զիս կ'ողջունէ։

Իմ մայրենի քաղցր լեզու, ևն.։

Լեզու համակ սիրաչարժ,
Քանի ճոխ պերճ ու պայծառ.
Մինչ կը հընչես դուն քեզի,
Սըրտերն ամէն գողացար.
Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,
Վեհ գիւցազանց պերճ երգ դու.
Թոթովէ փոչիզ խոր մութիէն,
Ե՛լ երեւան, պերճ երգ դու։

Իմ մայրենի քաղցր լեզու, ևն.։

Յաւերժական սուրբ գրոց մէջ,
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն.
Կչտեալ անոյշ քու տողերդ,
Թող ամէն սիրտ արծարծեն.
Շընորհ ուզել Աբարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել.
Շրթունքս սրբէ բորբոքած,
Կ'աղաղակէ անարժել։

Իմ մայրենի քաղցր լեզու, ևայլն։

ՍԱՍՈՒՆ

Սասուն գաւառ, հին Հայաստան
Համբաւդ լսեց աշխարհ համայն,
Երիտասարդք են քաջազուն,
Հայոց պարծանք միայն Սասուն։

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի ընդ միշտ իւր քաջերով,
Որք Թ'և ուտեն կըւկըլ, կորեկ,
Խաղան ընդ սուր գիչեր ցորեկ:

Սասուն գաւառ, անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դիմապրեցին միշտ Թուրդ զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն:

Սասուն երկիր լեռներու մէջ,
Ա'լ որքացաւ իւր եղեէջ
Ջարոտ, լեռնոտ ու խորդուբորտ,
Սասուն բուրէ այժմ արեան հոտ:

Սասուն երկիր յոյժ բարելի,
Լեռներ, դաշտեր ծաղիօք են լի,
Թէև Թահսին քանդեց Սասուն,
Բիւր Հայք բազձան սեւ հողերուն:

Յուրտ դիակաց բարդեալ դէզ դէզ,
Եւրոպացիք եկան ի տես,
Մարտիրոսաց կարգն է Սասուն,
Արժանացաւ սըրբոց դասուն:

Աբի Գըրգօն, սուրբ մարտիրոս,
Ի ձեռն Քրդաց ինկաւ իբր որս,
Գերի եղաւ անգութ տաճկին,
Քաջ նահատակն Հայոց ազգին:

Քաջ Գըրգօին հարան էր Շաքէն,
Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
Կամաւ ձգեց զինք լեռնէն վար,
Նահատակութիւ ազգին համար:

Սասնոյ բնիկք բոլոր Հայ են,
Ֆերիզն եղաւ նոցա կայէն,
Սասնոյ մէկ մաս կ'ըսուի Կէլի,
Արիւն թափեց զերդ Աբէլի:

Սասնոյ հարսեր գերի գացին,
Մանկունք Քրդաց ձեռք մնացին,
Սըրոյ ճարակ եղաւ Սասուն,
Գիւղեր, արտեր, այգիք հասուն:

Թէև լինկաւ անդէն, անօք,
Ա'ռ երկին չետ քնաւ բողոք,
Գետի նման հոսող արիւն
Գետնէն բողոք ետ Աստուծոյն:

Թէև լինկաւ, ո՛վ վեհ Սասուն,
Բայց դաս տուիր գերեալ Հայուն,
Թէ սուր ընդ սուր, բուռն ընդ բուռն,
Բախեմք ծագի արեւ մեր տուն:

ՄԱՂԹԱՆՔ

Տէր կեցո՛ զու ըզՀայս,
Եւ արա՛ զնոսա պայծառս,
Կեցո՛ ըզՀայս.
Զողորմութիւնըդ վերին՝
Հաճեա՛ ձօնել նոցին,
Զի նուաճ մարթասցին
Ապրիլ յաստիս:
Ո՛վ Տէր մեր, Տէր, փութա՛,
Զազգ մեր հանգոյն փրկեա՛
Ի թշնամեաց.

Կափո զաչըս նոցուն.
Հա՜ տ զարմատոցն ըզբուն,
Եւ զազգ մեր պարտասուն՝
Արա՛ հրոյր:
Աչքովդ համատարած,
Զազգ մեր արտահալած,
Փոյթ գոնարեա՛
ՅԱչխարհ Արարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփհական
Օտար ազգաց:
Ի քո իչխալ տեղի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա՛:
Զերկարութիւն կենաց՝
Հօր մեր աստուածազգեաց,
Շնորհեա՛ պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ:

Մ. Դ. ԹԱՊԻԱՊԵԱՆՑ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրբոի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգիչ տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Զաւիկ օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ»՝ չէ՛ ինձ համար:

Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ տըխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը,
Բարեկամաց՝ չէ՛ ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ'երթամ թըշնամեաց պատերազմը.
Եւ մահաւէտ ապանիչ գընդակը
Անդ պատրաստած է ինձ համար:

(Թարգմ.) Ռ. Տ. Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԱՆՁՈՒԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ա.

Հայաստա՛ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուանդ հալեցան.
Մինչե՞ ցե՞րբ ես 'ի քէն պանդուխտ,
Ոգւոյս իմ ե՞րբ լըցցի ուխտ:

Արեւօք աչքս անձկալից,
Երբեմն զքեզ տեսցի՞ն.

Աչքս այս արտասուալից
Երբեք դադարեցնե՞ն։

Շուրթն իմ՝ ի հոգ կենսատուր
Տայէ՞ զնամբոյրն ուխտատուր.
Արդեօք գլուխս վըշտակոծ
Հանգիցէ՞ քոյդ ի ծոց։

Հայաստա՛ն, սէր իմ Հայաստան,
Ոգիքս՝ ի տենչդ հալեցան.
Մինչև ցե՞րբ ես՝ ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ ե՞րբ լըցյի ուխտ։

Բ.

Հայաստան, իմ պերճ Հայաստան,
Ո՛վ երկիր նուիրական.
Հընոց կենաց և օրրան,
Հաչտարար երկնից խորան։

Ի քո սուրբ հովանիս,
Ո՛ զնըժդեհ տանէր վիս.
Ո՛ ի տոուերսդ երազմոյն,
Ըզնահանեաց հեզգէ քուն։

Անմահութեանց վեհարուն,
Ծըծել անդ զօդ և զաւիշն։
Եւ զաստեացըս վըշտաց
Գըտանել կաւտարած։

Հայաստա՛ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուագ հալեցան.
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ ե՞րբ լըցյի ուխտ։

Գ.

Հայաստա՛ն, սիրուն Հայաստան,
Ծուսոյ խարխափ մարգկութեան.
Դո՛ւ որ իմ լոկ ակընկալեաց վայր,
Ծոր աչք իմ ձըգին յամայր։

Ո՛ զմին զէթ տայր լընուլ
Ջիս ըղձից՝ ի քեզ հոյլ.
Ո՛ զփափաքս յարատեւ
Իբր ըզսիպ մի թեթեւ։

Հասուցանէր մինչ աւ քեզ
Եւ զայս ողջոյնս սըրտակէզ.
Եւ զհառաչս ոգւոյս բիւր
Ջոր ընդ բլուր տա՛յր՝ ի սիւս։

Հայաստա՛ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս՝ ի տենչդ հալեցան.
Մինչև ցե՞րբ ես՝ ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ ե՞րբ լըցյի ուխտ։

Դ.

Հայաստա՛ն, իմ վեհ Հայաստան,
Երանութեան օթևարան.
Ո՛ տայր՝ զաւուրս իմ ցաւալիս
Փոխել, ո՛հ, յերանելիս։

...

Ո՛չ փառօք փայլելով
Վաղանցուկ ո՛չ ոսկով.
Այլ զքեզ տեսանել,
Սուրբ ըզաւարտ ողջունել։

Զաւերակօք քո փարել,
Եւ զնարցս անդուստ ձայն լսել.
Եւ ինոցին հետս անանց
Համբուրել զեռնամած։

Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուն հալեցան.
Մինչեւ ցե՞րբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ ե՞րբ լըցցի ուխտ։

Ե.

Հայաստա՜ն, անոյշ Հայաստան,
Դու զոգիս լընուս համայն.
Դու խրախոյս, փառք իմ և վիշտ,
Ցոր սիրտ իմ թըռանի՛ միշտ։

Ես պատիս, գինչ և գերգ,
Ցանգ, ըղձանչ և սին գերգ
Ի բաղինդ արդարիր,
Կախեցից լիաձիր։

Մի լոկ խընդրեալ փոխարէն՝
Զի գքեզ աչք իմ տեսցեն.
Զի մի՛ ցմահ անձկալից,
Ջերդ սերկեան զոչեցից։

Հայաստա՜ն, իմ քաղցր Հայաստան,
Ոգիքս յանուն հալեցան.
Մինչեւ ցե՞րբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ ե՞րբ լըցցի ուխտ։

ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՅ

ՋՕԹԵՐԳ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

Բարեաւ եկիր, Հայր պատուական,
Մեր ամենուս Դու սիրական.
Ազգն անձկանօք Ջեզ ի սպասէր,
Հովիւըդ քաջ և Ազգասէր.
Կե՜աց Դու յաւէտ, կե՜աց անսասան,
Հայրենեաց զոհ Հայր Սրբազան։

Ազգն համայն ուրախ զուարթ,
Փա՜ռք Բարձրելոյն զոչէ և արդ,
Որ պարգեւեց հեգ Հայ ազգին
Ազատութի՜ւն, չնորհ անգին.
Կե՜աց Դու յաւէտ, Հայր Իզմիրլեան,
Ազատութեան վեհ ախոյեան։

Հայ եղբայրնե՛ր, գիտնանք յարգել,
Ազատութեան լոյսն անարգել,
Որ մեզ տուաւ նոր կեանք, նոր յոյս,
Ցառաջնորդել դեպ յանդէպ լոյս.
Կեաց զոս յաւէտ, Հայր Իզմիրլեան,
Ազատութեան քաջ ախոյեան։

Գորովագութ Սրբազան Տէր,
կարօտըդ մեզ կը տոչորէր.
Այլ արդ հրճուխմբ մեք հոգեպէս,
Անձնանուէր հովուիդ ի տես.
Մատչիմք առ Ջեզ, Հայր սիրալիր։
Համբուրելով զվչդ օրհնաձիր։

ԱԲՐԱՀԱՄ ՔՀՆՑ. ԷՊԼԵԱՆ

ԻՂՋ ՊԱՆԴԽՏԻՆ

Թէ թեւ ունէի
Ո՛հ, կը թռչէի
Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին,
Անկէ ձեզ, Հայեր,
կարդայի հրաւէր,
Թ՛եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, մէկ մարմին,
Սիրեմք ընկեր զընկեր՝ սիրեմք կաթոգին։
Թէ դեռ յիմ արիւն
Չի խառնուիր թոյն,
Դեռ երակացըս մէջ աչխոյժ խազային,
Ո՛հ, քանի՛ հրպարտ
կանչէի ազատ.
Թ՛եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, եւայլն։
Թէ կեանք ունէի,
Ո՛հ, կը լարէի
Թել քընարի բազդին Հայոց անկենդան,
Որ նա ձեզ խօսէր
Զե՛զ, պանդուխտ Հայեր,
Թ՛եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, եւայլն։
Թէ սէր ըլլայի
կամ անմահ հոգի,
կը կապէի Հայոց սըրտերն անմեկին.
Բայնժամ և նորա,
Մի օրդիք Հայկայ,
Կ՛ըլլան ի մի անչուշտ մէկ սիրտ, մէկ մարմին։
Սիրեմք ընկեր զընկեր, սիրեմք կաթոգին։

Ս. Հ. ՖԵԼԼԷԿԵԱՆ

Ի ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Որդի՛ք Հայկայ, որդի՛ք փառաց,
Զարթի՛ք կոչէ ըզձեզ Աստուած.
Տեսէ՛ք Մասեաց ի գլուխ ազատ,
Ըզքաղդ Հայոց նորահրատ.
Աչքք ձեր՝ի դոյն լուսասքին բոց,
Սիրտք վառեսցին, սիրտք Հայոց։

Եւ մխեսցին կուռ բազուկք,
Փան ի հնոց գեղարդունք.
Յաղաստութեան ասպարէզ,
Թափել չանթիս սաստկավրէժ։

Օ՛ն, փողեցէ՛ք, ելէ՛ք ի դղորդ,
Աստուած է ձեր առաջնորդ.
Լուա՛յք, փառք ձեզ կարդան հրաւէրք,
Տեսէ՛ք անդուստ հարց աստուերք.
Անվրէժք առ ձեզ կաւկառեն ձեռս,
Որդի՛ք, խո՞ւլ հարցդ էք յաղերս։

Սրիք ընդ ձեզ դաշնաւոր,
Արդարութիւնն է հզօր.
Եւ զայնպիսիճն առեալ Հայկ,
Իջ քաջորդւոյն ի բանակ։

Օ՛ն. . . ոյք՝ի Հայս մըտին զերդ Բել՝
Ուստն սա վայր է անել.
Ըզսուր մանու ած չուրջ պահպան,
Տէր յեղեմեանն Հայաստան.
Ասէ. Ո՛ զոյն կոխէ սահմանս,
Մի՛ ողջ դարձցի յիւրն՝ի վանս.

Որ վանն Հայոց առ երկաթ՝
Ինքն պընդեսցի յայն կաչկանդ,
Եւ զոր կախել պայր անահ,
Համբուրեսցէ Թոպամահ։

Արի՛ք, իմ քաջք, որդիք Հայկայ,
Վըրիժուց ձեր օր հասեալ կայ.
Երկինք զինեալ են՝ գառել հուրը,
Պըղծոզն ըզձեր երկիր սուրբ.
Թէ զձեր խնդրեն արդ տէգ, ազեղ,
Տո՛ւք, թափեցէ՛ք կարկըտի տեղ։

Ցասումն արդար է ձեր Հայք,
Անցեալ գոչէ. Մի՛ դըլայք.
Ազատութեան օր սա ձեր,
Նոցա՝ անտիւն հաս գիչեր։

Արի՛ք, ծաւալ տուք բարձր յաղեր,
Բրիստոսապըսակ ըզդրօշ ձեր.
Ջէնք ուր Փրկչին նչան կայ կուռ՝ նամըս
Մի եւս անկցի կոր յաթոռ.
Օ՛ն զայգ՝ ի վեր ձըղէք յերկինն՝
Երգումըն տուք անագին։

Մի ձեռըդ իջցին՝ մի սուսեր,
Գարձցի հանդչել ի յազդեր.
Ցըրչաւ դեռ չիթ մի վերջին,
Մընայ յերակս ոսոխին։

Հա՛պա իմ քաջք, օ՛ն անդր յառաջ,
Ձեզ հովանի կայ սուրբ Խաչ.
Բըթեսցին յայն տէգք և փըքին,

Զոր լարեսցի Թըշնամին։
Վա՛յ, ոյց հասին փառք ի վանի,
Թըռչիլ գահէդ յերկինից ահի։

Ահեակ ոտամբ պլուխ ոսոխ
Թոպել պյորել ի գրժախ.
Մուծանել գաչն յերկինից սահման,
Ազատ թողեալ ըզՀայաստան։

ԽՈՐԻՈՒՈՒԻՆԻՆ ԽՈՐԷՆ Ե. Ն.

ՎԵՐՋԱԲԱՆ

Լըռեց։ Սմպերը եկան ծամկեցին.
Երկինքն ու լուսինն աչքէս խլեցին.
Մնացի մինակ՝ հոգիս վըրդոված,
Ջեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած,
Եւ այնուհետեւ ամէն իրիկուն
Մըննում եմ լուսնի խաղալ ծագելուն.
Նորա տըխրամած դէմքը նայելիս,
Ցիչում են Թչուառ վիճակը աղգիս։
Ա՛խ, ցաւ՛, փայլէ՛, տխրագէմ լուսի՛ն,
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային։
Պատմէ չաւերուն վարգանի մասը,
կամ ի՞նչպէս կորաւ Հայ ազգի պատը,
կամ ի՞նչ վնաս սիրով սիրում էր վարդան
Մայրենի հողը, — աչխարհն Հայաստան։

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ.

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ՉԻՆՎՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վիճակ,
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Սրինն, սուր ու հուր պատերազմի դաշտ կը սպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուեց «Ջան ֆէդայ» անուն,
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն,
Ուխտել ենք կռուել, այդ սիրով մեռնել.
Համոզուած ենք որ այսպիսով միայն կայ մեզ փրկութիւն:

Ստամբօլը պիտի լինի արեան ծով,
Ամէն կողմից կռիւ կը սկսի չուտով.
կոտորենք Բաչկալայ, անցնենք հեշտ կերպով,
Աջից վարդանը, ձախից Իչխանը,
Գրաւենք Ազբակ, տարածենք սարսափ.
Փառք Դաշնակցութեան:

Բաչկալայ գառաւում, այն պատերազմին,
Սեւելի մեծ սարսափ տիրեց թշնամուդն.
Քաջ Զէյթունը յաղթեց՝ վատ, չար գազանին,
կեցցէ՛ Զէյթունը, խրոխտ Սասունը, կուսակցութիւնը,
Բազդաւոր օրեր, պարծանք Հայերուն:

ՍԻՓՆԱ ՍԱՐԵՐ

Լո՛, լո՛, լո՛, Սիփնայ սէգ սարի վրայ,
կարիճներ ըլտապով գալիս են, միանում.
Այն տեղ անվախ որդիք, անյաղթ հակայ լերան,
Զէնք ու զրահի են ընթանում:

Ինչո՞ւ վառում են, գինում,
Յանձակոծ ձի հեծնում անհամբեր.
Սրինը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Փայլում, անցնում անհամբեր:

Քանց Սիփանայ պինդ քարին,
Սըլանում է զէպ ի ցած. գաշտի մէջ է թշնամին.
Նա վառում նորանց վրէժ անմոռաց.
Անհեղ կռուի մէջ վատ թշնամին:

Հասու սուսեր է հանել, ցեղապետին սպանելՀ,
Նա վառում է քաջերին.
Բոլոր ցեղն այժմ ոտքի կանգնած,
Թշնամու ընդդէմ, մանու մարտի է կանչում:

Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում,
Ու թշնամին պարտուած՝ թողնում փախչում սարէ սար,
Ցետ է ձըգում մեծ աւարի

Սրինն թափեցին, արի՛ [illegible] փոխան,
Սրինն լամեցին ծարաւ[illegible]ք պատեր.
Նորան յաղեցած՝ դէպ[illegible] պատեան,
Ելնում են հիմա սէգ [illegible]ն ի վեր:

Սէգ Սիփանայ կանաչ գլխին,

Ցաղթող ցեղն անուամ է մեծ խնդուամ
Եւ ամպերի բարձրութեան միջից,
Հոկայ Սիփանն է երեւում.
Էլ չկայ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողովատին:

ԵՐԳ ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼԻ

Բարձրէն ելաւ հրամանը, տուեց Թաթուլի անուանը,
Մնաք բարեաւ, ազնիւ ընկերք, մօտ է կեանքիս
վախճանը:

Կարմրագոյն պատանքս բանտի պատէն մեխել են,
Դիւապաշտան անգութ ֆարմանը գլխիս վրան կա-
խել են:

Թ'ող չթաղէ ինձ օտարն, թողնէ հողին երեսին,
Թո'ղ կատարէ անգութ ֆարման գազանական հանդիսին:

Ես պաշտել եմ գաղափար, ուխտել եմ զոհուել ազգիս.
Կախաղանի անգութ սարսափ չի փոխել իմ սուրբ
վճիռս:

Բայց դուք, ազնիւ ընկերներս, Ձեր սրտի մէջ գերեզման,
Թող Թաթուլին հանդերձներով ասեղան յիշէք մշտական:

Արեւ լուսնի կարօտով, երկար տու տանջանքով,
Էրած, վառուած իմ կեանքին չդրեց իմ թշնամին:

Ա՛Ր ԱՍՏՂՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեր սիրուն հայրենեաց
Բեւեռը չողչողող,
Մեր սիրուն քաջարանց
Ամբիւններն ցարդ հակող,
Պայծա՛ռ աստղ, որ այժմիկ
Լոյս կ'ընես թափանցիկ.
Մինչև Հայ պանդխտաց
Արտերուն կատաս բոյ.
Ո՛վ քաղցր Լոյս, դո՛ւ մխիթար
Տարտղներ Հայոյս թշուառ.
Ի՛նչ աչխոյժ նոր ի նոր,
Ի՛նչ աչխոյժ ոգեւոր
Կ'արթնացնես սրտերնուս,
Ո՛վ Հայոցս միակ Լոյս:

Ջէ՛, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Մեզ քաջալեր են Լոյս և ժամանակ.
Ջէ՛, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Ժամանակին հետ յառա՛ջ ընթանանք.
Յառա՛ջ ընթանանք հոն ուր հրաւէր,
Հրաւէ՛ր կարդան մեզ նախահարց աստղեր:

Թէ Հայկայ որդիք եմք,
Թէ Հայկայ արիւն կրեմք,
Ամենքս ալ ի սուրբ սէր,
Հայրենեաց ի նուէր,
Քաջ որդիք պանծալի,
Ըլլամք միշտ արժանի:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԵՐԳ ԱՌ ԵԶՆԻԿ

Դատարանին խմաղուցին,
Ժողովրդէս վիս զատկին,
Տիգրանակերտ ուղարկեցին.
Աբի եղնիկ, ա՛յ քալ եղնիկ։

Մնաք բարեաւ, նորէն կուգամ,
Վատ Քրդին դէմ սարսափ կուտամ,
Ու եռանդով քարոզ կուտամ,
Աբի՛, եղնի՛կ, ա՛յ քալ եղնիկ։

Ալէճուլուին տակ կայնեցայ,
Դէպ Հայրենիքս նայեցայ։
Սուրը ձեռքս՝ բանակ մտայ,
Աբի եղնիկ, ա՛յ քալ եղնի՛կ։

Քահանաներ վիս պատգին,
Ամէ ղեկտաներըս հագուցին.
Ճերմակ ձիուս նըստեցուցին,
Աբի եղնիկ, ա՛յ քալ եղնի՛կ։

Օր պիտ՝ ըլայ վերադառնամ,
Գահիս վըրայ հանդըստանամ,
Ժողովրդիս հետ միանամ.
Աբի եղնիկ, ա՛յ քալ եղնիկ։

Ի ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ Տ. ՆԵՐՍԷՍ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Ելէք, եղբարք, բոլորուելու
Գահին քովէր Հօրըն Հայուն,
Սակ՛ը ծաղկունս փունջ կապելու
Որ զարդարեմք իւր վեհ անուն։

Նա հայր է մեզ ճշմարիտ,
Որ կը հոկէ անքըթիթ.
Նա նոր Մովսէս երկնաւոր է,
Միշտ կը տքնի անձնուէր,
Անդէն հասնել անվըհատ
Հայն տառապէն յուսահատ։

Որբին, հեգին և հայրենեաց
Նա կ՛ափսիէ տխուր լալիւն,
Եւ աղջային սուրբ իրաւանց
Մատաղ կուտայ իւր կեանքն ողջոյն։

Օ՜ն, արդ փութամք ի հանդէս,
Տօնել զմեր նոր Ներսէս,
Որ իւր չորս դին ի ըսիւռս,
Կանգնէ տաճարս լուսաւիւռ,
Հոն քաւելու դարաւոր
Ազգին վշտերն բիւրաւոր։

Որ փրկութեան ազգի միայն
Ուխտեց ունել նշանաբան,
Եւ անհնայ տըքնի անդ
Հայրենական փառաց վերայ։

Աբեան ծովէն փոթորկուն,
Ուր ազգն անկաւ անկայուն,
Նա կ՛երկարէ գիւր բազուկ
Անկեալ հայուն տալ նեցուկ։
Կեցցէ՛ հայր մեր պատուական,
Կեցցէ՛ Ներսէս արքազան։

Յ. ՉԱՔՐԵԱՆ

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Օտար ափունք ցրուած 'ի սիրտս,
Ո՛վ սիրասուն իմ զաւակունքս,
Ձեր հայրենիք տրտում տխուր՝
Ձեզ կը դիտէ արցունք յաչկունս։

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սրբէ։

Ո՛հ, այս քանի՛ տարի անցաւ,
Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.
Ամուլ մըրցում, հեռ, վիշտ և ցաւ,
Ա՞յս իմ բաժին, ա՞յս է ձեր ջանք։

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սրբէ։

Հընո՛ց՝ ո՛վ դուք որ օտարին,
Փառաց պատուոյ էք խընկարկու.
Անմահութեան դրօշմ, սէր ազգին,
Նախնեաց քրտինք ծախած չըքոյ։

Իմ տաճարներս դուք չէք կանգներ,
Իմ նախատինքս դուք չէք սրբեր։

Կ՝անցնին այսպէս անթիւ օրեր,
Ես յաւերակըս նստած յերեր,
Իբրեւ այրի հըրոյ մատնուած,
Կոյս ոյր օժիտն է անարգուած։

Գուչեմ, տաճարս ո՞վ կը կանգնէ,
Իմ նախատինքըս ո՞վ կը սրբէ։

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԳՈՒՐԳԷՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1890 Ապրիլ 24 ին)

Գլգլալով ջուր է իջնում
Մշոյ մուշ սարերէն։
Ծիծեռնները ծի՛ւ ծիւ կուգան
Գարնան գալը երգելէն։

Գարուն չը կայ Հայի համար.
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտ չեն.
Գերեզմանս հողին հաւասար,
Թո՛ղ փուչ բուսնի իմ վրէն։
Գնա՛, ծիծեռ, թո՛ղ ինձ մենակ,
Վէրքը սրտիս հողի տակ։

Բայց երբ տեսնես թշնամու դէմ
Հայ ժողովուրդ սարի պէս,
Ջինքը ձեռին, հպարտ կանգնած,
Կուրծք դէմ տուած ժայռի պէս,

Ա՛խ այն օրը արի ծուռս.
Գարնան գալը նո՛ր կանչէ.
Հայոց գարնան, որ բիւր բարեւ,
Սիրտս խորէն զոհանչէ...

Հ. Գ.

ԽՐԱՏ

Երբոր ազգին գահը փլաւ,
Երբոր ազգին թագ փշրեցաւ,
Յայնժամ մոլի վատ կղերներ
Բարձրացուցին իրենց թագեր։

Ըսին՝ Հայոց լոկ հայրենիք
Է կղերին պաշտած երկինք.
Լաւ է կրօնի չհաւատալ,
Քան թէ անոր դերի ըլլալ։

Հին բռնակալ թագիդ փոխան,
Հայ մարդ, ընտրէ՛ դու քո իշխան.
Թանկ զարդն, պէրանքն դէշ կղերին
Ա՛ռ, տո՛ւր, կրթէ՛ Հայն որդին։

Ազգ մ՚որ չունի ազատութիւն,
Ան չունի կեանք, չունչ և արիւն.
Զունի կրօն, յոյս հոգևկան.
Անբան նիւթ է ամէ կոխան։

Երդմամբ վճռէ կա՛մ մահ կա՛մ կեանք.
Փչրէ, կոտրէ լուծ և կապանք.
Լաւ է մարդուն բնաւ չապրի,
Քան թէ ապրի այլոց գերի։

Փամփուշտ, գնդակ, ռումբ, ուժանակ,
Առատ լեցուր քո լայն տոպրակ։
Պատերազմի գաշտին մէջ գաղ
Ընտրէ մեռնիլ քան թէ քո տուն։

Լաց, կոծ, բողոք, արիւն, աղօթք
Անօգուտ են, կը ցնդին յօդ.
Քանզի ազգայ իրաւունքներ
Որոշած են քաջայ սուրեր։

Որու սուրը կարուկ լինի,
Որու գնդակն հեռու նետուի,
Իրաւունքն անոր կ՚ըլլայ,
Աչխարհն այսպէս կը հաւատայ։

ՏԱՐՕՆՅԻ

ՁԱՅՆ ՏՈՒՐ

Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չհամիս դժբաղդիս,
Շարժեցէք զեփիւռք ալիքը վէտ վէտ,
Խառնեցէք զաթաոսուս այս ջրերի հետ։

Հայաստանի մէջ անդքերին վըրկայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ, ինձ ասա,
Միթէ միշտ այսպէս պիտ՚ մնա՞յ Հայաստան,
Փըշալից անապատ, երբեմն բուրաստան։

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Մասիսի գլուխն տեսնել մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ ազգայինք,
Դիմեն դէպ ի ի բնանց քաղցրը Հայրենիք։

ՌԱՖՖԻ

ՀՐԱԽԻՐ

Տեսէ՛ք ազատին նոյեան ռապանին,
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին,
Աւետիս կուտայ Հայկեան սերնդին,
Թէ եկաւ գարուն Թորգոմայ գարմին։

Արթնցէ՛ք Հայեր, քնջայ գաւակնե՛ր,
Առէք միութեան տէպ ու նիզակներ,
Շուտով կազմեցէ՛ք սիրոյ խմբակներ,
Հապ՛ք քաջութեան դէն ու զրահներ։

Հինգ հարիւրամեայ մի քուն քնացանք,
Ձաստուած ու գերքայր ի սպառ մոռացանք,

Սիրոյ, միութեան լաթեր մերկացանք,
Աստուածեան ձեռք խաղալիք դարձանք։

Մոռցանք Հայրենիք, մոռցանք Հայաստան,
Կորուսինք մեր փառքն ու Արմենիատան,
Մաս մը Ռուսաստան, մաս մը Պարսկաստան,
Մնացինք, Հայեր, թշուառ, անպաշտպան։

Եկեղեցք բարկացաւ, Հայրենիք լացաւ,
Մեր ջուրն ու հոգին մեզ արիւն դարձաւ,
Խաչեալըն Քիստոս մեզի մոռացաւ,
Հայերուն բաժին մնաց սուգ ու ցաւ։

Այսչափ քնանալ մեզի հերիք է,
Թմրիլն ու պառկիլ խիստ մեծ չարիք է,
Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու գինուորին համար պարտիք է։

Եկէ՛ք միանանք, բանանք դպրոցներ,
Մեր մատաղ մանկանց համար վարժոցներ,
Վառե՛ն՛ք, բորբոքինք սիրոյ հնոցներ,
Մեր սառած սրտին ըլլան հալոցներ։

Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր,
Լացին հայրենեաց դաշտեր ու սարեր,
Հերիք ալ ձեզի, հերիք է վատեր,
Հերի՛ք մեր բաժին արցունք ու աչեր։

Ի ՉԷՆ

Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սըրտում,
Իմ հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում։

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք,
Ելէ՛ք, Հայկայ զաւակունք,
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայ եղբարք,
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ։

Ահա՛, եղբարք, Հայ եղբայրներ,
Առէ՛ք զրահ, սուր, զէնքեր,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեզ հրաւէր կը կարդայ։

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւն։

Ա՛խ, հայրենիք, սուրբ անունըդ
Անչէջ վառի իմ սըրտում,
Մեր Հայ եղբարց չերիմները
Իրանց գըրկին մեզ կանչում։

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւն։

Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին.
Ո՛վ սիրտ է Ազատութիւն,
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն։

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւն։

Հ Ա Ռ Ա Զ Ա Ն Ք

ՍԱՐԳԻՍ ՋԱՆ ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ

(Ախտուեալ ի Սիպերիա)

Երբ ալեկոծ ծովուն վրայ
Իմ մակոյկս խորտակուի,
Ես փրփրադէզ ալեաց մէջը
Դէտ իմ յոյսս չեմ կարկը։

Բոլոր ուժովս և համարձակ
Բազուկներըս կը տարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպ ի ափունք կը թռչիմ։

Անհատասար այս կռուին մէջ
Թէ ոյժերըս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպ ի անդունդ զիս մղեն,

Այն ժամանակ գէթ սիրտիանք
Ես պտնում եմ նրան մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիւ տալով մինչև վերջ։

Ես կուկունեան Սարգիս անուն
Աքսորման մէջ ինկած եմ,
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Զեռքերս չգիայ, ոտքերս չգիայ,
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքի սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Գերեզմանիս քարին վրայ
Սէրըդ սիրով դու երգիր,
Ես փոխանակ իմ երեսին՝
Ծիրանիս քարին համբուրիր։

Մընաք բարեաւ, սուր, հրացան,
Մընաք բարեաւ, ընկերներ,
Անցան օրերս ազատութեան,
Եկան բանտի չղթաներ։

Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թո՛ղ բուսնին,
Իմ հայրենեաց խե՛ղճ զաւակունք
Այս վարդերով զբօսնին։

Հ Ա Ռ Ա Զ Ա Ն Ք Հ Ա Յ Ր Ի Կ Ի Ն

Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք,
Վաապուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ ընծաւ,
Ցաւերըդ ըրաւ միս հազար։

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թփեր սրսնեց,
Ի սպառ փշից մացառ պըսաւ,
Լալատառաչ ձայն հանեց։

...

Հայրիկն ասաց. Իմ հայրենեաց
Փուշն է անուշ քան զվարդ,
Ես այն փշոց մէջէն կարձակ
Կը սրսնեմ սիրուն վարդ։

Այն պայթասոր փուչերն ամէն,
Փունջ կապեցէք չար ի չար.
Թողէ՛ք գլխիս պըսակ հիւսեմ,
Որ իմ ճակտիս է յօժար։

Որքան ատոր դաւեր լարեն
Սեւակոհնճ ազռաւներ,
Չէ կարելի՝ արծիւն իր թարձր
Դիւցն յերկիր սլայր թերել։

Գ Է Ո Ր Գ Զ Ա Ի Ո Ի Շ Ի Ւ Ր Գ Լ

Թուրքը լաւ անունդ Զաւուշ,
Դէմքդ սիրուն, լեզուդ անուշ.
կեանքիդ մէջ հանգիստ չտեսար.
Թշնամեաց դարձուցիր ապուշ.
Սասունն է քո ապաստան.
Վրէժ է քո դատաստան։

Հայոց համար ապարանքա,
Անդրանիկին ընկեր վարպետ։
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ Սուրբ կարապետ.
Սասունն է քո, ևն։

Կատարեցիր քանիցս վաչտ,
Թուրք արիւնով ներկեցիր գաւտ։
Անվախ հերոս Թուրքաց դէմը,
Մինչև վերջը մնացիր աննահատ։
Սասունն է քո, ևն։

Անվախ հերոս ես ճշմարտապէս,
Հայք պիտի յիշեն մշտապէս,
Քաջայ քաջն ես Գէորգ սարգար,
Վարպանի տիպ ես իսկապէս։
Սասունն է քո, ևն։

Զ Ա Ր Ե Հ Ի Ե Ր Գ Ը

Շիտակիմ գիմ սուրմալին յերկինք
Զարկիմ բլուր բերիմ գետինք.
Աչխարք՝ վալլահ՝ էն մարդ գէչ է,
Վիր օր ասէն ու գիդը էչէ։

Իմ Սերոբը գացեր ի գաչա,
Ձեռքի բաճով ջրէ գիր արտ,
Անտէր աստուած ըսկի չասա՞ց,
Զարէն, ճժեր մնան քաղցած։

Կապեր է ջուր ակօս յարտին,
Սև ու մուր է մէջ իր արտին,
Իր ապանուել կընցնի սրտով
Զալըմի սուր ու թըվընքով։

Իմ աղբըրտիք Սասուն ներատուկ,
Սերոբ մինակ յարան է կայնուկ,
Եկաւ խասըմ մըչկընեորով՝
Ալին լէ հետ թըվընքներով։

«Հայու տղայ, չուն, չան տղայ,
Դո՞ւ լէ կեղնիս մըրգի տղայ»,

Աստղ խաղամ, ու իր մըչկին
Պօտաց կապին էգ չան տվին։

Շան տըղէն լէ խածնել պինէը,
Ծօրի օր իր մէն լէ չուներ,
Վերցուց գիր բան, գարիաւ գլխին,
Ու սատկացուց զէն էչ Ալին։

Բռնեցին գինք, մէչէն սարան,
Մէչէք չըմէն սեաւ ուրան,
Ղազ հաղ լըգին վըր Սերտրին
Կրակ տուին, գմարիին վառին։

Գարձան նկատ՝ մըր գիզ չիչան,
ԶԱնգրանիկն ու զԱբամ տարան,
Չիս լէ բանէն գմի երևք,
Տարան տգի մօտ անօրէնք։

Չիմ ճըմկըներ կըարբանգին,
Զգլուխ կնօվախ լէ բաժնեցին,
Ժողվին ղղեղի աչխար տաւար,
Առան տարան ուրանց աւար։

Իմ Սերթըի սեւ ոսկորներ,
Անդրանիկի գանգուր մազեր,
Ու Աբամի թուխ աչվըներ՝
Չիմ հողին են էրեր մրկեր։

Ընծի մնաց գաղի հողին,
Բռնեմ գընեմ մէչ կրակին։
Օրաէ չասին Զարէն գէչ է,
Ու իր աչն ու ցեղը էչ է։

Շիակիմ գիմ աւրթալին յերկինք,
Զարկիմ բլուամ բերեմ գետինք,
Անաէր Աստուած ըսկի չասաց,
Զարէն բուբու մինակ մընաց։

ԽԱՆԱՍՕՐԻ ԿՈՒԻՈՒՄԸ

ԸՆԿԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ցաւլիս ամսի քառասնինգին,
Մօսին հրացան պատրաստ ձեռքին,
Քրդի տիր պահած սրտին,
Դէպ Խանասօր գիմնց ուժգին։

Երևք հարիւր Հայ քաջերով,
Բոլորը գինուած մօսիններով,
Շէրիֆ բէկին մեծ ջարդ տալով,
կարօն ընկաւ վրէժ կառչելով։

Ագուլեցի քաջ պատանի,
Հօրդ մօրդ ո՞վ լուր տանի.
Գեղպէնեերին միչա երանի,
Դուք էք յոյսը Հայաստանի։

Ամէն աչքեր թո՛ղ արտասուեն,
Ամէն սրտեր թո՛ղ կարատեն,
Խանի նման զոհեր տվին.
Խեղճ Հայերն ո՞նց համբերին։

Փչեց մեզ զով Առաւուլից,
Հայերի սիրան էլ այրեց.
Ինանի պէս քաջն մեզանից խլեց,
Հայ քաջերի սիրան էլ այրեց։

Դու ո՞վ ունիս որ քեզի լայ,
Գերեզմանիդ վրայ ողբայ,
Թշնամիդդ վրէժ առնէ,
Անբաղդ Հայուն օգնող չկայ։

Ինունկ ու մոմով գամ խնամօր,
Արցունք թափեմ ես ամէն օր,
Քեզ հարցնելով մնացի մոլոր,
Նստած կուլամ միշտ սպասող։

Արտասուքս հեղեղ դարձաւ,
Պայծառ օրս խաւարեցաւ,
Դաշտ ու ձորեր արիւն դարձաւ,
Ինանի պէս քաջը զոհուեցաւ։

Առնեմ սուրս, ելնեմ Առաւուլ,
Քիւրդեր մորթեմ ես ձախ ու աջ,
Ես էլ Հայ եմ պարտաճանաչ,
Հայերի համար մեռնել քաջ-քաջ։

Ա՛խ, երանի՛, թո՛ղ մեռնէի,
Այգս աղաւաւած տեսնէի,
Ուրախ գերեզման մտնէի,
Եւ հանգստութեամբ ննջէի . . . ։

ԵՐԳ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Հուր բարկութեան համայն Հայոց,
Բորբոքեալ զերդ բոց բարկաճայթ ·
Եւ կայծականցըս բիւր բիւրոց,
Զարթոյց ի մարտ սարս սառնապատ ։

Զի՞ վարանիմք ասա արդ , եղբարք ,
Դատարկ ձեռամբ , դատարկ ձեռամբ ,
Զեռամբ , Արտազ Տղմատ օն դրոյդ ի դրոյդ ,
Ի դրոյդ թռչիմք սրանամբ , սրանամբ , սրանամբ ։

Հուր զէն ի ձեռին
Ու վրէժ սահպին
Սպասեն մ՚ կան
Քաջք Աբշակունեան ։

Եւ յոր երկինք հանդիսատես
Զաչխոյժ նախնեաց հեղու ի մեզ ։

Հապ ՚օն քաջք քաջաց ,
Ընդ սասան կուրծս ,
Մխեացուք մկունս ,
Ուժգին ի հարուած ։

Ռ· ՍԻՏԻՖՃԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Թէ լմս Հայրենեաց քնար սպասող
Հեծէ տխրագին, լմ հոգիս է այն ·
Թէ նորա բեկբեկ թելերը վշտաւոր
Խօսի աղբաճայն, լմ սրտիկս է այն ։

Թէ Հայ մուսային սրտառուչ նուագ
Դեռ կ՚եղերերգէ, հառաչանքս է այն ։

Թէ Հայաստանիս սեւ բազդին հազազ
Լայ ազեկտուբ, հեծեծանքս է այն։

Թէ իմս Հայրենեաց կիսամեռիկ չունչ
Դեռ ըսի տխուր, իմ ոդբերս է այն։
Թէ լոկ մինչիկ հեծէ անչըքունչ,
Ո՛հ, անկարեկիր, իմ լալիքս է այն։

Եւ Հայկայ փառաց յօժար ոդբերգուն,
Հարազատ լացողն, իմ ձայնիկս է այն։
Զորս հազար տարուան պարծանապ գարուն,
Արձագանգ տուողն, ազազակս է այն։

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր,
Ահա՛ այս մաշած իմ կուրծքըս է այն։
Սեւ սեւ թերթերուն էջ սրտակոտոր
Արտասուօք գրուած, իմ ոդիքս է այն։

Թէ բանաս կարդաս արիւնոտ պատկեր,
Վարդապետն ներկուած, իմ կողերս է այն։
Թ՛աչքէ անցընես չամփրած նիզակներ,
Մահաճոտ ցցուած, իմ թիկունքս է այն։

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տեսնես, իմ ուժըս է այն։
Թէ՛ զէնք, թէ՛ զրահ, թէ՛ սուր, թէ՛ սուսեր,
Փշրած կոտրած, ոսկորներս է այն։

Թէ արեամբ ներկեն ակունք եղեմին,
Նշխար քաղցրուն, իմ բիբերս է այն։
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր, արտասուքս է այն։

Թէ վճիտ գետերն ազբերքն արծաթի,
Լալիք առուակեն, երակներս է այն։
Թէ Տիգրիս, Գեհոնն, Փիսոն մռնչեն,
Թէ պղտոր գնան, իմ արիւնս է այն։

Թէ սառնամանիք ձմրան բբաբեր
Լեռներն է պատեր, իմ գագաթս է այն։
Եւ քաղցրիկ զեփիւռն, անուշակ հովեր
Ցրտագին փչեն, իմ չնչիկս է այն։

Թէ վտակ վտակ ցօղէ գյուխատակ,
Զայս տրտմալաստակ, աչքերս է այն։
Թէ սրտաճմլիկ երգէ զՀայաստան,
կանչէ զՀայաստան, անկեղծ սէրս է այն։

Թէ մթին խորչերն ու ձորեր լռին,
Սեւերով ծածկեն, մինաստանս է այն։
Թէ ոդբ կը կարդան վայրերն եղեմին
Ճնշած լերդերուս, արձագանգն է այն։

Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ,
Պինդ սիրով գրկողն, իմ ձեռքերս է այն։
Թէ կը համբուրեն կաթոկին խմբիւ,
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն։

Եւ Հայոց լերանց ցուրտ չուքերուն տակ,
Ընկած ապաքաղդ, իմ ճակատս է այն։
Մասեաց սուրբ գարերն իւր բարձն ու պատկ,
Դրած սգաւոր, գլուխիկս է այն։

Եւ կիսակործան տաճարն Հայրենի,
Սեւ սուգ է պատեր, տաղտաւարս է այն։
Ուր չիջեւավառ կանթեղ դեռ հիւծէ
Նուազ առ նուազ, իմ յոյսս է այն։

Ուր տխուր նաստեր, մազերն են ծածկեր,
Իւր սեւուկ աչքեր, սիրականս է այն։
Ջեռքերն 'ի ճակատ, կռնակն 'ի հողեր,
Ցուսով կոթներ, Հայաստանս է այն։

Գերեզմանս է այն։
Ուր երբ տեսնեմ զիմ հէգն Հայաստան,
Ի գահ իւր փառաց, իմ բաղձանքս է այն.
Ցայնժամ թո՛ղ մեռնիմ յիւր ծոց մայրական,
Ջիմ վերջին չնչոյս միակ ուխտս է այն։

Ս. Հ. Մ. ՖԷԼԷԿԵԱՆ

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴԻՈՅՆ

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանգ լեռնատոյզ,
Սարէ ի սար չարաչըշուկ տարին լուր,
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ,
Երբ պատանւոյն բացինք մահուլ փոսին դուռ։

Գիշերական մուռնչ տատերներ չուրջ կային,
Երբ հրացանի կոթոթ ըզնոզ փորեցինք։
Լուսին միայն դողդոջ չողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ, բլուր և երկինք։

Պէտք չէր դագաղ, և ո՛չ ճերմակ պատանքներ,
Որով գոցուէր ազատորդին, քաջորդին,
Նա յետ մարտին կարծես հոգնած կու հանդչէր,
Ու վերարկուն կարմիր՝ բաւ էր իւր անձին։

Անձայն ու կարճ ննջեցեալոց մի զրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, պինուար Հայոց ե՛ Աստուծոյ,
Գովեց ըզմահն և զքաջութիւնն իւր օրհնեց,
Թոյլ չի տուաւ հառաչ մ՛ ու ճիչ հանելոյ։

Բայց երբ գլուխ ի բարձ դըրինք հողաչէն,
Տեսանք ըզդեղ ճակտին ու վէրքն պայծառ·
Ո՛վ պատանեակ, ըսինք ամէնքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու չա՛տ ապրեցար։

Գնա՛ զրուցէ՛ Հայկայ զարմին մեծ որդւոց
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ Հայեր,
Որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց,
Մէջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր։

Մէյ մ՛ ալ քամին յանկարծ փչեց ցրտաչունչ,
Լուսնին չողերն եկաւ գոցեց մթին ամպ·
Ու մեր սարերն զերթ ուրուականք անմռունչ,
Սեւ գըլխանին տնկած դիտեն ապըստիամբ։

Ցայնժամ յուրտ յուրտ հող լեցուցինք իւր վրան,
Խաչ մը գրինք, ինչպէս իւր մօր պատուէր եաւ·
Ո՛չ այլ ըզքեզ արձանագիր, ո՛չ տապան,
Ջինքն մինակ թողուցինք իւր փառքին հետ։

ԵՐԳ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴ. ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին·
Իջաւ Այրարատ՝ հասաւ ՚ի Տիգրիս,
Դարձաւ դադրեցաւ, կեցաւ ի Մասիս։

Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Ձայն մի Թորգոմայ որդւոց։

Որ մերկանան զգուբա ձմրան վարագոյր։

Ժամ է արդ, Հայեր,
Ընկեր առ ընկեր·
Տամք սիրոյ համբոյր։

...

Համբոյր մեր ըղձայ վկայ միութեան,
Սահմանադրութեան։

Եւ չիջեալիաւ Հայրենեաց խորան,
Բացաւ ախոյեդին զիւր գող ճգնութեան·

Հասին հոն Մուսայք, և Յուսոյ հրեշտակք,
Անոթժ երգեցին խնդութեան նուագ։

Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
Սիրտ մի Թորգոմայ որդւոց։

Որ մերկանան հետ նախանձու վարագոյր։

Ժամ է արդ, Հայե՛ր,
Ընկեր առ ընկեր,
Տամք սիրոյ համբոյր։

Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան,
Սահմանադրութեան։

Եւս Հայաստան նոր զարնան ի տես,
Դարձայ ի չքեղ իւր փառաց հանդէս.
Դարձիր բաղդակոծ ինարդ իմ հոգւոյն,
Դարձէ՛ք աւուրք կենաց, դարձէ՛ք յայգ յուսոյն։

Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
Լոյս մի Թորգոմայ որդւոց։

Որ մերկանան մութ գիշերին վարագոյր։

Ժամ է արդ, Հայե՛ր,
Ընկեր առ ընկեր,
Տամք Սիրոյ համբոյր։

Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան,
Սահմանադրութեան,

Ս. Հ. ՖԼԼԷԿԵԱՆ

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ արագ,
Տեսանք որ քալէ Խանի խումբն էր,
Զինուած էին բոլոր նրանք։

Կեանքերը ազգին նուիրած,
Կորիճ Խանն առաջ ընկած։
Գնում էին Տաճկաց սահման,
Թըռչում էին ինչպէս կրակ։

Հըրացաններըը ուսերին,
Դրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ զուարթ,
Ազատութիւն երգում էին։

Մութ անտառից անցնում էին,
Ամէն մէկը ասիծ էին,
Նժոյգ ձիանց վրայ նստած,
Մերկ սըրերը քաշել էին։

Երբ քալէ Խանը եղաւ Բասէն,
Թնդանօթներ արձակեցին,
Հայ քալէրի մօսիններից
Գնդակները զոռզոռացին։

Անհոգ կռիւն անյ՛ սկսեց,
Երկու անյատղի թշնամիաց մէջ։
Թուրք զօրքերին գիմադրեցին,
Փառաց սպակ վաստակեցին։

Երբ քալէ Խանը հրամանդ կուտար,
—Արի՛ք առիւծներս իմ քալէ։
Մտան թշնամուն խիտ չարքերը,
Կոտորեցին ձախըն ու աջ։

Երբ քաջ Խանը «ուռա՛յ» գոռաց,
Թշնամիքը մոլորուեցան,
Հազարաւոր տաճիկների
Գլուխները ջախջախուեցան։

Ջերմ եռանդով կռուում էին,
Սրտերումը կար չատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զօրքեր,
Չէին կարող կանգնել առաջ։

Կեցցէ՛ Խանը իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչքերիցը կորեց քունը։

Հայաստանի հողի վրայ,
Քաջը թափեց իւր արիւնը,
Ճիշնէք, Հայեր, չը մոռանանք,
Կորիճ Խանի քաջ անունը։

ՅԻՇԱՏԱԿ

1897 Յուլիս 24ի արշաւանքին

Պաշարեցին Խանայ ձորեր,
Դաշնակցութեան քաջ հայդուկներ,
Շուն Շէրիֆի բիւր վրաններ.
Կեցցէք, կեցցէք, Հայ հերոսներ,
Որ ջարդեցիք չուն Քիւրդեր։

Ցարձակուեցան Քրդաց վրան,
Սարսափեցին Շէրիֆ աղան,
Կին ու աղջիկ, փոքրիկ տղայք,
Կեցցէ՛ք, կեցցէ՛ք, և այլն։

Աստուծոյ արշալոյսին
Հայ քաջերը ձեռք վերուցին,

Դաշտ ու ձորեր դիակ լցրին,
Նահատակաց վրէժ լուծին,
Կեցցէ՛ք, և այլն։

Հայկայ բանակը արշաւեցին,
Ջեռքին առած սուր ու մօսին.
Քիւրդաց ջարդին արշալոյսին։
Կեցցէ՛ք, և այլն։

Ջատրներաց բարակ սիւներ,
Ս.յրում էին Հայ հերոսներ.
Սև կապեցին Քիւրդաց կիները։
Կեցցէ՛ք, և այլն։

Ծածանւում էր դրօշակներ.
Որոտում են մօսիններ,
Գլորւում են անթիւ Քիւրդեր։
Կեցցէ՛ք, և այլն։

Սպարապետ քաջ Վարդան,
Հրաման տուր, գնանք դէպ ի Վան,
Դուղացնենք այն բռնութիւն,
Որ ճանչնայ Հայուն իւր ձեռը,
Բռնած սուր և հրացան, ու ինքն
ազատ է ազատ։

ԽՁԻԱԲ ԵՄ ԵՍ . . .

Խաւար եմ ես ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմըս փոթորիկ.
Ջանիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,
Ես սիրում եմ Հայրենիք։

Այնտեղ անբաղդ, թշուառ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր,
Թափուր են բիւր արցունքներ։

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես չատ ու չատ փոխուել եմ,
Ա՛ռ Թաչկինակդ, սրբի՛ր աչերդ,
Ես քեզ սիրել չեմ կարող։

Մնաս բարեաւ, իմ աչքի լոյս,
Սէրըդ լինի ինձ խրախոյս·
Այլ արտասուք ես պիտ՝ թափեմ,
Այն դառն վիշտ սփոփեմ։

ՍԵՐԵՄՃԵԱՆԻ ԾԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջանփիդայ եմ.
Թափառական, տուն չունեմ.
Երբիս փոխան զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ։

Արիւնոտ երկիր, սուգ ու չիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.
Տանջուած հայրենիքի սէրը
Զը վախեցուց ինձ վտանգից։

Ես կոչուեցայ ջանփիդայի,
Դարձայ զինուոր գաղափարի.
Թո՛ղ իմ թափած արեան չիթեր
Օրինակ դառնայ Հայ զինուորի։

Մակեդոնիա իմ եղբայրս
Իմ խաչովս պսակուեց.

Եղբայրական սիրուն զէնքով
Գազան խուժանն խորտակուեց։

Ահա՛ հանգիստ հող կը մտնեմ,
Ցոյսս դո՛ւք էք, ընկերնե՛ր,
Շարունակէ՛ք մեր սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քայլեր։

Կախաղանից երբոր քամին
Ինձ տարբերից ձօճալէն,
Ցիշէք Պետրոս Սերեմճեանին,
Թշնամիէն վրէժ դուռալէն։

ՆՈՒԻՐ ՀՆՉԱԿԵԱՆ ՁԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Հնչակեան զինուոր ուժգին համարձակ,
Շողացուր միչտ սուր, սուլեցուր գնդակ,
Առանց տատանման անվեհեր թափով,
Դիմիր ու դիմիր դէպ վեհ նպատակ։

Նուիրիր կեանքդ քո եղբայրներին,
Ցոհ բեր թշնամուդ քո կարուկ սուրին,
Հակառակորդից դու մի՛ երկնչիր,
Դեզ զարման եղի՛ր արնոտ վէրքերին։

Զարութեան ոգու թոյնը սպանիչ,
Թո՛ղ հեռու կենա սրտիցդ, ո՛վ կորիճ.
Իբրեւ զրօչակին հարազատ պաշտպան,
Աո՛ւր միչտ ոխը, քէնը քայքայիչ։

Անխարդախ ոգով միչտ յառաջ գնա՛,
Բռնակալ ուժը ջնջելու ջանա՛,
Յեղափոխութեան թշնամու հանդէպ,
Եղի՛ր անողորմ, անդութ, անխնայ։

կարիճ Հնչակեա՛ն, ուժգին համարձակ,
Շողացո՛ւր միշտ աւուր, աւուրեցուր գնդակ։
Ցեղափոխութեան սրբազան դաշտում
Միայն այդ լինի քո վեհ նպատակ։

Վ. Տ.

ՎԱՆԵՑՈՑ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր, ողորմեա՛ Հայոց ազգին,
Տո՛ւր զօրութիւն մեր թոյլ բազկին,
Հալածէ՛ դու անգութ Տաճկին.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛։

Շնորհեա՛ մեզ մէկ քաջ զօրավար,
Ժողովել Հային միագումար,
Մարտնչեցնել կրօնի համար.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛,

Թո՛ղ դադրի մեր գերութիւնը.
Ցառնէ Հայի ազգութիւնը,
Վերջանայ մեր հէքութիւնը,
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛։

Ցիշեա՛ զմեզ, Տէր, այս անգամը,
Ողնայն չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ ազգաց ըլլանք անդամ.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛։

Տէ՛ր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ Հայիս մէկ բան չի օգնիլ,
Մեզ կը մնայ ջուրն ընկնիլ.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛։

Ապա թըչուառ եղբայր Հայեր,
Ջեռքերս առնունք մէկ մէկ սուսեր,
Դրօշակ բանանք, փըչենք փողեր,
Տէրըն խըղճայ ի վերայ մեր։

ԳԱՄԱՌ. ՔԱԹԻՊԱ.

ԳԱՂԱՏԻՍ. ԿԱԽՈՒՈՂՆԵՐԻՆ ՄԻՈՑՆ ԵՐԳԸ

Կախաղանը պատրաստուեցաւ,
Արի՛ք, երթանք, ո՛վ Հայեր,
Թո՛ղ բռնութիւնը յագեցընէ
Իւր անօրէն չար կիրքերը։

Մնա՛ք բարեաւ, ո՛վ ընկերներ,
Մնա՛ք բարեաւ, ո՛վ Հայեր,
Մի՛ մոռանաք ձեր եղբայրներ,
Անգթութեան լոկ զոհեր։

Օ՛ն, Յովհաննէս և Մկրտիչ,
Կ՝առաջնորդեմ ես ձեզի,
Մի՛ վհատիք, մի՛ վհատանաք,
Հետեւեցէ՛ք դուք լինծի։

Թո՛ղ նկատէ բռնութիւնը,
Հայը մահէն չի վախնար,
Ջի զարարիր պատերազմիլ
Իւր ազատութեան համար։

Անյիշաչար, ո՛վ Աստուած իմ,
Վրէժխնդիր դո՛ւ եղիր,
Մեր հայրերուն, մեր մայրերուն
Մխիթարիչ դո՛ւ եղիր։

ՉԷՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Ես հանեցի նոթս պատեանէս, արտատոքով օծեցի,
Տրտմաւ անուշ սիրականիս, ես իմ ողբս կարդացի։
Նա երդուեց իւր սիրովը չինայել Թուրքերուն,
Այս պայմանաւ աչխոյժ քաջին հետ հրացան յանձնեցին։
Հոգևորաց եկեղիից քաջեր ոմ կ'սպասին, ոՀ, մեզի,
Նա բաժանեց մռնչալով իրեւ կորիւն առիւծի։
Ելեց բերդերը, այրեց գիւղերը, Թուրքն ըրաւ այս
բոյթը,

Ծակեց չուն մ՝։։ ին քիթը ձիւ բէպի գարշ հոտը,
Ջարդեց զարձաւ գերիներով իմ պաշտելի անուշով,
Սեւ մազերով սրբեմ, փայլի Թրիս կաթած արիւնով։
Հանգստացնեմ կուրծքիս վրայ, չի խանգարի իւր քունը։
Մեզի մահամերձը, կեցցէ իրեն, ազատուած է Չէյթունը։
Աստուած սիրէք, Հայ աղջիկներ, եկէք խորհինք մի-
ասին։

Այսուհետեւ ալ չխրենք կռուից փախչող վախկոտին։
Եիսա զարհուրելի կերպով Թուեց ոսկւոյ սիրող մեռ-
նողին,

Համբուրի տեղ Թոյն կամենանք վատից վրէժ չառ-
նողին,

Տիրանի պէս քաջեր սիրենք, արժանի է մեր սիրոյն,
Որով գիտենք սիրով պահել արժանիքը քաջերուն։
Ա՛խ, քեզի մեռնիմ, Տիրան, Տիրան, ոսկւոյ սիրող
ամեայ.

Հազար էրնեկ ամէն Հայուն, մօտն ունենայ քեզ նման։

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Ձեռ գառնաչունչ ձմերայնոյն,
Ես ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ գառնայ գարուն։
Մինչ թոյր ի թոյր փըթթին ծաղիկներ,
Ես ճըռուոդին նորեկ ծիծառներ,
Ի քեզ կ'սպասեմ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

Ո՛չ հեղուխտներ ինձ դաշտավայրք
Եւ կամ դուարթ մարդագետինք,
Ո՛չ քաղ ըղձիդ չըբնաւազեղ
Իտալական պայծառ երկինք։
Հեռի ի քէն պանդխտիս փոլով
Թոյովըդ չար կիզում անձկով
Ի խանձարուրդ իմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնեմ ես դարձ։

Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկոյս ոտից իմ գեղ դալար,
Եւ յինեն խոյս ատգեն վայելք
Կենաց՝ թեթեւ ի գարշապար։

Ուր հէք մուսայս մատն ի վերոր
Մոռանայցէ երգել ըզսէր։
Ըզնինըչ ի ծոցդ առնեմ յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՁԱՑՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ՖԻԴԱՑ . . .

Ձայն տուր, ո՛վ ֆիդա, ինչո՞ւ ես տրտում,
Լուռ ու մունջ նստած երկար մտածում.
Շարժեցէ՛ք չուտով սուսեր չողչողուն,
Թափեցէ՛ք կրակ թշնամեաց գլխուն։

Պարզեցէ՛ք դրօշ վեհ Դաշնակցութեան,
Լինի առաջնորդ մեր ազատութեան.
Քանի այսպէս է ազգը խղճալի,
Չենեալ կը մնան ամբողջ ֆիդայիք։

Շտապենք, ֆիդայք, խմբուենք մի տեղ,
Դաշնակցութեան դրօշը ծածանուի այնտեղ.
Թափենք մեր արիւն իբրու հախուռն։

Եկէ՛ք միանանք, ո՛վ քաջ հայդուկներ,
Վրէժ են պոչում մեր նահատակներ,
Մօսին հրացանը ձեռքերնիս բռնած
Թռնատուր փամփուշտ կուրծքներիս ձգած։

Հայ պէնուար եմ ես, անձնազոհ ֆիդայ,
Դժբախտ հայրենեաց անցեալին տեղեակ.
Մենք ենք սերունդը բնիկ վեհ հայկեան,
Տոհմէն գլուցպանց, որդիկ Թորգոմեան։

ՉԻՆՈՒԱԾ, ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ . . .

Չինուած, պատրաստուած, Չէյթունի քաջեր,
Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.
Վրէժով լցուած աւիւծի նման
Քաջ-քաջ կռուի են Թուրքի դէմ դաժան։

Կեցցէ՛ք դուք միշտ, Չէյթունցիք,
Որ պիտ փրկէք հայրենիք։
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կեանքիցն էլ ձեզ կաւանք։

Մանուկն օրօրոցում հանգիստ չէր պառկած,
Մղդրում էր մօրից՝ «բազուկներս բա՛ց»։··
«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»···

Կեցցէ՛ք դուք միշտ, Չէյթունցիք,
Որ պիտ փրկէք··· և այլն (կրկնել)։

Ի՞նչ ես կաչկանդել, քանզի՛ր ինձ, մայրիկ,
Ես կուզեմ կռուել Թուրքի դէմ ճարպիկ,
Տուր ինձ հրացան և մի սուր գաշոյն.
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն։

Կեցցէք դուք միշտ, Չէյթունցիք, և այլն։

Ա. ՁԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

Ի զէն, հայեր, ի սուր և ի հրացան,
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.
Լեռնից լեռ թնդում է ահեղ հրաման,
«Թռէ՛ք հայեր, թռէք դէպ ի Հայաստան»···(կրկնել)։

Արեւելք, արեւմուտք, հարաւ և հիւսիս,
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս։
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից։

Խումբ-խումբ Հայեր դէպ ի Տաճկա-Հայաստան,
Փրկութեան աւետիս առած ի բերան,
Դիմում են ցնծութեամբ իրթեւ հարսանիք,
Ոխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք։

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը·
Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,
Անթիւ ատար և գանձ Հայերին թողնում·
«Ցաղթութի՛ւն, Ցաղթութիւն» գոչեցին միաձայն,
«Թշնամին կորած է, կեցցէ՛ Հայաստան»···

ՎԱՆԵՑԻՈՑ ՀԱՑՐ—ՄԵՐԻ

Հա՛յր մեր երկնաւոր՝ սուրբ լա՛ քու անուն,
Հային երկրաւոր տո՛ւր արքայութիւն·
Ամէն բանի մէջ քու կամքդ թող՝ լա,
Միայն թէ Հայը լուծի տակ թող չի՛ լա·
Ո՛չ չոր, ո՛չ կակղ հացըդ մենք կուզենք,
Միայն տո՛ւր ամեն Հայի ձեռքը ցենք·
Ձենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,
Թէ՛ք վերցո՛ւր վասի խայտառակ հարկը·
Գլորէ՛ մեզ, Աստուած, մարտի փորձութեան,
Որ չուտ ազատուի ազդըդ քո Հայկեան։

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան Դրօշակ·
կեցցէ Հայրենիք գոչելով,
Բարձրացրին աղաղակ։

Թնդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհքը Հայկական,
Խումբ-խումբ կարպած Հայ զաւակներ
Հասնում էին օգնութեան։

Գուրգէն, վահան, Հրայր (Դժոխք),
Քաջ Անդրանիկ զեկավար,
Տալորիկի լեռներում
Շրջում էին անդադար։

Սարսափելացան Քիւրդ ցեղերը
Մինչ պալատը Սուլթանին,
Հրամայեց չուտ կործանել
Դիրքերը հայդուկներին։

Ահա՛ անգութ Քիւրդ ու Տաճիկ,
Սարսափելի տեսարան.
Ժամանակ է վրէժ լուծել,
Գոչեց ձայնը Հայկական։

Կրակ տեղաց Հայ քաջերի
Բնակավայր դիրքերից,
Այլայլուեցան Քիւրդ խուժաններ,
Ահեղի դնդակներից։

ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԾԻՇԱՏԱԿԻՆ

Մեծ էր կուրծքդ, մեծ սիրտ ունէիր,
Մեծ էր հոգիդ ու արի,
Հակայ փոյթ, մեծ կամք ունէիր,
Հերոս զինուոր ֆեդայի։

Դու սիրեցիր Թչուառ աղգիդ,
Անկեղծօրէն ուխտեցիր,
Եւ քո սիրած հայրենիքիդ
Ջահել կեանքդ զոհեցիր։

Ու գնդակներդ անվրէպ
Սրձակեցիր աչ ու ձախ.
Կանգնած հազարներու հանդէպ,
Մինչ վերջ կռուեցիր անվախ։

Դու կռուեցիր Օֆիքներում,
Այն վեհ կռուում ահաւոր.
Դու վախեցուցիր Քիւրդ ու վատին,
Դու մեր ազիզ Գրիգոր։

Ու յիշատակդ անթառամ,
Քեզ արժանի երգերով,
Պահել յաւէրժ մեր սրտերում,
Անմահ անունդ յիշելով։

ԵՐԳ ՀԱՑ ԱՂՋԿԱՆ

Ո՞վ ես որ գաս առանձին,
Ջեռքդ կուրծքիդ խաչապէս,
Ծոնր դրած ի գետին՝
Լռիկ առ ո՛ բողոքես։

Ամբիծ ճակատդ է կնճռոտ,
Ծոնքերդ ի ծուփ ալեկոծ.
Կոյս սիրտդ ինչի՞ է կարօտ,
Որ հրաչունչ հանէ քոց։

Երթալ կ՛ուզես կը յուզիս,
Արդեօք սիրո՞վը մարդու.
Կամ տուրբ սիրո՞ւն կրօնի,
Որ Աստուածն է սրտերու։

Ես Հայ աղջիկ եմ զինուոր,
Տղմուտի մէջ մկրտուած.
Պատմուճաններս են բոսոր,
Ջէնքս խաչն է յաղթական։

Ջինուոր կ՛երթամ Հայաստան,
Օրօրոցիս օրօրով.
Ջինուոր կ՛երթամ Հայաստան,
Իմ հայրենեաց կարօտով,
Ազատութեան կարօտով։

ԱՂԱՒՆԻ ՅԵԼԷԿԵԱՆ

ՔԱՋ ԵՂԻՔ

Հասաւ արդ ժամ վհատաց, օ՜ն, եկէ՛ք, Հայեր,
Ալ ի՞նչ հարկ վարանման, կազմենք բանակներ,
Խըրախոյս, սիրտ առէ՛ք և արիաբար
Ջէնք առէ՛ք, ինչ եղի՛ք, մի՛ առնէք դադար։

Օ՜ն, դիմենք մենք ի դաշտ, դիմենք Շաւարշան,
Համախմբեալ կազմենք բանակ Հնչակեան,
Վատ է այն անսիրտ Հայն որ Թչնամի ի
Երեսէն կը դոզայ, չունի սիրտ արի։

Իսկ արի զինուորին յաւասիկ ճակատ
Մչատղալար դաշինին բոլորէ պըրակ։

Ոտքերու տակ սըխռենք վարդեր ու չուշան,
Ցիշատակըն Հայոց երդենք յաւիտեան։
Ծածանի մեր դրօշ ի կարին ոտան,
Մայր քաղաք Թո՛ղ ըլլայ Հայոց Պետութեան։
Զրահներ հագուեցէ՛ք սիրոյ հաւատքին,
Փառք ունինք մենք Թէ՛ հոս Թէ՛ մէջ երկնքին։

ԱԻԵՏԱԲԵՐ ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մռայլ կողեր Թողէ՛ք պիս,
Ջայն մի լսուի փրկարար,
Ջեռք մի քակէ իմ պատանք.
Ելի՛ր, մայրիկ, բա՛ւ նիրհես,
Յարութեան դար է այս դար։
Պատանեակ մ՚է այս առոյգ,
Վարդանի դէմքն է իւր դէմք,
Գորով ցայտէ աչերէն.
Նա վրէժորէն Քուչիմ հոս,
Ելի՛ր, մայրիկ, բա՛ւ նիրհես։
Մի ձեռքին մէջ կայ օրէնք,
Ճակտին գրուած Հայրենիք.
Իւր քայլերուն հետքն է լոյս.
Շղթաներըդ Թող մէկդի,
Ելի՛ր, մայրիկ, բա՛ւ նիրհես։
Խաւար Թափի աչերէս.
Այն ի՞նչ այդ է լուսածին.
Այն ի՞նչ այդ է վարդածին.
Լոյսն ապագան է Հայուն,
Վարդերըն յոյս են Հայուն։
Ելնեմ ապա պարեմ դուարթ.
Բերէ՛ք զարդերս պճնուիմ,
Ոսկի զարդերս բերէք ինձ.
Անոնք աւերց տակ կորան,
Ցուսոյ վարդ մը բաւ է ինձ։

ՄԱՆՈՒԿ ԵԼՄԱՍԵԱՆ

ԳՈՂԹՆԻ ԻՆԱՐԿ

Թէ Հայրենեաց պսակադիր,
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից Թո՛ղ դան անմահ հազիք,
Հայոց քաջեր պսակել։
Մասեաց գագաթն Թո՛ղ դան բաժին
Երկնից դունդ դունդ հրեշտակներ.
Աստուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւն հոտոտել։
Փախէք, ամպեր, Շաւարշանէն,
Այլ մի՛ ցօղէք ձեր ցօղեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնէն։
Ես կը ծլին և կը ծաղկին,
Այս դաշտին մէջ ո՛չ խոտ վարդ։
Այլ վարդանայ ընկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ։
Բանդակագործ քաջ եղիչէն,
Գրիչ ի ձեռին գայ յԱրտազ.
Զաիէ, ձեռէ, գրէ, դրօշմէ,
կեանք, մահ, հաւատք վարդանայ։
Ո՛հ, վարդանայ անուան արժան
Մասիս կանգնի մահարձան.
Մենաստաններ խաչն ի գլխէդ,
Աւետարան սուրբ հաւատ։
Ծագէ արեւ քոյդ ճառագայթ,
Խաղաց լեռնէն, մութ խորչէն.
Այն տեղ ընկաւ քաջ Համայակ,
Այնտեղ պահկեր նահատակ։
Լուսին, լուսին, աչօքդ անքուն,
Պահէ՛ Հայոց ոսկորներ։

Եւ Մայիսի գուարթ ցօղով
Ցօղէ՛ անոնց չիրիմներ։

Արծուիք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլ՝ ամրան հիւր,
Դուք հակեցէք այս աչխարհին,
Ժառանգեցէք Հայոց աուն։

Մոխիրներու վրայ նստէ՛ք.
Ա՛ երակներ չինէ՛ք քոյն.
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչեւ Հայոց գայ գարուն։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ

ՀԱՑ ՔԱՋՈՐԴԻ

Ապառաժուտ լերան մը կող
Ցեցեալ ի քար դերեզմանի՝
Աչք մերթ յերկինս և մերթ յերկիր
Յարատիչազեղ կայր պատանի։

Ո՛վ դու որդիդ լերանց, հովտաց,
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած։

Կ՛ուզե՞ս որ մեծ վոխորկեալ ծով
Մատուցանէ քեզ մխիթար,
Կոհակաշարժ իւր լարերով
Երգեալ ի չուքն մրրկավար։

Ո՛վ դու որդիդ... և այլն։

Կ՛ուզե՞ս որ քեզ ահեղաչուք
Ինդայ կամարն ատեղց անթիւ,
Եւ բնութիւն պայծառ զարդուք
Փայփայ ծաղկամբ և զեփիւռիւ։

Ո՛վ դու որդիդ... և այլն։

Կամ փափկագոյն այլ սփոփանք
Միթէ կ՛ուզե՞ս մօր քաղցուենի
Ու սիրտհուոյ անոյչ գգուանք
Որ քու կսկիծդ փարատի։

Դեռ ի՞նչ կ՛ուզես, ո՛հ, մի՛ ծածկեր...
— Կ՛ուզեմ վառօթ և գնտակներ։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԳ

Ալ ու ալուան ես գառէ,
Կարմիր լալա ես գարէ,
Ինձ ասա՛ քեզի մատաղ,
Իչլէկդ ո՞վ է կարէ։

Աղբերճան, ճան ֆէտա,
Դուն արի պէ կիւմանս։

Ջեռքդ առել ես թիւֆանք,
Տուչմանի դէմ ես կանգնէ,
Կոլորակ բարակ մէջքդ
Փամփուչտներով ես ծածկէ։

Աղբերճան, ճան ֆէտա, ալէն։

Մէջքդ կապել ես խանչալ,
Տօսթին նախշած է խալ խալ,
Կոտիկդ խանչարին մատաղ,
Կերածդ կաթը քեզ հալալ։
Ահեղ պէս կանգնել ես,
Պեխերդ ոլորել ես,
Սեւ ու թուխ պեխիդ մատաղ,
Բաղթանակը տարել ես։

Աղբերճան, ճան ֆէտա, ալէն։

ԱՌ ՀԱՑԱՍՏԱՆ

Ա՜խ, Հայաստան, Հայաստան,
Ընդէ՞ր կորուսեր տէրըդ,
Եղեր այլոց ապաստան,
Թառամեց վարդ պատկերդ։

Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
Ո՛չ վանքերիդ պէս վանքեր,
Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
Ոչ հանքերիդ պէս հանքեր։

Հողըդ պտղաբեր՝ ազնիւ,
Բարերդ ողջ ակունք էին,
Գետերդ լիքն անթիւ,
Կարմրախայտ ձկունք էին։

Լերինքըդ ծաղիկ հագած,
Իւր հարսնացեալ ծրերդ,
Եղջերուըդ վաստակած,
Ի՞նչ չահ որ չունիս արտերդ։

Այգեացդ ամէն մէկըն,
Իր դրախտ եղեմական,
Բայց անբաղդութեան ատկըն,
Խլեաց լարըդ կենսական։

Թո՛ղ թշնամիք քներկըրին,
Մեր աչաց արտասուքով,
Ծուսամ, երկար չի մնան
Նըբանք էլ ուրախ հոգով։

Աստուած ամենազէտ է,
Անսահման արդարատու,
Անաչառութեամբ դիտէ,
Լաւին լաւ տալ, վատին վատ։

Ես եմ Մեյաթի կինըն,
Մատաթեան տոհմի Ոսկին,
Հայրենեաց կաթոգինըն,
Հաւատացէ՛ք իմ խօսքին։

ԴԷՊԻ ԿՈՒԻ

Արի՛ք, Հայեր, լուծը թօթուենք
Մեր դարեւոր դուշմանին,
Բռնութեան դէմ կռիւ մղենք
Եւ պիտ յաղթենք ամենքին։

Ժամանակ է որ համարձակ
Մարտի դաշտը մենք չտապենք,
Ազատութեան յաղթանակ
Մեր արիւնովը գտնենք։

Օ՜ն, արդ ի զէն, յառաջ ի կռիւ։

Թո՛ղ ամէն մարդ սուր հրացան
Ընկեր առնէ իր անձին,
Թո՛ղ մեր ձեռքին գոռայ Պէրտան,
Եւ վատ խուժեր սատակին։

Մենք ալ ունինք սիրտ մը ազատ,
Թո՛ղ այդ գիտնայ մեր թշնամին.
Մենք ալ կրնանք կռուիլ հպարտ,
Կռուելով մինչ չունչ վերջին։

Օ՜ն, արդ ի զէն, յառաջ ի կռիւ։

Ա՜լ բաւ է որ այսքան տարի
Գերի, ստրուկ մնանք մենք.
Զէնքը առնենք, Հայ քաջերի
Մահուան վրէժը լուծենք մենք։

Ազատութեան դրօշակին տակ
Երբ որ պինուած խմբուինք,
Մեր կեանք ազատ եւ համարձակ
Վարել պիտի յաջողինք։

Ժամանակն է որ համարձակ
Մարտի դաշտը մենք չտապենք.
Ազատութեան յաղթանակ
Մեր արիւնովը գտնենք։

Օ՜ն, արդ ի զէն, յառաջ ի կռիւ։

ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ՍԱՑՈՒ ՀԻՒ

Արի՛ք, սանուհիք, որդիք վասվաճեան,
Պարեմք խանդագին, սիրով Հայկազեան,
Գգուեմք համբուրիւ, իրարասիրելով,
Ուխտեմք Հայ ապրիլ, Հայուն վեհ սրտով։
Օ՜ն, տանք ձեռք ձեռքի,
Երգենք անուշիկ,
Օ՜ն, տանք սրտերնիս,
Մեր ազգին քաղցրիկ։
Զըլլանք օտարին, գործիք ծաղրելի,
կամ որս անպիտան, բարքով զզուելի,
Թող մեր մանեակներ չըլլան ոսկեզօծ,
Թո՛ղ միշտ ճակատնիս ունայն արբազօծ։
Օ՜ն, տանք ձեռք ձեռքի, ևլն։
Մերժենք չարասիրտ դաժան աղջիկները,
Որք չեն իսկապէս Հայոց զաւակներ,
Օ՜ն, բայց թո՛ղ երթան վատթար սերունդներ,
Հայուն նախատինք կամ կեղտ բերողներ։
Օ՜ն, տանք ձեռք ձեռքի, ևն։
Վառենք սրտերնիս Հայկայ սուրբ սիրով,
Չանանք վարդանայ նմանիլ հոգւով,
Սիրենք զՏրդատ, զՎռթար եւ Տիրան,
Աստեղք զՎռանէ, զՎրշակ եւ Մհերան։
Օ՜ն, տանք ձեռք ձեռքի, ևն։

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է պարհնելու.
Երթամ ախոռ, գոմշուկներս լծեմ գութան վարելու։
Դէ՛հ գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը երթանք աշխատինք,
Հարկ ու խարճին վատէն մօտ է, վօթենք արուն ու քրտինք,

Հայի գութան, Հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
Ո՞վ քեզ միմով կը տանջուի, որի՞ն դուն կուշտ հաց կուտաս,
Այն օր երբ քեզ ձեռքս առի, ազատ օրս կորուցի,
Անվախ սիրտս վհատեցաւ, հոգիս վտին մատնեցի,

Բա՛ւէ գութան, մեր տանջանքը՝ համբերութիւնն վեջ ունի։
Դուն տեսա՞ր որ մեր տուչմանը ամօթ, խելք ու գութ չունի,
Արի՛, փրչրեմ ես քու խոփը, տանք դարբնին կռելու,
Կռենք-կոփենք սուր ու սուսեր, տուչմանի դէմ կռուելու։
Եղբայրք, Հայեր, առէք խոփը՝ տուէք դարբնին կըռելու,
Կռել կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու։

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ԵՐԳ, ՌՈՊԵՐԻ ՍՏԱՋԱԿԱՊԵՏ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ

Արի՛ք ընկերք քաջակորով,
Ի պատերազմ դիմենք փութով,
Մեր սկզբունքն է պաշտպանել,
Ազատութեան դրկանք վանել։

Անգութ ապաստան,
Սրդար դատաստան
Մեր արիւնային
կայ վասն թչուառին։

Փութամբ հապճեպ ի զէն ի սուր,
Ըզբռնութիւն տալ առաքուր.
Դոքա ունին թէեւ սուր, զէն,
Այլ իրաւանց սուրբ պաշտպան չեն։

Օ՜ն մենք ի ճակատ,
Զիք ի մեզ արատ,
Զիցէ՞ եւ բաւ,
Նաբէութիւն դաւ։

ՀԱՑՐԵՆԻՔՍ ՀԵՌՈՒՆ

Ալիք Սեւ Ծովուն տարին պիս հեռուն,
Սիրտս խոցոտած, դէմքս միչտ տխրած.
Աչերս մոլորուն մտքով չատ հեռուն.
Հայրենեաց սիրով ազգային ոգւով.
Հոգիս զպայուն, Հայրենիքս հեռուն.
Անդադար կ'ողբամ ես իմ վատ բախտը.
Անիծեալ բաղդը նետեց չատ հեռուն,
Հոսանք Հայերուս Հայկայ սերունդին.
Նետեց Պուլկարիա, Հայաստանն հեռու.
Մենք հոս միչտ ազատ կ'օրհնեմք Պուլկարիան.
Աւա՛ղ որ եղբարք գերի են հեռու.
Վառնան հիւրընկալ Հայ գաղթականաց.
Հանգարտ կը ննջենք, երազենք հեռուն.
Հայաստանն աւեր Հայոց կոտրած.
Մեզ մահ կը սպառնան խուժերը հեռուն,
Ծանր չղթաներ ձեռքերն ու ոտքեր.
Հայ եղբայրներուս բանտերը հեռուն.
Երէկ մնծատուն այսօր ալ աղքատ,
Քանդի կողոպտեց վատ խուժը հեռուն,
Ջոնեցինք ազգին մեր սիրտն ու քաղաք,
Չ'յուսահատինք, գիմենք մենք հեռուն,
Ուներնք բազուկներ կորովի հանճար,
Անվհատ Հայեր, գործող միչտ հեռուն.
Երէկ վաճառական, այսօր ներկարար,
Հոգ չէ, վաղ կ'ըլլանք ժէնեբալ հեռուն,
Հայոց երկրի մէջ Հայ ազգի համար,
Օտար երկիրը ձգենք մենք հեռուն.
Երթանք Հայրենիք, ըլլանք պարզ գիւղաւոր։

Ց. ԲԱԳՐԱՏ

ՉԼՑԹՈՒՆԵՑԻ ՀԱՑՈՒՀԻՆ

Արի՛, եղբա՛յր, առ քո զէնքերը,
Աչխարհ հանուր են թօթափերը
Անտանելի լուծ վաւերի,
Վրէժ գոռան հին գարերի։
Արի՛, եղբայր, առ քո դրօչակ
Իբր Հայրենեաց արի մշակ,
Որ քո յոյսերը պսակուին,
Եւ եղբայրներդ ալ փրկուին։
Արի՛, եղբայր, մի՛ դանդաղիր,
Ձո քաջերի գլուխն անցիր,
Ալ՛ բաւ հնձեց մեր հայրենիք,
Ալ՛ բաւ կրեց աւեն չարիք։
Արի՛, եղբայր, ի՞նչու այդպէս,
Տրտում, տխուր վշտով լի ես,
Մեր փրկութեան նուիրական
Սուր զէնքերն են միայն պաշտպան։
Արի՛, եղբայր, կոուէ գերդ քաջ,
Երկնաւորին հակէ քեզ աջ,
Գեղ պահապան Ճիսուսի խաչ,
Եկ՛, տամ համբոյր ճակտիդ, ո՛ քաջ։

ԱԼԻՍԻ ՈՐԴԻՆ

ՄԱՑՐԸ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Այն քաջ մարդու չապիկն է,
Որ իմ ձեռքովս կարեցի.
Սրիւնոտ է, կարմիր ներկած,
Արտասուքով լուացի։
Դա չապիկն է այն քաջ մարդուն,
Որ քեզի հայր կոչում է.

Վրէժ վրէժ չար ոսոխից
Գերեզմանից կանչում է։

Դէհ մնծացի, իմ նազելի,
Ջարի արիւնը խմէ.
Քո մօր սրտին միխիթարանք,
Ուրախութիւն պարգեւէ։

ԱՌ ՍԶԳՈՒ

Ապր իմ, որքա՜ն նկուն մնաս,
Սիրտս քեզնից չի զատուի,
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզնից չի զատուի։

Քեզ չեմ մոռնայ յաւիտեան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ դրախտն ալ ինձի տան,
Սիրտս քեզնից չի զատուի։

Քեզանով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի, իմ անուշիկ,
Ծոցիդ մէջը հանդչիմ մայրիկ,
Սիրտս քեզնից չի զատուի։

Ջիւանին եմ, քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրտս քեզնից չի զատուի։

ԵՐԳ

Ա՛խ թէ երկինք գէթ մի՛ վայրկեան
Լսէր կրծկիս հառաչանք,
Փայլէր լինէ սուրբ ազատութեան
Վառ, կենսատու արեգակ։

Ա՛խ թէ և ես կարենայի,
Որպէս արծիւ, անարգել
Գէթ մի՛ րոպէ ազատ կեանքի
Ազատ օդում սաւառնել։

Որպիսի՛ ջերմ լի փափաքով
Կարօտ պայծառ երկնքի,
Կը թռչէի ես խնդալով
Դէպ հայրենիքս անձկալի։

Դէպ այն երկիր նուիրական
Ուր սահեցան անխռով,
Զքնաղ օրերն իմ մանկութեան
Լի դրախտային սուրբ սիրով։

Դէպ այն երկիր երջանկալից,
Ուր մայրիկս նազելի,
Իւր ջերմ գրկում պարգեւեց ինձ
Եւ կեանք, և՛ սէր, և՛ հոգի։

Ա. ՇԱՏՈՒԲԵԱՆ

Սիրուն Ծիծեռնակ

Բարով ես եկել, ծիծեռնա՛կ սիրուն,
Ի՞նչ լուր ես բերել պանդուխտ Հայերուն,
Գիտես որ մենք միշտ աչքներս յառած,
Քեզ ենք սպասում ամէն մի գարուն։

Գլուխս ծռած խեղճ ու հեզ,
Աղաչում եմ ահա՛ քեզ,
Եկել ես հայրենիքից,
Ի՞նչ ասելիս բերիր մեզ։
Եկել ես հիւր, ասա՛ մէկ լուր,
Մի՛ սպասէ զուր.
Լեզուովդ սուր ասելիս տուր,
Մեզ ուրախացու՛ր։

Ի՞նչ լուր ես բերել, սիրուն ծիծեռնա՛կ,
Դու հայրենիքից աստ եկած թռչնակ,
Ասա՛. ի՞նչպէս է իմ հայրենի տունը,
Խօսիր ինձ հետ ազատ համարձակ։

Ասա՛ մի բան լսանամ,
Որ քեզանից գոհանամ.
Ուրախացու՛ր սիրտս իմ,
Տարակուսուած չմնամ։
Դու սլացար սարէ սար,
Մինչ այստեղ հասար,
Դու ինձ համար բարով եկար,
Ասա՛ մի՛ խաբար։

Կոչ Սիութեան

Ապերախտ ենք մենք Հայերըս,
Քեզի մոռացանք, հայրենի՛ք,
Մեր սերունդը մեր եռեւից
Պիտի կարդայ նախատինք։

Եգեմական դրախտ էիր,
Դու մեզ համար Հայաստան,
Մի թէ հիմա դժոխք դառա՞ր
Դու, սիրելի բուրաստան։

Սեփական չահերի համար
Մոռացել ենք ազգութիւն,
Եղբայր եղբօր դէմ ենք կանգնել,
Այդպէ՞ս է արդարութիւն։

Գերութիւնը մի թէ մեզի՞
Վիճակուած է անպայման.
Մինչեւ ե՞րբ մենք ման ալիտի գանք
Ասպէս խեղճ թափառական։

Երդիչ մինջաղը լանդրում է,
կապեցի՛ք սէր միութիւն,
Միայն սիրով պիտի գտնենք
Խեղճ Հայերըս վերկոխին։

ՈՂՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա՛խ վասպուրական, տխուր Հայաստան,
Սնթիւ հերոսներ քեզ մէջ ժողվեցան,
Սհեղ կռուի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան։

Ա՛խ, բաւ է, Հայեր, միշտ այսպէս գերի
Թողնել հայրենիք, դիմել օտարին։
Օտար սիրում է մեզի իբրեւ հիւրի,
Եւ մեր հացն ու ջուր դարձում է աղի։

Ա՛խ, բաւ է, Հայեր ձեր անմիութիւն,
Պատիւ չի բերեր մեր Հայ ազգութեան։
Պէտք է չուտ գտնել միութեան դարման,
Որով ազատենք մեր Մայր Հայաստան։

Պէտք է միանալ ամբողջ Հայաստան,
Թո՛ղ տեսնայ Եւրոպ ու Ամերիկան։
Պէտք է մենք լուծենք վրէժ Հայկական,
Քանի այսպէս է վատի դատաստան։

Վան փոքրիկ քաղաք իւր գաւառներով,
Լեցուեցաւ դիակ հարիւր հազարով,
Ներկուեցաւ դաշտեր Հայու արիւնով,
Զայն տուին երկինք ամպերն աստղեր ով։

Տեսէ՛ք թշնամին ի՛նչքան անամօթ,
Քաշեց մեր վրայ սուր ու թնդանօթ,
Բայց երբ չդիմացաւ հայկազեան սուրբը,
Խաւարը պատեց թշնամեաց սրտեր։

Ելէ՛ք, ընկերներ, առնենք հրացան,
Անգութ խուժերը նոր կատաղեցան,
Մեր Հայ եղբայրներ չըջապատուեցան,
Եւ մեր տուները հրոյ ճարակ դարձան։

Իմ վերջին համբոյր կուտամ ձեզ, Հայեր,
Զըլլայ թէ մոռնաք դուք իմ պատուէրները,
Եւ Հայաստանի անմեղ մանուկները,
Շուտով լուծեցէ՛ք Հայու վրէժները։

Ս. ԹԱՄԱԿՈՉԵԱՆ

ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԵՐԳԸ

Ջէնքերս տո՛ւր մայրիկս, սուրերս տո՛ւր, քոյրիկս·
Թէ որ ազգիս չ'զոհուեմ, ապա ինչո՞ւ ծնար զիս։

Աստւօտ արշալուսին չորս կողմերս պատեցին,
Չորս դին չորս հազար զօրքեր, չորս հազար թշնամիներ։

Ազատութեան վառ սէրը ինձ հանել է լեռները,
Վառ թշնամւոյ դէմ կռուելու՝ Հայաստանը փրկելու։

Լեռն սուրըդ քաշեցիր, վրէժ առնել ուզեցիր,
Երբոր գնդակը դիպաւ՝ «ա՛խ Հայաստան» գոչեցիր։

Մայր անունս Արամեան, մականունս Կորկոտեան,
Երբոր բանակից ազատուեմ, դարձեալ խմբեր կը կազմեմ։

ԹՂԹԱՅ

Ազատութեան քաջ զինուորը պատանին
Մութ բանտի մէջ մենակ նստած է հիմա,
Եւ չարժելով անիծում է չղթային,
Որ ճնշում է ձեռն ու ոտն անխնայ.
«Բաջ պատանի, ասաց չղթան ո՛հ, չարժիր,
Շարժի՛ր, փչրի՛ր լինձ, միայն մի՛ անիծիր.
Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնըս անէծք է,
կայծակի պէս՝ բռնաւորին կը զարկէ»։

«Գիտեմ, դուն լինձ հիմա էլ չես ճանաչում,
Ես իբրեւ սուր փայլում էի քո ձեռքին,
Ազատութեան պատերազմի դաշտերում,
Հաւատարիմ ծառայելով սուրբ գործին։
Աւա՛ղ, հիմա այս ի՞նչ տեղ ենք մենք, ա՛խ, ո՞ւր,
Անբա՛խտ տղայ եւ ես նոյնպէս անբա՛ղդ սուր.
Շարժի՛ր, չարժի՛ր չառաչիւնըս անէծք է, ևն...։

«Աւա՛ղ, լինձնիկ, փայլուն սրիկ կռեցին,
Կոպիտ չղթայ եւ մի գործիք բռնութեան,
Ազատութեան պաշտպանին, իմ աջակցին,
Ինքըս ահա՝ չղթայում եմ յափտեան։
Այս ժանգը, որ չուրջ պատում է լինձ հիմայ,
Իմ ամօթի եւ բարկութեան գոյնն է դա։
Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնըս անէծք է, ևն...։

(թարգմ.) Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԵՐԳ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ,
Ձայն ողջունելու ելէ՛ք, Հայ զաւակք,
Անցան սեւ օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բաղդին ծագի առաւօտ.
Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց,
Սիրոյ դրօշակով եկաւ զարդարուած։

Որ փայլի արեւ սուրբ Հայաստանի,
Եւ Հայ ազգութիւնն փառօք վերածնի.
Կեցցեն անձնուէր որդիք հայկազունք,
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն։

Կաթիլ մ'արտասուք հեղունք աննախանձ,
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց,
Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ՝
Ի նպաստ Ազգիս յուսոյն ապագայ.
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,
Կրօնի հայրենեաց և Ազգի սիրուն։
Որ փայլի արև, ևն։

Հայեր, միանանք, կ'ընենք առաքուր,
Ամէն ուժ և նենգ, պարխաւներ ամուր.
Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ միութիւն,
Ի Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն.
Հապա՛ իրաւասինք կուրծք առնք անվեհեր,
Ընկճենք, կործանենք ամէն արգելքներ։
Որ փայլի արեւ, ևն։

Ունինք սիրտ արի, ոգի եռանդուն,
Ժառանգ մնացած բազուկ աննկուն·
Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք,
Ամէն նախատինք, օ՛ն փութով ջընջենք·
Անմահ հայութեան կանդնենք յաղթանակ,
Հայոց մօր ճակտին հիւսենք պերճ պսակ։

Որ փայլի արեւ, եւն։

Ս.Պ. Պ. Փափազեան

ԵՐԳ ՄՈՆԹՈՆԻ

Ընկերք, յաղթութեան ժամն է արդ հասեր,
Մեզ կ՝սպասեն փառք, առնուենք քաջալեր,
Արեան ծարաւի մեր հառաւ սուսեր,
Կենաց թշնամւոյն թո՛ղ կարեն թևեր։

Ո՛հ, մեր ախոյեան Թոզին ի տագնապ,
Զըլլանք անարեկ մենք ի ղէն ըլտապ,
Փութանք արշաւել· այր՝մի՛ վեհերոտ,
Մի,՛օ՛ն անդր ի բաց՝ սիրտք վատ և երկչոտ։

Ի ղէն, ի ղէն, օն անդր ի բաց՝
Սիրտք վատ և երկչոտ։

ՋԻՆՈՒՈՐԻ ԵՐԳԸ

Թռիր իմ նժոյգ, սլացի՛ր չուտով,
Տա՛ր ինձ ցանկալի կռուի փոթորիկ·
Կռուի մէջ միայն ես արեան գնով,
Կ՝փրկեմ իմ խեղճ տարուկ հայրենիք։

Տար ինձ այն աշխարհ—անցեալում հզօր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ուր, աւա՛ղ, դժբախտ եղբարքս այսօր,
Իւր կեանքն է ողբում օտարին գերի···

Անցան չա՛տ դարեր, անցան չատ տարիք,
Ազգս չա՛տ ապրեց քաղցրիկ յոյսերով,
Բայց նորան երբեք չժպտաց երկինք,
Ջահեսաւ կեանք խաղաղ, անվրդով։

Մինչ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,
Երկար սպասեց նա կեանքի գարնան,
Բայց նորա առջեւ ոսոխ թշնամին,
Իւր սրով փորեց կեանքի գերեզման···

Դէ՛հ, թռի՛ր, նժոյգ, սլացիր չուտով,
Տար ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտումն է ջինուոր իւր արեան գնով,
Ազգին պարգեւում յաղթութեան դափնիք։

Ա. Ծատուրեան

ՄՇԵՑՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Երբոր մայրը երկունքով
Աչխարհ բերէ երախայ,
Հայրը որդուն մի սըրած
Պիտի դաչոյն տայ ընծայ։

Երբ երախան մեծանայ,
Խաղալիքներու փոխան
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրացան։

Երբոր տըղին վարժատուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ սուր խաղցնել և ապա
Պիտ սովրեցնենք կարդալու։

Կարդալ, պրեղ լաւ բան է···
Բայց որ հասաւ քննութիւն,
Աչակերտին հարցուցէք—
Վոթեվ գիտէ՞ նա արիւն։

Լոկ դուք այսպէս յուսացէք
Փրկել խեղճուկ Հայաստան,
Ազատ, անկախ մարդ երբեք
Լինելու չէ մուրացկան։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԹԷ ՏԱՑԻՆ ԻՆԾԻ

Թէ տային ինծի
Թագ և ադամանդ գաւազան,
Բեզ զայն ձօնէի,
Թագուհեաց դչխո՛յ Հայաստան։

Թէ տային ինծի
Միրանի չոզ չոզ պատմուճան,
Քո յուս ձըդէի,
Ո՛վ իմ մայր թշուառ Հայաստան։

Թէ տային ինծի
Հուր, բոց իմ աւուրց Պարմանեան,
Բեզ պարգեւէի
Զաւիւն իմ և խանդ, Հայաստան։

Թէ տային ինծի
Դարուց հոյլ 'ի հոյլ չըրջան,
Սիրով քեզ տայի՝
Իմ կեանքն ու հոգին, Հայաստան։

Թէ տային ինծի
Սիրտ և սէր կուսի չուչան,
Ես քեզ ընտրէի
Սրտիս միակ սէր Հայաստան։

Թէ տային ինծի
Պըսակ յիմ ճակատ մարգարտեան,
Զաչքիդ ընտրէի,
Աբտաւուաց մի չիթ, Հայաստան։

Թէ տային ինծի
Գոռ ազատութիւն անսահման,
Ես վերընտրէի
Քո վեհ գերութիւն, Հայաստան։

Թէ տային ինձի
Հայրենիք՝ չըքեղ Եւրոպան,
Ես քեզ խնդրէի
Բոլոր ցաւերուս, Հայաստան։
Թէ տային ինձի
Սիրտըս իմ ընտրել օթեւան,
Ջաւերսդ ասէին
Ինձ արքայութիւն, Հայաստան։
Թէ տային ինձի
Հրեշտակի քընար բոցագեան,
Ես քե՛զ կ՚երգէի
Բոլոր իմ չնչով, Հայաստան։

Խ· Ե· ՆԱՐՊԷՑ

ՋԷՑԹՈՒՆ ԱՆԿԱԽ

Ջէյթո՛ւն, անկախ զու աչխարհիկ,
Քու սար ու ձոր են անառիկ·
Ամէն մի քար և անկիւնդ,
Շաղախել է քո արիւնդ։

Հէյլէ, հէյլէ, հէյլէ, հէյլէ, հէյլէ։

Դեռ եւս քո զօրեղ բազկում
Ութբինեաց երկիրն է չարժուած·
Ցիչատակ նախնի դիւցազանց,
Պատկերն է քո քաջ զաւակաց։

Հէյլէ, հէյլէ · · · · · · · · ·

Մզրախն է ունեցած կայքդ,
Քո ապրուստն է և քո կայքն·

Բռնութեան լուծը վատ մարդու,
Իդ զէնքով ես թօթափել զու։

Հէյլէ, հէյլէ· · · · · · · ·

Կեցցէ Հայի սուրբ հաւատը,
Հայ պահել է իր ժողովուրդը,
Ո՛չ մի կրօն աչխարհիս վերայ,
Զունի ազատ ոգին սորա։

Հէյլէ, հէյլէ · · · · · · · · ·

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր քաջազանց, քանի՛ սուգ աչեր
Ցօղեցիր լալեօք քու քաղցրիկ հողե՛ր,
Քանի՛ լուռ հառաչք սըրտից խորերէն,
Անձկաւ քեզ թռան օտարաց երկրէն։
Դառն է, ո՛հ, զաւակց մօր գրկէն կորզիլ,
Եւ դառնագոյն՝ մօր անզաւակ ծխրիլ,
Այլ այն ձեռքն որ քեզ տապալեց գահէդ,
Կարող է գըլխով կանգնել անկումէդ։
Քամեցիր լըռիկ իսպառ զառն բաժակ,
Լրացաւ երկնից կէտ ցասման վրիժակ·
Տե՛ս սիրուն որդիքդ ձեռք ձեռքի տուած,
Գնան յաւաչաքայլ ուժով օրինաց։
Համբոյր սուրբ՝ի չուրթն, սէր վառ՝ի սըրտի,
Դիմեն սփոփել քեզ ո՛չ յուսով անուտի,
Թէ սոյն ձեռքն որ զքեզ տապալեց գահէդ,
Կարող է գըլխով կանգնել անկումէդ։

Թ· ՆԱԶԱՐԵԱՆ

ԿՈՉ

Եղբարք, յառաջ սըլանանք, քաջ,
Դիմաւորենք թշնամին,
Մեր սուինով միշտ աննուաճ,
Մահ տարածենք ահին պին։

Ֆէտայի ենք լի վրէժով,
Հայրենիքի ջերմ պաշտպան,
Ազատութիւն մեր արիւնով
Պիտի գտնէ Հայաստան։

Յառաջ նետուինք ու քաջ,
կըռուինք դռոանք ուժգին,
կեցցէ՛, կեցցէ՛ կեցցէ
Ձէնք ու կռիւ։

Դաշնակցական ենք մենք լի վրէժով,
Հայրենիքի ջերմ պաշտպան,
Ազատութիւն մեր արիւնով
Պիտի գտնէ Հայաստան։

Ալ հերիք մնանք, թշնամւոյն
կուրծք տանք,
կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛,
Դաշնակցականներ, դաշնակցականներ,
Ձէն ելէ՛ք, խմբուեցէ՛ք,
կռուի միշտ պատրաստ։

Գործը կ՚ընէ դաշափարը միշտ յաղթական՝,
Գործի մարդիկ, կռուի մարդիկ, թող ոտքի ելլեն.
Քաջ կռուինք, պիտի յաղթենք անկասկած.
Մեռնինք ա՛լ՝ չենք պարտուած,
Ապագան մերն է միշտ անկասկած։

ԳԵՐԵԶՄԱՆՔ ՀԱՅՈՑ

Լուռ և տխուր դաչտեր գեղեցիկ
Քաջ սրերոյն աճիւններով զեռաշեղ,
Ուր սուրբ չիրմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ,
Զարմանազան հազար ծաղիկ գունագեղ։

Ա՛ւա՛ղ Հայոց արեւուն,
Ա՛ւա՛ղ Հայոց քաջերուն.
Որոց կրեմք մեք արիւն,
Օրհնեալ է Հայք, ձեր անուն։

Ո՛վ լեռ նախնեաց, կորիճ եղբարց Ս. չիրիմ,
Ձայն մը ուսէք, որ մեր արտասուքը ցամքի,
Վանկ մը հերիք ցաւած սրտիցս որ բերկրիմք
Մեզ ժպտեցէք չիչեալ աստ հայրենի։

Ա՛ւա՛ղ Հայոց, և այլն։

Քացէք քացէք մամռոտ սափորք սրբակիրք
Ցուցէք քաջացն ոսկերոտիքն համբուրեմք,
Եւ համբուրէ մեր և սգաւոր հայրենիք,
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երգենք։

Ա՛ւաղ Հայոց, և այլն։

Գետք հայրենիք, քանի՛ լ ձեզ կան ալիք,
Եւ դուն, լուսին քանի կանդեղդ վառ մնայ,
Դուն ալ սոխակ, քանի ունիս դայլայլիկ,
Երգեցէք ղՀայն, լըսեն սերունդք ապագայ։

Ա՛ւա՛ղ Հայոց, և՛ն.։

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԴՈՒՄԸ

Երդուում եմ ահա այս սուրբ հրացանով,
Որ ծուխ է տալիս ու հանում բոմբիւն,
Նրա մահաւիթ հրաչէջ գնդակով,
Որ մահացնում է մեր պիղծ թշնամուն։

Երդուում եմ սրտիս փայլուն պողպատ,
Մխած երկնքի հրով, կայծակով,
Որին ուխտել եմ չբերել արատ,
Յաղուրդ տալ նրան տուչմնի արիւնով։

Երդուում եմ ահա (սուրբ դրօշակով)
Որ փողփողում է մեր գնդի առաջ,
Որի վհատուած ծալքերի միջով
Ժպտում է մեզի, արէք, քաջք, առաջ։

Երդման վկայ թող լինի հայրենիք,
Որին զինուորն կեանք է պարգեւում
Որին ազատութեան անձնուէր հերոսք
Իրենց արիւնովն են ոռոգել։

Երդուում եմ կռուել անվեհեր,
Յաղթել կամ ընկնել փառաւոր մահով,
Երդուում եմ մեռնել, չը լինել պարտաւիկ,
Զապրել վատութեամբ, չապրել ամօթով։

ԵՐԳ

ԱՂԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Երգ սիրոյ, երգ Հայրենի, քեզ կ'ուզուի, Հայաստա՛ն,
Հո՛ն ուր Հայք ամէն գիւղ մի հաւաքուեր՝ կը խայտան,
Այն երկնից դաստակերտ դուն անէծք հընդարեան,
Դարդուցաւ ըսե՛նք արդեօք՝ թէ մեր մեղաց չափ լըցան։

Զայն տո՛ւր, ըսէ՛, Հայաստան,
Նախնեաց մեր սուրբ օթեւան,
Մարդկութեան կրկին օրրան,
Վկայդ երկնից հաչտութեան։

Ծեր, տղայ, երիտասարդ, հարուստ, աղքատ, անխտի՛ր,
Օրհորդ մատաղերամ, ամենք անկեղծ անպատիր,
Ամենուն մի է արիւն, ամենքն ունին մէկ երկիր,
Երասխայ ձորն հաւքուած՝ կարծես թէ չեն տարագիր։

Զայն տուր, ըսէ···

Բայց՝ սիրո՞յ ըսենք արդեօք թէ՝ աչնանն հոգմոց պէս,
Մէկ մ'ասկէ, մէկ մ'ալ անկէ փչող կոյտ մ'է աս հանդէս,
Ո՛չ··· չէ՛· չէ՛, հայրենի սէրն է չարժառիթ պարզապէս,
Որ եղբայր եղբօր դիմած սուրբ սըրտով կուգան՝ ի տես։

Մխիթարուէ, Հայաստա՛ն,
Նախնեաց մեր սուրբ օթեւան,
Մարդկութեան կրկին օրրան,
Վկայդ երկնից հաչտութեան։

Նախնի՛ վեհք, գըլուխ բարձէք ձեր փոչիից տապանէն·
Ու տեսէք Հայերն ի՛նչպէս պիւրար կ'ողջունեն·
Դիւցազուն իրենց նախնեաց յիչատակաւ սիրտ ամէն,
Լըցեալ, ի սէր անբաժին եւ միութիւն սերտ կ'ուխտեն։

Հապա հրճո՛ւէ, Հայաստան,
Նախնեաց մեր սուրբ օճախան,
Մարդկութեան կրկին օրրան,
Վկայդ երկնից հաչուութեան։

Բարձրացան յերկինս ի վեր ձայն կռկռանաց Հայորդւոյն,
Բարձունքէն դիտեց տեսաւ աննման աչաց տէրն արքունն,
Ժպտեցաւ ղէպ ի երկիրն որ նախ օրրանն էր մարդուն,
Այցելուն անմիջապէս զրկեց սէրն իր զուարթուն։

Խայտա, խնդա՛, Հայաստան,
Նախնեաց մեր սուրբ օճախան,
Մարդկութեան կրկին օրրան,
Վկայդ երկնից հաչուութեան։

Ա. Ճէվահիրեան

ՄԱՀ ՊԱՆՏԽՏԻՆ

Մի՛ լայք, հա՛յր իմ ու մայրիկ,
Կոյս, մի՛ լար թէ երթամ
Բստար երկիր պանդխտիկ,
Այլ չուտով կու դառնամ։
Դառնամ առ քեզ Հայաստան
Եւ հովիտք ծաղկաւոյր,
Ո՛հ, մէկ առնէ սիրական
Տուր ինձ, մա՛յր, քու համբոյր։

Առաւ համբոյրն ու դնաց։
Այլ ի տար աչխարհին
Թռաւ արեւն իւր կենաց
Ի ծագիկ հասակին։
Լացէ՛ք, հայր իմ ու մայրիկ,
Լա՛ց, ո՛ կոյս, զի երթամ,
Բստար երկիր պանդխտիկ
Մեռանիմ ես անժամ։

Մ. Պէճիկթաչլեան

ԵՐԳ ԱՐՇԱԿԱՑ

Հապա՛ քաջազունք
Հայոց զաւակունք,
Առ՛ք ազեղունք
Ի մահ երագունք։
Անտառք սպասեն,
Կենդանիք սարսեն
Զինուց ի ձայնէն։
Շեչտակի նետեր
Թափեցէ՛ք, քաջե՛ր,
Գերես անվներ։
Վազեմք ուր վտանգ
Բայս մեր զբօսանք։
Որոց արչաւանք
Մարտից են կրթանք։
Երթամք գունդ ի գունդ
Բաղեղ և մկունդ,
Գուսպ սրատեսունդ
Շահիրեմք կենդանիս
Իբր զթշնամիս
Ի մեր հայրենիս։
Զի օր մ՛ալ նոյնպէս
Մարտին ի հանդէս
Զարնեմք մահազգեաց
Զոսոխս հայրենեաց
Եւ յաղթանակաւ,
Լցեալ աւարաւ,
Դառնամք քաջարչաւ,
Եւ ի մեր գաւիթք
Ծափ տան սիրելիք,
Պանծան հայրենիք։

Խ. Դալճեանեան

ՊԼՊՈՒԼՆ ԱԽԱՐԱՅՐԻ

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Ժամնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երդէ՛, պլպո՛ւլ կդ, երդէ՛ ի սարէդ,
Ջանմահ քաջքն Հայոց երդէ հոգւոյս հետ։
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիսա՛մեռ առաւ·
Ի խաչին Թեւէն Թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաչտ քաջին վարդանայ։
Պլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հա՛ պլպուլ մեր Աւարայրին
Եղիչեայ հոգեակն է քաջգրաղրուցիկ,
Որ զվարդան ի վարդն տեսնու կար հրիկ։
Ձմեռն յանապատ կու գայ գայ ի լաց,
ՑԱրտաձգ գայ գաշրուն ի Թուխ վարդենեաց,
Երգել ոչ կանչել չեղիչեին ձայն,
Թէ պատահանիկ մ՛արդեօք տայ վարդան։

Հ. Գ. Ալիշան

ՊԱՆՏԽՏԻ ԵՐԳ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու, Հայրենիք, քեզ յիշելով կ՛արտասուեմ։
Ձկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Ձիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ։
Օտար երկիր, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ, ինձի խաւար կը թուի։
Բնակարանս՝ տխուր պանդոկ օտարաց,
Օգս օտար, ջուրս օտար, օտար հաց։
Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն։
Սակայն ունիմ քովս Քիստս, փրկէ զիս·
Նա օտար չէ, նա իմն է, սիրէ զիս։

ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Եղբայր ենք մենք,
Հայ, Թուրք, Պուլկար, Ցոյն, Հրեայ,
Մէկ ամենուս քաղցր հայրենիք, — Թուրքիա՛ —
Թէև տարբեր լեզուներով կ՛երգենք մենք,
Իրարու ձեռք այսօր սիրով կը սեղմենք.
Եղբայր ենք մենք։

Եղբայր ենք մենք,
Թուրք, Հայ, Հրեայ, Ցոյն, Պուլկար,
Հերիք դիրար մենք ատելինք ընդ երկար,
Մէկ հօր որդիք ենք մենք, ծընած հաւասար·
Լեզու, կրօնք ըզմեզ բաժնել չեն կրնար։
Եղբայր ենք մենք։

Եղբայր ենք մենք,
Պուլկար, Թուրք, Հայ, Հրեայ, Ցոյն·
Նոյն երկինքին ներքեւ՝ չընչենք օդը նոյն,
Նոյն ւահիկը կը ծածանի մեր վերև,
Նոյն աստղիկը մեզ կ՛ողջունէ, նոյն արեւ,
Եղբայր ենք մենք։

Եղբայր ենք մենք
Ցոյն, Հայ, Հրեայ, Պուլկար, Թուրք։
Թող բորբոքի մեր մէջ ընդ միշտ նոյն սուրբ հուրք,
— « Մէկտեղ ապրիլ, գործել՝ առանց նախանձի,
Միշտ վեր բռնել դրօշն և անունն Օսմանցի,
Եղբայր ենք մենք։

Եղբայր ենք մենք,
Հրեայ, Պուլկար, Ցոյն, Թուրք, Հայ,
Ըզմեզ բաժնել չանացողին գլխուն վա՛յ···
Մէկ սիրտ, մէկ կամք, մէկ չունչ ու մէկ նպատակ,
Բաղցր Հայրենեաց սիրոյն ըլլալ նահատակ,
Եղբայր ենք մենք։

Ա· Կ· ԿԻԼԻՊԻՆԿԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Եթէ կամիք փրկել թշուառ Հայրենիք
Նախ պիտ կապենք զիրար մեր սիրտ ու հոգիք,
Եթէ կամիք մեր անցեալ փառքը գտնել,
Հարկաւոր չէ կուսակցութեան բաժնուել։

Արի՛ք, եղբայրք, միանանք,
Բաւ համարենք մեր տանջանք,
Ի սէր ճնշուած Հայ ազգին
Գործ դնենք մեր ճիպ ու ջանք։

Մենք հնչակեան եղբայրք, դուք Դաշնակցական,
Մենք երկուքս ալ կուլանք վիշտը Հայկական,
Արի՛ք, վճռենք, հոգւով սրտով միանանք,
Ջեռք ձեռքի տանք, ապա գործենք արյաւանք։

Արի՛ք, եղբայրք, միանանք, ևն։

Մի միութիւն և մի վսեմ գաղափար
Մեզ կ'սպասէ անհամբեր ու անդադար·
Ոչխարե՛նք, եղբարք, կազմենք մեր սուրբ միութիւն,
Միութիւնով պէտք է գտնենք փրկութիւն։

Արի՛ք, եղբայք, միանանք, ևն։

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին,
Որ մեր տներ իրանց ձեռքով քանդեցին·
Օտարներին սուտ փառքերէն չլացան,
Մեզ մատնեցին մինչև այժմ գերութեան։

Արի՛ք, եղբայրք, միանանք, ևն։

ԿԵՑՑԷ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ

Եւ ես երբեմն երգում էի,
Անհոգ քնարիս լարերով,
Գեղեցկութիւն միայն սէրն,
Վառուած նորա յուզմունքով։

Եւ իմ Մուսան ինքնահաւան,
Կամէր այդպէս ինձ պահել,
Եւ միշտ երազ, ցնորք, քաղցրութիւն,
Հոգուս առջեւ ժողովել։

Ես զօրացայ, խորտակեցի,
Այդ մուսայի քնութիւն,
Եւ սերտ սիրով ողջունեցի,
Քրտնաջան աշխատութիւն։

Ես լսեցի խոր հառաչանք,
Եւ վիշտ հոգու և զանգատ,
Եւ լաց և սուգ և ազաչանք,
Այն էր «Մ'ղջ իմ հարազատ»։

Ես ուխտեցի լինել մշակ,
Հասարակաց պիտոյքի,
Երգել ուսայ «գործ և վաստակ,
Արդար հացը այս կեանքի»։

Ա· ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԳԵՐԻ ՀԱՅՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Գոհ ենք քեզնից, ո՛վ բարերար,
Օրհնեալ լինի միշտ քո անուն,
Արդար արեւդ այդ լուսավառ
Թո՛ղ հետ բերէ մեզ փրկութիւն։
Ո՛հ, ուրախ օր չնորհիր, Տէ՛ր,
Մեր խղճալի Հայրենիքին,
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնում են քեզ հոանդագին։
Մի՛ տար, Աստուած, որ կործանուի
Մրբակրօն Հայոց աշխարհ,
Թո՛ղ քաղցր անուն Հայաստանի,
Մնայ կենդան միշտ մեր համար։
Բաց մեզ քո դուռն ողորմութեան,
Ցեսու, Մովսէս մեզ ուղարկի՛ր,
Որ այս գժնեայ Եգիպտոսից՝
Աւետեաց մեզ տանեն երկիր։
Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին,
Բարոզեցաւ Աւետարան,
Փայլեց դրօշը ծիրանածին,
Կանգնեցաւ խաչ Քրիստոսական,
Ուր նուիրական նահատակներ՝
Դէմ վիշապին պինդ ուրեցան,
Պատերազմի կանանչ դաշտեր
Նոցա արեամբ ներկուեցան,
Ուր մեր Հայրեր երանելի,
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ,
Մեծարեցին անուն ազգի,
Եւ ննջեցին ծաղկեպսակ։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ՊԱՆԴՈՒՏԻ ՈՂՋՈՅՆ

Ողջոյն տուէ՛ք իմ Հայրենեաց
կիսակործան տաճարներուն,
Ողջոյն տուէ՛ք աւերակաց
Արարատեան գաւառներուն։
Ողջոյն տուէ՛ք Աւարայրին
Արիւնաներկ սուրբ վայրերուն,
Ողջոյն տուէ՛ք ախտուր լուսնին,
Որ լացնէ սև չիրիմներուն։
Ողջոյն տուէ՛ք պանդուխտ Հայուն,
Թշուառ Հայուն, չուառ Հայուն։
Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ, սիրտ տուէք,
Հոգի տուէ՛ք անկեալ Հայու։
Ողջոյն տուէ՛ք ոյոր մնոյր,
Մոլոր վազող գետակներուն,
Ողջոյն տուէ՛ք պղտոր բոլոր
Աղի-լեղի աղբիւրներուն։
Ողջոյն տուէք 'ի հող եղած
Արքայական պալատներուն,
Ողջոյն տուէք գետնատարած
Սրբոց ամբիծ մասունքներուն։
Ողջոյն տուէք դուք խումբ 'ի խումբ,
Որ կան թաղած հոգիներուն·
Ուր Հայ սոխակք թումբէ 'ի թումբ
կեանք կը խնդրեն դեռ չատերուն։
Ողջոյն տուէք Հայ մուսային,
Որ լայ զիտուս իւր հաւերու,
Ողջոյն տուէք իմ քնարին
Որ Հայկայ տանն է ողբերգու։

ԲԱՅԱԹԻՔ

Կապուտակ ձին նսեմել եմ,
Արագին մօտացել եմ։
Արա՛գ, ինձ մի ճամբայ տո՛ւր,
Մասիսին կարօտցել եմ։

Անի, Անի, ա՛խ Անի,
Քանդուղիդ սուրը քանդուբ,
Քեզ որ ազգը չպահեց՝
Մէկ սուգ անողն ի՞նչ անի։

Ուրախ բաղում նահատակ,
Պառկել են սեւ հողի տակ,
Քեզ պէս քաղաք չէր լինի,
Ափսո՛ս, եղար աւերակ։

Երեսդ քայ ու ետ տար,
Երբ ուզենաս՝ հոգիս ա՛ռ։
Թող մէկ հողդ, ա՛խ, մանեմ,
Էն վախտը սէրդ էլ ետ տար։

Բաղդը մեզի հալածեց,
Երկրէ երկիր տարածեց,
Մենք էլ մի երամ էինք,
Դէպքը այսպէս հարուածեց։

Տար էդ հաւին, ա՛յ ուրուբ,
Աչխարհքս դանակ ա ու սուր,
Զօռ մարդի թուրն ա կտրում,
Խեղճն ո՞ւր կորչի, ա՛խ, ո՞ւր, ո՞ւր։

Ա՛խ, Հայաստան, Հայաստան,
Մնացիր անգամ տառապանքի,
Այլոց օթեւան դառար,
Ո՞ւր են քո Արամ, Տիգրան։

Երկնքի կանաչ կարմիր,
Ա՛յ սիրուն կանաչ կարմիր,
Լերդս ու թոքս չորցել է,
Սար ու ձոր կանաչ կարմիր։

Ընկել եմ, ա՛խ, սարէ սար,
Դարման չունիմ, ա՛չ մի ճար,
Ուզում եմ գամ քո ոտը,
Աւազս ծով, սար է, սար։

Կանաչ են, ա՛խ, սար ու ձոր,
Ջէնս բարակ, սիրտս խոր,
Հոգիս էլ տամ, չես լսիլ,
Ի՞նչ ես ընկել սար ու ձոր։

Պ. Ժ. Խ.

ՎԻՇՏ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ

Թչո՛ւառ հայրենիք, ո՛հ, դու լաս հերիք,
Հոսես արտասուք քո հեզիկ հեզիկ,
Ո՛հ, թո՛ղ հանգարտին հառաչանքդ ու լաց,
Թո՛ղ լըռէ տխուր Մուսայդ ողբասաց,
Քաղըդ առ մէկդի, թո՛ղ աչկունքդ ժպտին,
Դէմ մայրակարօտ քո Հայ պանդխտին,
Որ ձեռն ի ճակատ՝ մէջ օտար վայրաց
կուլայ քո վսեմ փառքըդ անմոռաց։

Հայրենիք, քո սիրտըդ բացաւ ծաղիկ,
Քո չուրջըդ ներկեց այգըդ գեղեցիկ,
Ե՛լ, ե՛լ, արջնաթոյր արդ ամպոց տակէն,
Որ վեց դարէ վեր գլուխըդ ծածկեն։
Ե՛լ, ե՛լ, ձեռքըդ տուր, որդի քո եմ ես,
Տո՛ւր որ համբուրեմ սիրով սրտակէզ,
Եւ քեզ սիրտ մ՛ունիմ, տամ զանի յօժար,
Զոր Հայաստիւն ինձ տուաւ քեզ համար։

Ե. Մանուէլեան

ԱՐՏԱՍՈՒՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես զալար ծառ մի տնկեալ ի Հայկայ,
Պաղաբերութեամբ լինձ նըման չկայ,
Ջե՛մ ես սնափառ՝ իբրեւ սարդնեվ,
Հոգմն ատելութեան փչեաց՝ ես անկայ։

Ցօղդարակ

Ո՞ւր է սէր, ո՛ւր է սէր, զի նորոգեցայց։

Ինաղցրահամ պտուղ իմ էր անքանակ,
Ջաչխարհ լիացուց երկար ժամանակ։
Ոստք իմ և արմատք ի բնէ խղեցան,
Դառն ատելութեամբ՝ անսուբ անդանակ։

Տերեւք իմ կանաչ վազ թառամեցան,
Երակք անդամոյս ի ջրոյ քամեցան,
Կեղեւն իմ քնքոյշ որդնակեր եղեւ,
Գուցէ այգեպանք այսպէս կամեցան։

Ի զալ ամառան ազգ իւրաքանչիւր,
Ցնծալով փութա՛, քաղել զայգին իւր,
Իսկ ազգն Հայկայ ձեռն ի ծնօտի,
Աւաղէ հոսէ արտասուք աղի։

Սէյհանդն ազգասէր յազդէն բամբասէր,
Գիշեր ցորեկ ողբալով ասէր։
«Հայք զի՞րդ կարեն ճաշակել պտուղ,
Զի չունին հասատատ հաւատ, յոյս և սէր։»

ՍԻՑԵԱՆ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Օ՛ն, փութացէ՛ք, հասեալ է ժամ,
Հարէ՛ք մարտին փողերն ուժգին։
Մեզ ահարկու կայ պատերազմ,
Սրեամբ զինեալ է թշնամին։

Փչրեմք ազատ, բանամք դռներ,
Զար նախանձու մեր ոխերիմ,
Որ դարերով է մեզ փակեր
Ի գերութեան, ի բանտ մթին։

Ի զէն, օ՛ն, փութացէք
Գունդ ի գունդ, հա՛յ ուստերք։
Լուսավիզ այս նոր զարոյս
Վանե՛նք բռնութեան դաւ ու նենգ։

Մեր մարք, մեր քոյր խոցեցան չատ
Շղթայակապ ի գերութեան,
Մինչ մեր հարք, եղբարք ազատ
Անփոյթ էին կոյր զկուրայն։

Անդ և լուսով ուսման
Տեսան վէրքերն իրենց ազգայ։
Ուստի լինին մեզ օգնական՝
Անել նախանձ արտահալած։

Ի զէն օն փութացէ՛ք... և այլն։

ՉԵՆ ԵՐՋԱՆԻԿ

Ո՞ր մահկանացուն այս երկրի վրայ
Երջանիկ ժամեր վայելել կրնայ,
Եւ ո՞րն է այն վարդ ծլած աչխարհիս,
Որ ձեռացդ մէջ իսկոյն չթոռմի։
Չե՛ն, չե՛ն երջանիկ, ո՛հ, ժամ սիրանուէր,
Որ զգուէ հովիկ զկուսին մազեր։

Թէ մտօք զրկես զերկիր և զերկին,
Եւ ամեն գաղտնիք քեզ մերկանային,
Անհնար է քեզ ըլլալ երջանիկ,
Այլ դչեմ բաղդին թչուառ խաղալիք։
Չե՛ն չեն երջանիկ ... և այլն։

Ի զուր դիւցազունք պատերազմական
Դաչտերու վրայ կանգնեցին նչան.
Հազիւ ստացան յաղթութեան պսակ,
Կորզեց ձեռքերնէս զայն մահու հրեչտակ։
Ո՛հ, չէ՛ք երջանիկ, ո՛հ դժբախտ Հայեր,
Մինչդեռ Հայրենիք չէք մխիթարեր։

Մ. ՊԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐԳ ՋԻՆՈՒՈՐԱՑ

Ջինուոր էի Հայոց Ազգին մըտերիմ,
Երբ Հայաստան քար քանդ արեց թչնամին,
Պինդ պինդ ցաւեց սիրտը արի Հայերուն,
Այն օր նոքա թափել տուին դետ արիւն։
Շատ չատ քաջեր ընկան ասդից անդից,
Ես էլ ընկայ թչնամիի սուր նետից·

Իմ մարմինը դաչտի միջին է ընկած,
Քրիստոնէի սուրբ օրէնքով չէ՛ թաղած։
Դուն մի՛ մընար աչքդ արցունք օրն ի բուն,
Սիրականիդ, իմ սիրական, մըտի՛ր քուն։
Առուտուն կուգայ չարագուչակ գուժկանը,
Սուգ, ողբ, կըսկիծ նա կը նիւթէ իմ տանը։
Առ երկու թի ու երկաթէ սուր բանը,
Առ քու հետը մի սպիտակ մեծ պատան,
Փորէ՛ խորին լինձի համար դերեզման։
Գերեզմանիս վրայ բընի վարդենին,
Վարդը բացուի, աչքը գրաւէ ամենին։
Սոխակին էլ թո՛ղ գրաւէ նա հոգին,
Քաղցր տաղեր թող ներչնչէ սոխակին։
Թո՛ղ սոխակը անցքըս պատմէ ամենուն։
Թող լսողը ողորմիս տայ իմ հոգուն։

Ռ· Տ·—Գ· ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՔԱՋՈՐԴԻՈՑՆ

Ես հիւսեմ ձեռօքս իմ վեհ քաջորդւոյս,
Փառաց յաղթութեան դափնին ծաղկահիւս,
Զօնեմ իւր չիրմին սիրոյս արցունքներ։
Միակ իմ նուէր սրտիս կարեվեր,
Այլ բարին Աստուած պաղատիմ յաւերժ,
Չէք հերոսուհւոյս դու լուծէ վրէժ։

ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ

Հայրենիք սրբազան,
Իմ սիրուն աշխա՛րհ,
Թռչում եմ դէպ ի քեզ
Հոգւովս անդադար։

Բայց, աւա՛ղ, այս բանտում
Փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում
Ջեմ կռուում և ես։

Հանապազ տանջուելոյ
Քո ճակատագրով,
Սրտումս չղթաների
Ձայներ կրելով։

Թող այստեղ չարչարուիմ
Անձանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենիք,
Տեսնեմ ազատուած։

Մ. ՔՈՒՉՈՒԲԻԿԵԱՆ

ԵՈԳ

Հայե՛ր, մինչև ե՞րբ արտասուենք,
Լանք յուսահատ, վիշտնք, հեծեծնք.
կընոջ անկէ ողբալ, կոծել,
Մեզի՝ զբրաւնք, արտասուք թափել։

Կ՚ուզեն՞ք փրկութիւն,
—Սիրենք պիտութիւն.
Սիրենք միութիւն,
Եղբայրսիրութիւն.
Սիրե՛նք Հայութիւն,
Ասմանապրութիւն։

Մինէ ոտքալ կանգնի՞ն, Հայե՛ր,
Մեր բազմազգի ասերականներ.
Աբի՛ կեանք, գործե՛նք միասին,
Լո՛յս ծաւալենք ջերմ եռանդով։
Կ՚ուզե՞նք փրկութիւն, եւլն.։

Թո՛ղ մեր ասեր հո՛ւր արձակեն,
Ու մեր լանջեր քընդան, արիւն.
Երակաց մէջ, փոխան արեան,
Հայրենասէր թո՛յլ ընթանան։
Կ՚ուզե՞նք փրկութիւն, եւլն.։

Անցյա՛ն, անցյա՛ն ատպի՛ գարեր,
Ակը, յոյս ու լոյս խայտան յիմեր.
Օ՛ն, չարժեցէք, ճակա՛տք արի,
Զարթի՛ք, առի՛ծք Հայաստանի։
Կ՚ուզե՞նք փրկութիւն, եւլն.։

1872 Մայիս 12 Մ. ՉԵՐԱԶ

ԵՐԳ ՇՂՔԱՅԱԿԱՊ ՀԱՅՈՑ

Ի զո՜ւր են, ի զո՜ւր, բրոնաւոր,
Ընդառնալիք քո ամենայն.
Ո՛չ, քո չըզիայք չեն զօրաւոր
Ցընկճել զոգիս մեր Հայկական։

Ըզմարմին, միայն զայս մարմին
Կարես դերիլ՝ քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային
Սիրտք Հայկազանց են միշտ ազա՜տ։

Ազա՜տ են, ազա՜տ մեր լեզուք,
Մաղթել ըզՅանխիս Աբգարու թեան
Ի գլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք
Որ աւերէք ըզՀայաստան։

Ի գրժո՜ւխս անկցին թշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան
Կեցցե՛ն Արքայ և Հայրենիք.
Կեցցէ՛ անմա՜հ մեր Հայաստան։

Խ. Ե. ՆԱՐ-ՊԷՅ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Տո՛ւր ձեռդ, եղբայր, ժամ է պարթևու
Ժամ է ժամ յառաջ ոտքի ելնելու.
Մօտ է վախճանին Հայերուս օրհաս,
Լինել չլինել մեզնից է կախուած։

Տո՛ւր ձեռդ, եղբայր, հերիք համբերենք,
Հերիք օպնութիւն ուրիշից հայցենք,

Մենք ենք տանջուողը, մենք չարչարուողը
Մենք պիտի լինինք մեզի փրկողը։

Մեր վեհ հայրենիք դարերով ճնշուած,
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած
Պահանջէ մեզնից արիւնով ներկել,
Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր։

Շտապիր, եղբա՜յր. ա՛ռ, ահա քեզ զէնք,
Սրբանով միայն փրկուելու ենք մենք,
Ահա է գործածում մեր դէմ թշնամին,
Ահա պիտի լինի պաշտպան մեր անձին։

Շտապիր, եղբա՜յր, ի գաշտ պատերազմ,
Սպասում է քեզ թշնամին մեր կամ,
Աչխարհն ակզբից ամբողջ մարդկութիւն
Ահն տեղ է գտել իւր ազատութիւն։

Ահն տեղ է քո կեանք, ահն տեղ է քո մահ,
Ելի՛ր ընդ առաջ, ելի՛ր դու անմահ,
Արդարութիւն է գործին նշանակ,
Ահն տեղ կը կանգնէ նա իւր յաղթանակ։

Շտապի՛ր, քանի դեռ չէ անագան,
Քեզ կը հետեւի ամբողջ Հայաստան,
Ազատութիւն է գործին գրաւական,
Ահն տեղ կը տանայս պակ պատուական։

ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻ ԵՐԳԸ

Արեւ, արեւ, դուրս եկիր,
Աչքդ ունքդ ինձ ցոյց տուր.
Ցրտից ձանս դողում է,
Ջալալա որբիս տաքացուր:

Հօրըս մօրըս սպանաւ
Բաֆիր քուրդը, ո՛ւր գընամ.
Փարա չունիմ փայտ առնեմ,
Օճախս վառեմ տաքանամ:

Արեւ արեւ, չուտ արա՛,
Ձուռք բօրանը գալիս ա.
Ես օր ցրտից որ մեռնեմ,
Էլ արեւդ ի՞նչիս ա:

ՍԻՄԻՈՆ ՍԱՓԱՐԵԱՆՑ

Ի ՄԱՐՏ

Քաւ է որդեակք այսքան տարի
Շղթայակապ տանջուեցանք.
Մենք դէպ ի մահ, յԱզատութիւն
Ձեռք ձեռքի տանք, սլանանք:

Ելէ՛ք, տղերք, դէ՛հ, չարժուեցէ՛ք,
Մինչ վերջ գերի պի՞տ կենանք,
Պաղ սեւ հողին լինինք բաժին
Կամ թէ ազնենք յաղթանակ:

Ի զէ՛ն, եղբայր, ե՛լ քաջ արի՛,
Նուրբդ դէմ տուր առաջի.

Շարժէ բազուկ, դո՛ւ ֆէդայ,
Թո՛ղ սարսռայ թշնամին:

Ցառա՛ջ, եղբայր, պարզէ դրօշակ,
Թո՛ղ որոտան Մօսիններ,
Եւ քո գոչիւն ազատական
Թո՛ղ դղրդան լեռներ ձորեր:

ՄՈՒՇ

Թո՛ղ պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ երգ չհնչէ Սասնոյ լեռներում.
Թո՛ղ ժպիտ չըզգայ Հայերուս դէմքին.
Թո՛ղ Թախիծ տիրէ Հայերուս սրտին:

Հայի ձեռքեր արիւնով ներկուած,
Հայոց սրտեր վշտով է պատած.
Ալ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ չուշան,
Հայոց եդեմի դաշտում աննման:

Բանի՛ հայ աղջիկ չէ պարզարկուս,
Ծաղկով իր կուրծք չքեղ պճնելու.
Թո՛ղ երգ չհնչէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ պլպուլ չերգէ Սասնոյ լեռներում:

ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾՔ

Մի դեղեցիկ պարզ գիւղեր էր,
Երկինքը լի աստղերով.
Եւ լուսինը միշտ փայլուն էր,
Կաթնանման իր լոյսով:

Նա նայում էր լուիկ մնջիկ
Իբրեւ մի կոյս դէպ ի վան.
Նըրա աչքին երեւում էր
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ փիւրդեր՝
Բռնած սուր, թուր, նրայան,
կոտորում են, կողոպտում են,
Աւերում են անտէր վան:

Եւ կարծես թէ վեր երկնքից
Լսում էր այդ լուս վկան.
«Վրայ հասի՛ր, Հայ ազգասէր,
Ջեռքից կ'երթայ Հայաստան»:

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ

ԼՈՒՍԻՆ

Լուսց: Ամպերն սկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին.
Մնայի մենակ, տոպիս վրդոված,
Ջեռներս ծոցիս, պլուխս քարչ առած:

Եւ այնուհետեւ ամեն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա ախորժած դէմքը նայելիս՝
Ցիչում եմ Թշուառ վիճակը ազգիս:

Ա՛խ, ցոլա՛ վայլէ՛, ախորժե՛մ լուսին,
Գուցէ քո վայլից վայլ տաս և Հային.

Գաւառէ չատերուն վարդանի մանը,
Կամ ինչպէս կորաւ Հայ ազգի գանը,
Կամ ինչ վէհ սիրով սիրում էր վարդան
Մայրենի տոզը՝ աշխարհ Հայաստան:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս օրրան,
Դու և բնիկ իմ Հայրենիք,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Ի վեր անուանդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ
Ոգեւորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ, ի քեզ, յո՛յս իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան
Եգիտ, և քեզ ապրեցաւ Նոյ,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Գետք քաջատաղք ադնաբուղխ
Ջեղդ բարի առնեն յուղթի,
Քեզ ապրիմ ես, քեզ միշտ ցնծամ,
Քեզ, քեզ պանծամ փառք իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան,
Քո գնդիւռին քաղցր է հնչիւն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Զար չնչեցին և գօրացան
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զքեզ յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ, ա՛յր իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Յ. ՄԻՐԶԱ-ՎԱՆԱՆ ԵՅԻ

ՀԱՅ ՄԵՒՆԻՆՔ

Ո՛չ, եղբա՛ր ք, ո՛չ. օտարներէն չկայ յոյս.
Մի՛ աչուընկերդ դարձնէք յայս յոյն կոյս:
Օտարն զձեզ թէեւ սիրէ հիւրասէր,
Օտարն, ա՛հ, միշտ է օտար:

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անդորով.
Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արիւնով:
Ով որ Հայ չէ՝ Հայուն ցաւերն ան չզգար.
Ի՞նչ կը խաբուիք անդադար:

Մի՛ դուք ձեր յոյն մի՛ աւանդէք օտարին.
Մի՛ խոր վէրքերդ ցուցանէք անգութին.
Արդահատանս կը յուսա՞յք օգնութիւն,
Ձեզ կը ծաղրէ մերկութիւն:

Գիտե՛մ, ձեր բերը ծանր է, ծանր, ո՛վ Հայեր.
Բայց կը կարծէ՞ք զայն վերցնեն օտարներ.
Թոզէ՛ք զօտար, տուէ՛ք եղբայր եղբօր թեւ,
Եւ զօրացէ՛ք անթեւեւ:

Բազուկը զարձեր է ձեղի դէմ թշնամի.
Մի՛ վհատիք, յոյսդ ցուցէք սիրտ հայեցի,
Չէ՛ կարող բազդ յաղթել ազգին այն քաջի,
Որ բազդին դէմ կը կռուի:

Չեր հայրերուն ո՛չ չքմայք, ո՛չ սուսերներ
Չկարեցին ընկճել ո՛չ միաբ, ոչ սրտեր:
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր զազայ ոտար, հեք.
Ի՞նչ, այն քաջայ որդիք չէ՞ք:

Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց անմոռան,
Որ հայրենեաց ձեռնհասեցան ի սեզան...
Չէ՞ք դուք որդիք այնմիսի Հայոց, որոց կեանք
Են մարդկութեան իսկ պարծանք:

Դուք, որ ունիք ձեզ պատմութիւն մ՚ազգային,
Որոյ վրայ մնծ ազգեր իսկ նախանձին,
Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց
Երանի տաք օտարաց:

Օ՜ն, ո՛վ կը զգայ ի սիրտ նոանդ և ապի,
Թօզու զօտար և իւր նախնեաց հետեւի.
Մեր կեանքը հոն է, ուր կրօնից մեր սեզան,
Այն է Հայոց վառարան:

Եղբա՛ր ք, Հայուն կեանքը երկէք չի մարիր,
Երկինք լեցուն են այն բոցով կենսատիր,
Որչափ սիրէ մշտայաղթ Խաչ Քրիստոսի,
Հայն ալ անոր հետ կ՚ապրի:

Եղբա՛ր ք, Հայուն կեանքը երկէք չի մարիր,
Երկինք լեցուն են այ բոցով կենսատիր.
Որչափ դիտէ մշտայաղթ Խաչ Քրիստոսի,
Հայն ալ անոր հետ կ՚ապրի:

Ի՞նչ կը վախնայք... գլուխնուդ վրայ չէ՞ք տեսներ
Քառաթեւին դիւասարսուռ վհո սուտեր.
Ձայն սուրբ փայտին բուն չաղեցին ձեր հարբը՝
Իրենց վսեմ արեամբը։

Դուք ալ խաչին խարսխեցէք ձեր յոյսը,
Եւ, հաւատացէ՛ք, պիտի ծագի ձեր լոյսը.
Նա աղդութեանդ եղաւ պարիսպ ամրաւիակ,
Նա ձեր ըղձայ պէնք, դրօշակ։

Ո՛հ, հնար չէ, որ կորսուի այն ազգը,
Որ հաւատարիմ մնայ Խաչին միչտ ատքը,
Նորա կեանքը պիտի տեւէ այնչափ դար,
Որչափ կրօնից կեանք՝ յաշխարհ։

Այն վհո կրօնից և՛ աղդութեան անունով,
Հա՛յ եղբարք, ձեռք ձեռքի տուէք հուր սիրով.
Աստուածին, քէն մերժուին, օ՛ն, ի բաց.
Անիծեցէ՛ք զաղգասեաց։

Ամենուդ սիրտ՝ զգայուն սէրն Հայրենեաց,
Ամենուդ միտք թռչի յօգուտ համազգեաց,
Ու ձեր յեսին եղբօր արցունք ու ցաւ միչտ,
Ըզգացէ՛ք իբրեւ ձեր վիչտ։

Օտարին հայ մեզի անունդ չէ քնաւ,
Օտարին ջուր, ո՛չ, չմարեր մեր ծարաւ.
Մեզի կենաց տուող և մեր պահապան
Ի սուազանն - Հայկական։

Այն Սուազանն, այն Հայութեան կնքատուն,
Ո՛հ, չուրանանք, եղբա՛րք, յուսով զաղփազփուն,
Եւ թէ մեր չունչ պիտի մարի վերջապէս,
Թո՛ղ մարի այն սուրբ կրկէս։

Թող ամենքս ալ ընդունի նոյն գերեզման,
Վասն պի նոյն էր ամենուս ալ որդան...
Հայ ծնանք մենք, Հայ ապրինք, Հայ և մեռնինք,
Օ՛ն, Հայ մանանենք և յերկինք։

Խ. Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

ՅԱՌԱՋ

(Քայլերգ)

Մարտի դաշտը սլայէք, ո՛վ քաջեր,
Թո՛ղ ձեր ահէն սարսին վատ հոերդեր.
Մեր հայրենիք արեան կրակի մէջ է,
Ա՛լ ձեռք քաչենք ողբ ու կոծէ և լացէ։

Մեր տունն այրող հուր կարէ սրտերնիս,
Ինչո՞ւ անգործ պահենք սուրերնիս.
Առիւծի պէս առաջ նետուինք մարտի դաշտ,
կա՛մ ազատուենք.կա՛մ հանգոյր տանք մահին հաչտ։

Ապրէ՛ ուրեմն, ո՛հ, ապրէ՛ դու, խչտաւառ հայրենիք,
Քեզ յօդուտող, քեզ խոչտանգող թշնամիք,
Ձեն կրնար քեզ ապանել, գերեզման մտցնել.
Ահա՛ Հայ քաջերը անարգել, կը փութան քեզ ազատել։

Օ՛ն, դէպ ի մարտ, դէպ ի ահեղ կռուի դաշտ.
Սարուկներ չենք, կը մեռնինք, կը մեռնինք հպարտ,
Օ՛ն, քաջ կռուենք ու յաղթենք, կոտրենք թշնամին նենգ։

Հայրենիքի ազատութեան Թող զոհուինք,
Կռուի մէջ մենք երբեք մահէն վախ չունինք։

ԵՐԳ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ

Հեռո՛ւ եմ քենէ, օտար երկրի մէջ,
Եղած եմ պանդուխտ, սիրուն հայրենիք.
Ի լեռ և ի ձոր կ'ընեմ ելեւէջ,
Քեզ չեմ տեսներ ես, սիրուն հայրենիք։

Հարտարախօս չեմ Միլտոնի նման,
Որ դրախտի մը նմանցընեմ քեզ,
Եւ ոչ Եուվենկի պէս ճարտարամիտ եմ,
Որ գովաբանեմ, սիրուն Հայրենիք։

Տկլեմաքի պէս քաշեմ արկածներ,
Կը պատահին ինձ ձախորդ դիպուածներ,
Քեզ մոռնալո՛ւ եմ, երբեք չեմ կարծեր,
Ծնած եմ քո մէջ, սիրուն Հայրենիք։

Կ'երեւակայեմ մանչիս մէջ քեզ միշտ,
Չէ թէ ցորեկներ, գիշերներն ի բուն,
Երբոր մըրաքեմ կամ ըլլամ ի քուն,
Երազներս ես դու, սիրուն Հայրենիք։

Լեռներդ ծաղիկով, դաշտերդ չուչանով,
Լեցուն ես միշտ դու անուշ հոտերով,
Թէ որ ես քաղեմ խաւրն խոտերով,
Կը հոտուրտամ քեզ, սիրուն Հայրենիք։

Երբ գուդայ գարուն, կը բայուին վարդեր,
Խմբակ կը կազմեն երիտասարդներ,
Պար առեալ ցնծան և օրիորդներ,
Երգերով քերկրիմ, սիրուն Հայրենիք։

Զարդարուած պարտէզդ անուշ միրգերով,
Աս ափն Եփրատայ պատուական դիրքով.
Քեզ գովաբանել կ'ուզեմ նոր երգով,
Խարբերդ քաղաքն իմ, սիրո՛ւն Հայրենիք։

ԱՄԱՈՒՆԻ ԵՐԳԸ

Վայրագ Քրդաց խօլ վաչտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի,
Մի վհատիր, քաջ Սասուն, քեզի կուտան օգնութեան,
Ռուսաստանցի քաջ եղբայրներ չուտով կուգան օգնութեան։

Շէնըզգ չէիմ լրջապատուած զօրքերով,
Դալուորիկի անցքն էր փակուած Քրդերով,
Իսկ Հայ օրիորդներ, դուք առէք վառօդ ու գնդակ,
Լըցէք գատարկ փամփուչտները անընդհատ։

Քոյր ու եղբայր բաժանելու եկել են,
Հայու որդի սպանելու եկել են,
Մեռնելու չափ դառն է հպատակիլ վատ քըրդին,
Լաւ է մեռնիլ առանց հոգի քան յանձնուիլ անգութին։

ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՑԵՐԳ

Հայե՛ր, այսօր ազատ կեանքի նոր արեւ,
Երբ խանդավառ կը չողչողայ մեր վերեւ,
Պէտք չէ քնաւ որ մեր սիրտն ու մեր հոգին,
Սին անարժան բաղձանքներով բորբոքին։
Պէտք չեն մեզի բերա միջոցներ, ուժ ու զէնք,
Ազատութիւն մենք կ'ուզենք։

Թուրք ազգին հետ, իբր ազգական խընամի,
Չէինք երբեք, պիտի չըլլանք թշնամի.
Զաւակներ նոյն հայրենեաց, նոյն սուրբ հոգին,
Թշնամին ենք մեզ իրարմէ բաժնողին։
Պէտք չեն մեզի բերա միջոցներ, ուժ ու զէնք,
Եղբայրութիւն մենք կ'ուզենք։

Միշտ ձեռք ձեռքի, հաստատ քայլով անխափան,
Պիտի կտրենք մենք լուսաւոր այն ճամբան,
Որ հեշտաթոյր ծաղկանց մէջէն ընտանի,
Դէպ ի լաւն ու դէպ ի բարին կը տանի:
Պէտք չեն մեզի բիրտ միջոցներ, ուժ ու զէնք,
Հրդեհարութիւն մենք կ՚ուզենք:

Եղաւնակ

ԳՐԻԳՈՐ ԶՕՒԼՀԱԵԱՆ ԱՂԵՔ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՒ ԾԻԾԵՒՆԱԿ

Ո՛վ ծիծեռնակ, վարանած թռչնիկ, ի՛նչ տիրաքին,
Զայնիւ ձայնիւ կ՚եղանակես մօտ իմ բանտին·
Մինչ վարուժանըդ սիրուն,
Հոս միայնա՛կ թողուց զքեզ,
Եւ դուն անմխիթար կը հնծես.
Ո՛հ, լայ ուրեմն ինծի պէս:

Բայց երանի՛ քեզ, քիւր երանի, կրնաս թռչիլ,
Թեթեւ թեթեւ թեւոցդ ի ծայր ընդ սար և ձոր·
Իսկ հոս արեւուն նչոյլն ազօտ,
Մութ բանտիս է անթափանց.
Եւ ոչ մեզմ հովիկ մ՚ալ կը փչէ,
Ո՛հ, տանի ձայն իմ սիրելեացս:

Գէթ դու գնա՛ դտնել սիրելիդ, ալացիր արագ,
Սակայն սակայն դարձիր նորէն մօտ չուառիս.
Եւ հոս հանգչէ այս իրիկուն,
Լո՛ր դու վկայ տխուր մտնուանս,
Եւ իմ չիրմիս վրայ հընձըւալով,
Գէթ դու յիշէ՛ զիս անմոռաց:

ՀԱՅ ՋԻՆՈՒՈՐ

Մասսի ճակատին ամպրոպ պատռեցաւ,
Հարերուս սրտին վախ իարատեցաւ,
Նժոյգ է տակսը, ձեռիս այնալու,
Սուլթա՛ն, ունե՞ս ուժ ինձ դիմանալու,
—Ըատրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Քեռ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:

Անտուտ երգումով ուխտել իմ ազգիս—
Զոհել մարմինս զոհել և հոգիս,
Արհամարհել սուլ և անդորրութիւն,
Տալ Հայաստանի սուրբ ազատութիւն:
—Ըատրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Քեռ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:

Էլ ես ան չունիմ քու վախկոտ օրքէն,
Զգուած եմ ես քու չարաչար օրէնքէն,
Մչու դաշտերը, վան ու Աղբրում,
Կ՚լուանան զօրքիդ ես ու պիղծ արիւն:
—Ըատրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Քեռ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:

Թըլսա՛ս, քու յոյսն է Զէրքէզն ու Քուրդը—
Հա՛, մէկ քամիին տամ նոցա բուրդը,
Ջեռքիս ունիմ ես Դեւոնդի լախտը,
Որ ջարդեմ փըշրեմ քու փրատած թախտը:
Սուլթա՛ն, սիրա ունե՞ս, իջիր մարտի դաշտ,
Տես քու առջեւն է թշնամիդ անհաշտ:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՎԱՆԵՑԻ ԿՏՐՒԱԾ

Հալիս լրացաւ քսան մէկ տարիս,
Ազատամաղ բաւ երես ծնօտիս,
Թչերէս կարմիր վարդեր կը կաթի,
Ջիղերս ամուր՝ ասես երկաթի։

Տուէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով վեր ինկնէն հանեմ,
Սուր ակռաներով երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ինչ անեմ։

Աղջկաս դրէ՛ք մարդ հարիւր ու հազար—
Ջարդեմ արտրեմ վերդ բողկ ու գազար,
Ինչ այլք չաբթու աչք՝ այն ես օր կ'անեմ...
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ինչ անեմ։

Ինձ պէս բիւրերով լի է Հայաստան,
—Նրա սուրբ հողին ըլլիմ ես զոհաբան—
Մարմինը ուժեղ և առոյգ է Հային,
Այլ, ախո՛ս, թմրած է նորա հոգին։

Թէ մի օր զարթնի նորա վեհ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ հնութեանս ազգին,—
Ո՛վ էր երկուսէն սարսուռ և կամ ահ...
Ա՛խ, ե՛րբ պիտ' թնդաք, խե՛ղճ Հայի սրտեր։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԱՏԱՆԱ

Կոտորածն անգութ, Հայերը թո՛ղ լան,
Անապատ դարձաւ չքեղ Ատանան,
Կրակը, սուրը ու անխիղճ թալան,
Ռուբէնի տունը, ա՛խ, ըրաւ վիրան։

Ալ մի՛ տար լոյսդ, պայծառ Արեգակ,
Լուսին չուրջ կապէ տուն սուգի մանեակ,
Անցաւ մեր երկրէն հարաւի խարշակ,
Զորցուց թոռմեցուց ծառ ծաղիկ համակ։

Րոպէ մը չանցաւ ու Հայոց խեղճեր
Ինկան սուրին տակ խուժանին ահեղ,
Ժամեր ու գլորց բոցի մէջ կորան,
Բիւրաւոր Հայեր անխնայ մնացան։

Անզգայ անօրէն Թուրքը սրբ Թողուց
Ջաւակը մօրէն, հարսը իր փեսէն,
Ձէվատն անզգամ, Ատիլը գժուժ
Կերաւ կշտացաւ Հայու արիւնէն։

Պարապ է, աւա՛ղ, հարուստ Ատանան,
Մոխիր է դարձեր ամբողջ կիլիկիան,
Միայն ապրեցաւ Հաճընոյ սիրոյն,
Ինչո՞ւ չը չարժիր ապառաժ Ջէյթունն։

Երեք օր գիշեր՝ կրակը մէջէն,
Թչնամեաց սուրը գնաւակը դրաէն,
Ջնջեցին Հայը երկրին երեսէն,
Սրիւն կը վազէ մեր ջինջ գետերէն։

Ալ բաւ է ո՛րքան վատերուն լուծը
Կրեցինք. Թողունք մեր լացն ու կոծը։
Օտարին տունը ա՛լ չէ ապահով,
Հայ հողերու վրայ մեռնինք մենք փառքով։

ԵՐԳ ՆԷՎՐՈՒԶԻ

Հայրենեաց սիրոյն համար
Խմբեր պատրաստեն քաջեր,
Հրացաններ ուսերնին,
Փամփուշտներն ալ ու ձախ,

Հնազանդ կարգաւ են չարուած,
Նման առիւծի պէս քաջ,
Խմբապետն հրահանգ տալով
Երթալով յառաջ յառաջ։

Խմբապետը Նէվրուզն էր,
Օգնականը խիստ քաջ էր,
Խաչօն յառաջ կանգնած էր,
Պատերազմի կը սպասէր։

Լսե՛ն նկատ. Չան Ֆետան,
Սարսափ տիրից բանակին,
Փախչում էին դէպ ի լեռներ,
Վախկոտ զօրքերն անագին։

Ոակեզօծ պաշլըխներով
Լազի չորեր Թանկագին,
Գնում էին դէպ ի Սատուն,
Օգնելու Անդրանիկին։

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութեան սեմին վրայ, փա՛ռք Տիրոջը, ահա՛ գերիներ,
Որուն գերութեան մէջ ազատութիւն գրկեցինք,
Հայ զաւակներ Թըրքերու հետ Թաւեցին խիստ չատ արիւն,
Իրենց արեան անգին գնով գընեցին Ազատութիւն։

Ո՛վ եղբա՛յրներ, սիրեցէք գիրար, փարեցէք անոր կո-
ղովով,
Ամենքնիս ալ Թո՛ղ միշտ ըլլանք Ազատութեան ջատագով.
Ազատութեան չընորհիւը պիտի գըտնենք մեր հանգիստ,
Որուն առջև խոյս պիտի տան բըռնազբօսիկ կաց ու նիստ։

Նենգ, քէն, վերջէ Թո՛ղ հեռանան մեր սըրտերէն վըշ-
տահար,
Ազատութեան ձայներն ըլլան մեր ցաւերուն մըխիթար.
Օ՛ն, եղբա՛յրներ, չանանք անդուլ զարգացմանը մեր
երկրին,
Ո՛հ, այն ատեն պիտի զարնենք ծափ սըրտագին, ծափ
ուժգին։

1908, Հոկտ. 11 ՆԱՇԻՏ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ձայն առէ՛ք նուագաց, քընարք Հայկազանց,
Ձայն, կուսանք Հայոց, տո՛ւք յերգ պարաւոր.
Զարթուցէ՛ք ի քինդ զարձագանգ լերանց,
Եւ Թո՛ղ ձայնք ամէն ոգւոն բզմնծն օր,

Օր, որ ի գիշեր
Հայոց բազմաստուեր
Ծագեց գուարթ լոյս,
Փըրկութեան քաղցր յոյս,
Ձայգ կենաց Հայուն,
Սահմանադրութիւն։

Քառասուն դարուց հընկայ ազգըն այն,
Խաւարին յերկաթ, յաղետից ի ժայռ,

Տանջէր վիրաւոր յոգիս ապաստան,
Մինչ երկնից գըթոյն թիւռ Զուարթուն էառ,

Զուարթուն, որ թեթև
Ճախրէր գայր սրաթև,
Ճակատն Ցոյս փայլէր,
Աչքէն կաթէր Սէր,
Բերէր լոյս Հայուն,
Սահմանադրութիւն։

Մատին ի չօշափ երկնառաք հիւրին,
Ելաւ կանգնեցաւ հրսկայն ոգևվար,
Փըչրեցան չըղթայք, դողաց մայր մըթին,
Եւ հալէր զերդ ձիւն դէպ արևահար.

Կեանքի ու փառայ
Աղբևն ուղին բաց
Տեսնէր Հայ, չարժէր,
Ազատ ըզան ունէր,
Թև տայր քայլերուն,
Սահմանադրութիւն։

Երգեցէ՛ք, Մուսայք, զայն օր փառաւոր,
Ուր վեր առնոյր Հայն ճակատն ի գետնէն,
Ուր ազատութիւն ծրնէր ապգ մի նոր,
Փիւնիկ նորաթև վերածին մոխրէն։

Զօրն, ուր փըրկութեան,
Օրէնք մեզ եղան,
Ուր ժողովրդին
Իրաւանց՝ ձայնին
Տուաւ յաղթութիւն,
Սահմանադրութիւն։

Ռ. Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

Եղբա՛յր, մինչեւ ե՞րբ այսպէս լուռ տխուր.
Զերթ թշուառ պանդուխտ հեծեծես վի՛չտ, վի՛չտ,
Սէ՞րն ու գութ ազգիդ խանձէ սիրտըդ միշտ.
Գիտե՛մ... արդ ցրուէ ցաւդ. զուարթ օ՛ն ձեռքդ ինձ տուր,
Ա՛ռ քեզ նոր ոզջոյն, Սահմանադրութիւն,
Զոր չնորհեց Հայուն թուական վաթսուն։

Սիրենք Ազգութեան կեանքն ու միութիւն,
Սիրենք, որ ապրի Սահմանադրութիւն։

Այն անմահ օրն, երբ մեր սրտերուն մէջ,
Սահմանադրութեան ոգին արծարծեց,
Եւ մինչեւ գաչտերն անոր փառքն երգեց,
Ծեր, երիտասարդ, մանկտին յիւ և էջ.
Այլ ո՞ր զազգի ձեռք դիմէ զայն ջնջել,
Հայուն աւերման անգութ, անտարբեր։

Սիրենք Ազգութեան....

Հերիք չէ՞ լուսոյ դէմ ապրիլ զերթ կոյր,
Անտե՛ս վարչութեան Ազգի մը թշուառ.
Համազգի անուամբ պառակտել իրար,
Իրաւանց ձայնին դէմ մընալ միշտ խուլ,
Տեսնել սա դարուն փոյթն, ընթացքն յառաջ,
Դեռ բիրտ կամաց հետ յամել անամաչ։

Սիրենք Ազգութեան....

Մոռնա՛նք երէկուան ոխն ատելութիւն,
Մերժելով վըրէժն՝ պաչտենք ազգի սէր,
Մարին Հայ սրտէն սև կըրից բոցեր,
Գիրկընդխառն համբոյր, և ուխտ հաչտութեան,

Ի փառս մեր յուսոյն Սահմանադրութեան,
Որ պաշտպանէ՛ մեր հաւատքն, ազգութիւն։
Սիրենք Ազգութեան....

Հերիք չէ՞, որ ծաղր ըլլանք օտարին,
Ուշ չէ, որ կ՝զգանք ազգութեան պարտքեր.
Երկինք ձայն կուտայ, մենք դեռ չենք լսեր,
Այլ վըրէ՜ժ ձայնենք եղբօր ականջին,
Մէկ արեան կաթիլ, ծնունդ մէկ հայրենեաց,
Զուգենք հնազանդիլ ազգիս օրինաց։
Սիրենք Ազգութեան....

Վկայ են մեզի մօտ օրերն անցեալ,
Թէ քանի անգամ ազգի բաժանում,
Հայ երակներու մէջ լեցուց դառն արիւն.
Փորձուածը կրկին փորձողն է յիմար.
Օ՛ն, սրբենք այն խորթ աւուրց արմատներ,
Որ մեր ազգութեան տունն ու տեղըն աւերեր։
Սիրենք Ազգութեան....

Աստուած Հայութիւնն աչխարհի վըրան,
Որոշ ժողովուրդ մ՝ազգի անունով,
Ընտրեց, որ կ՝ապրէր ազատ օրէնքով
Իրեն ազգութեանն յարմար և պատկան,
Եւ զոր բաղդ դողցուց դժխեմ ձեռքերուն.
Պէտք չէ՞ արդ անոր տալ կենդանութիւն։
Սիրենք Ազգութեան....

Միլիոնաւոր Հայ, ձեռքն ի ծնօտ մինչ ցարդ,
Կ՝սպասէր միակ Սահմանադրութեան
Ողջոյն տալ դարձեալ և երթալ անգամ,
Սիրելով անոր սկզբունքն հաստատ.
Արդ ուրախութի՛ւն, անցաւ փոթորիկ,
Որ սպառնայաւ անձրեւել սաստիկ։
Սիրենք Ազգութեան....

Մինչև երկնից տակ ապրի Ազգութիւն,
Ճշմարիտ Հայերն օրհնեն յաւիտեան
Հազար ուրախ հարիւր վաթսուն թուական,
Ուր սուրբ օրէնքս մեր Ազգին վարչութիւն
Օրինօք գործել և հաստատ հիման
Վըրայ դետեղել Հայ պարտուց պայման։
Սիրենք Ազգութեան....

Օ՛ն արդ, ո՛վ Հայ կղեր, աւուրն ականջ տուր,
Հաւատոյ դրօշակ ձեռքդ և սուրբ խաչն յոյս,
Սիրոյ խոստումներ քանդակած ի կուրծքս,
Քարոզէ ժողովուրդդ որ գընայ յառաջ.
Ձեռք տուր ազգային բարեկարգութեան,
Գիտցի՛ր, որ պաշտօնդ է պարտք սրբազան։
Սիրենք Ազգութեան....

Ազնուական Հայ, լսէ՛ ժողովուրդին,
Որ պատրաստ յարգել քեզ միշտ իբրև հայր.
Եկո՛ւր ազգութեան մէջ ըլլանք եղբայր,
Զայնակցէ՛, ո՛վ մեծդ, փոքրերուն ձայնին,
Հոն է քու պատիւդ, հոն քոյդ ճոխութիւն,
Որ պատուութեան մէջ տան անմահութիւն։
Սիրենք Ազգութեան....

Հայ երիտասարդք ցրուենք այն խորհուրդ,
Ձոր մեր դաշտին մէջ սերմանեցին չուտ.
Ապագան այնպէս բարօրւինք ի փոյթ,
Ուր չար դրացիներ չը գտնեն յազուրդ։
Ասկէց ալ յարմար օր կ՝ըլլա՞յ Հայուն։
Ճանչնալ իրաւունք, Օրէնք, Ազգութիւն։
Սիրենք Ազգութեան....

ՆԵՐՍԷՍ ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քեզ ողջոյն զուարթուն,
Առուգահասակ գարուն.
Քեզ ողջոյն բիւր անգուն,
Տալիս է Հայոց Տուն։
Անուշաբանի սօսիք տերևով,
Միտերը ծառից իւրեանց ծըռ-
վըռով
Օրհնում են գալըդ երկնքի
դեսպան
Դու ես մեր կեանքի պաշար
ու պաշտպան։
Երբ հեզիկ մօտեցար
Մասիսի դաշտերին,
Բքածին ամպերը
Տարագիր գնացին.
Հին լեռը բացեց
Իւր թաւուտ կուրծքը,
Քեզ կանաչ դիպակ
Սփռեց հովիտը.
Սիրահար սոխակը
Իւր վարդի յետքից
Վազեց Արարատ
Շինել իւր բունը։
Շատ երկար Հայ երկիր
Քո գալուն սպասեց,
Ծաղկեցաւ նա ալեօք
Շատ լացեց արտասուեց,
Տխուր ձմեռը
Մասեաց գագաթը
Թաղեց անխնայ
Ցուրտ ձնի մէջը.
Կարօտ չատ նստաւ
Դալար արօտի.
Ծով դարձաւ, խափած
Արտասուքն աչքի.
Հին Մասիս միւս անգամ
Զարթեցաւ իւր քնից,
Զօրս բոլորը ծաղիկով
Ծաղրով զարդարեց.
Ստեղծական ոյժը
Որ ունի Մասիս,
Թաղեց միւս անգամ,
Զմեռացաւ Հիւսիս.
Նա ինքն Արևելք
Հանդէպն Արևմուտք,
Հիւսիսն ու Հարաւ
Ընկած են մի կողմ.
Քո գալը իմացաւ
Մասիսի վուշկանը
Միւս անգամ սկսեց
Ցնծանել իւր գուժը
Վառեց չատ սրտում
Անչէջ կրակներ.
Դարբնեց հրացայտ
Երկաթի չանթեր.
Ի՞նչ կ'արժեն նորան
Գնդակ ու վառօդ,
Նիզակ, հրացան,
Ահեղ թնդանօթ։
Թէ այսքան քո գալը
Պատճառեց ծեր Մասեաց,
Ցնծութիւն խրախոյս
Վհատեալ զաւակաց։
Ուրեմն կանգնի՛ր
Մի յաւէրժ արձան,
Որ քո գալուստը
Ցիշուի յաւիտեան։

Տուր դու Հայերին
Ընտիր Հովուապետ.
Հայկական Հօտին
Անքուն անխոնջ պետ։
Տարաբաղդ Հայկածին
Որքերը յանձնեցին
Այս իսօսքերը քեզ ասել
Կոմս Իմմանուէլին։

ՄԻՒՔ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Յառա՛ջ Հայութիւն, յառա՛ջ Ազգութիւն,
Լուսաւոր դարուս գաղափարներով.
Ատի՛ր, ո՛վ իմ ազգ, խաւար տգիտութիւն,
Մի՛ տար քեզ խաբել խարդախ հոսքերով։

Կորէ՛ք դուք, Խաւար և Տգիտութիւն,
Կորէ՛ք գարչելի ձեր ծնունդներով.
Մինչ ե՞րբ մեր վերայ ձեր վայրենութիւն,
Պիտի բռնանայ կոպիտ ճանկերով։

Եղբա՛յր է նա մեզ, որ ճշմարտութեան,
Ջինուորուած այսօր զօրաւոր սրով,
Կամի քայքայել կապանք պիրութեան,
Խաւարի բանտը փլատակելով։

Բաւակա՛ն է մեզ, որքան տքնացած,
Արհամարհեցինք մարդկութեան բարիք.
Այո՛, բաւական, որքան կուրացած,
Կտրեցին կեանքից մեզ անկեանք մարդիկ։

Այսուհետև «Սէ՛ր» դէպ ի գիտութիւն,
Որ առհասարակ է բարօրութեան.
Այսուհետև «կամք» և «աշխատութիւն»,
Որ մի ծնունդ է առաքինութեան։

Հանդիսացէ՛ք լոյս և ճշմարտութիւն,
Թո՛ղ փախչի գիշեր մոայլուած սրտերի.
Ցաղթի՛ր, խորտակի՛ր, բանականութիւն,
Մոլար կարծիքներ, որդիք խաւարի։

Ազէ բազմաչարչար, Դու ազգ Թորգոմեան,
Թո՛ղ անչարժութիւն այդ քո մահարեր.
Դէ՛պ ի ասպարէզ առաքինութեան....
Դէ՛պ ի մի նոր կեանք փրկութենաբեր։

Աստուածեղէն ալ մարդկութեան Փրկչին
Լինելու է քեզ առաջնորդ հզօր.
Դէպ ի կրթութիւն յանուն սուրբ խաչին,—
Այդ է պահանջում մեր դար լուսաւոր։

Մա՛հ Զօյիլներին նախանձով վառուած,
Աքսոր ու կորուստ վէստ—Սարգիսներին։
Դոցա համար լոյս տգիտասլած
Դարձել է մի ժանտ դահիճ դառնագին։

Դոքա սեփական օգտին պարապած,
Գետին են զարկել իրաւունք ազգին.
Եւ, սուտ հայհոյութեամբ դիմակաւորուած,
Փոսեր են փորում բարի մարդերին։

Առողջ մտածողն — «աղանդաւոր է».
Ճշմարիտ խօսողն — «Հայի ոխերիմ».
Ինչ որ Հային է, — «այն երկնքից է».—
Դա՛տ արա սոցա, Տէ՛ր իմ, Աստուած իմ։

Միայն կաշառուածն անարդ արծաթից,
Կարող էր այդպէս խորհել ու մտածել.
Միայն մոլորուածն կեղտոտ ախտերից,
Կարող էր այդպէս իւրեան փայփայել։

Նզովեա՛լ է նա և միշտ նզովեալ,
Որ քարոզել է սուտ ազգայնութիւն.
Որ ազգի առջև մեր դար լուսափայլ
Խաւար է կոչել և տգիտութիւն։

Թունաւորուած են օրերս վշտալի
Ազգիս՝ անզգայ չահամոլներից.
Տեսնելով ձեր գործ, ո՛վ ծնունդք իմ,
Արիւն է կաթում իմ խարշած սրտից։

Սրբութիւն պղծուած, հաւատ կաշառուած.
Ազգ ու հայրենիք անխիղճ վաճառուած.
Կարգ, օրէնք, պատիւ — բոլոր ոտնակոխ,
Ամէն տեղ դժոխք, մատնութիւն ու ոխ։

Ցուսահատութեան սեւամած ամպեր
Գալիս դիզվում են իմ սրտի վերայ.
Ո՛հ, ի՞նչ դառն վիճակ, ի՛նչ տխուր ժամեր.
Անիծեալ լինիք, մարդիկ անոպայ։

Ո՞ւր որդիական արտասուք ու սէր,
Ո՞ւր ցաւակցութեան դառն հառաչանքներ.
Մի թէ ձեր խեղճ մօր գերութեան չքին
Զգալի՞ չէ ձեզ, որդի՛ք չարութեան։

Ա՛խ, եթէ, Հայ ազգ, մի օր կամ մի ժամ,
Աստուած պարգևէր քեզ միտք խելացի,
Դու կը տեսնէիր, ո՛րքան անզգամ
Մարդիկ կան քո մէջ անկեանք, անհոգի։

Դու կը տեսնէիր որ քո չորս կողմում
Օձեր են բնակում, դահիճք կորստեան.
Որ անխիղճ որդիդ արիւնդ են ծծում,
Մա՛հ քեզ խնդրելով, անբաղդ Հայաստան։

Նիւթապաշտութիւնն մահու կապանքով
Խեղդել է նոցա իւր ծանր յծի տակ.
Ջեռներն ու ոռներն պինդ կաշկանդելով,
Վարում է անգիւտ կորստի յատակ։

«Ոսկի ու արծաթ, արծաթ ու ոսկի, —
Ահա՛ մտածմունք քո ընտրեալների.
Սոքա՛ են նոցա էութեան կենտրոն,
Կեանքի նպատակ, Աստուած ու կրօն։

Ո՛վ աղաւտութիւն, սուրբ աքսորական,
Ջոհելու եմ քեզ իմ անձս յաւիտեան.
Թո՛ղ ստրկացած դարերով մարդիկ,
Դնեն իմ վերայ նզովքի կընիք։

Թո՛ղ սրէ չար լեզուն անզօր թշնամին,
Թափելով վերաս թունաւոր սլաքներ.
Ես պիտի խնդրեմ, աղդ իմ լալագին,
Ոռնակոխ եղած քո իրաւունքներ։

Ոչ ոք չէ՛ կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնութեան զէնքով.
Ո՛չ սուր, ո՛չ արիւն, ո՛չ բանտ, ո՛չ կայծակ,
Ո՛չ նոյն իսկ գեհեն մշտավառ բոցով։

Թո՛ղ անմիտ մարդիկ փրփրան ու գոչեն —
Անվեհեր հոգին կ'մնայ միշտ ազատ.
Թո՛ղ ալիք ժայռին զարկեն ու կոծկեն, —
Նա ծաղր առնելով կ'մնայ միշտ հաստատ։

Բայց սպասեցէ՛ք դուք, որդիք խաւարի,
Կը գայ ձեր վերայ ահեղ դատաստան.
Նորան գրաւելու չեն ձեր ոսկեվի
Պարկեր ու գանձեր սև հարստութեան։

Կ'երթան կ'անցանեն այս դառն օրերը,
Կը գայ երեւան նոր աղդ, նոր կեանքով.
Նա կը դատէ՛ ձեր վատթար գործերը, —
Ամօթու արձան ձեզ կանդնեցնելով։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԱՂԱՍԻՒ ՍՈՒԳԸ

Այր ու ձոր ընկած մէկ չոր թփի տակին,
Գետին նայելով՝ մնացել եմ նըստած.
Ջեռըս ծոցումըս, գլուխս մէկ լեռ քարի
Տըւած՝ լալիս եմ, օրըս խաւարած. ա՛խ, օրըս խաւարած։

Ամպերն առաջիս, արեւն ետևիս,
Քեզ մըտիկ տալով, ա՛յ իմ քաղցր Մասիս,
Աղի արտասընքով էրված, խորոված,
Երեսիդ նայիմ, մընամ քարացած. ա՛խ, մընամ քարացած։

Ծընող, աղդական, հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Ես Բապպ, ե՞րբ կ'ըլլի որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ չեն ասելով. ա՛խ, ձեզ չեն ասելով։

Ես Բապպ, ձեր ճըտուն մէկ օր էլ կ'ընկնե՞մ,
Ես Բապպ, ձեր երեսն մէկ էլ կը տեսնե՞մ,
Ես Բապպ, ծունկ ծընկի տըւած՝ ձեզ կ'ասե՞մ,
«Ա՛յ իմ խեղճ ծընողք, ձեր չանին մեռնիմ. ա՛խ, ձեր չանին մեռնիմ։»

Աչքըս ծով դարձաւ՝ ճամբին նայելով,
Մէկ ղուշ որ գըլխիս պըտիտ է գալիս,
Թէ ե՞րբ մէկ խապար կ՚հասնի ինձ բարով.
Հոգոց հանելով ասում եմ լալիս. ա՛խ, ասում եմ լալիս։

«Ես Բապպ, գետնի վրայ գետ սո՞ւզ էք անում,
Ձեր կորած որդուն կարօտ մընալով,
Թէ հողի տակը մըտած՝ դինջանում,
Ինձ թողէք տանջվիմ, ո՛խ ա՛խ քաչելով. ա՛խ, ա՛խ ո՛խ քաչելով։

«Ես Բապպ, ձեր ամակն ինձ հալալ արի՞ք,
Ես Բապպ, սուրբ բերնով ձեր ինձ օրհնեցի՞ք,
Շերուն իմ հայր, տարաբաղդ իմ մայր.
Էլ իմ հաւատքս ե՞րբ կ՚հասնի աչխարհ. ա՛խ, ե՞րբ կ՚հասնի աչխարհ։»

. . . . . .

Նազլու, իմ Նազլու, անընման Նազլու,
Սիրտըս խորովի, անունդ յիշելով.
Նազլու, իմ Նազլու, հրաչալի Նազլու,
Աղասին քեզ տայ իր յետին բարով. ա՛խ, իր յետին բարով։

Սարերի գօշին, ձորերի միջին,
Վա՛յ գըլխին տալով քո խեղճ Աղասին,
Երեսիդ զրկված, քո սիրուն մաչված,
Տատրակի նըման փըչի վրայ նըստած. ա՛խ, փըչի վրայ նըստած։

. . . . . .

Նազլու, իմ Նազլու, մէկ չունչս ա մնացել,
Ոսկերքս քըրքըրվել, աչքերս խաւարել.
Թո՛ղ մէկ չունչդ առնիմ, յետոյ հողը մըտնիմ,
Դըժոխքն էլ տանին՝ ես հանգիստ կ՚ըլիմ. ա՛խ, ես հանգիստ կ՚ըլիմ։

Քեզ եմ մընում, քեզ, քո չանչին մեռնիմ,
Հող ու գերեզման ես վըրէս ունիմ.
Քանց իմ սառն մարմինը էլ ի՞նչ գերեզման
Ինձ պէտքը կը գայ, ե՛րեսիդ ղուրպան, ա՛խ, ե՛րեսիդ ղուրպան։

Սրի՛, սասծըդ արա՛, ինձ թողի՛ր.
Բե՛ր իմ երեխէքս, ու վըրէս կանգնի՛ր...
Մէկ նըրանց տեսնեմ՝ աչքըս խըփիելիս,
Մէկ նըրանց ասեմ՝ լեզուս լըռվելիս.

«Մնաք բարով, որդիք, աղիզ, սիրական,
Էլ չէք տեսնել ինձ, ա՛խ, դուք յաւիտեան.
Ձեր հօր տեղեակ՝ ձեր խեղճ մօրն յիշեցէ՛ք,
Ու իմ ողորմին, ժամն կատարեցէ՛ք։

Խ. ԱԲՈՎԵ

ՆԱԶԼՈՒԻ ՍՈՒԳԸ

Գարունքը բացվել ա, դաչտեր կանաչել,
Ծառերը ծաղկել, սարեր ղարդարել,
Բըլբիլն իր վարդի սիրովը կըչտացել.
Չէնց ես, ա՛խ, սիրոյդ կարօտ մընացել. ա՛խ, կա մընաց

Ինչ քար տեսնում եմ, դու ես առաջին,
Ինչ խոտ կոխում եմ, դու միտքըս գալիս.
Աղբըրի ջուրն էլ քո հասին ա տալիս,
Անդի ծաղիկն էլ իմ օրը լալիս. ա՛խ, իմ օրը լալիս

Աչքիս լինն էլ, ա՛խ, լալով փըճայաւ,
՛խ, ո՛ւխ քաչելով՝ լերդըս չորացաւ.
°ւմ սիրտըս քանամ, ո՞ւմ ասեմ իմ ցաւ,
սեմ էլ, ես Րապպ, ո՞ւմ սըրտին կ՚տայ ցաւ: ա՛խ, ո՞ւմ
սըրտին կ՚տայ ցաւ:

Ջեմ ուզում աչքըս երկինքը քըցեմ,
ռնակն, արեգակն ինձ հաւար կանչեմ.
՛ըտ ունին նըրանք, որ իմ դարդս ասեմ,
ի՛, արեգակ իմ, քեզ կարօտ եմ. ա՛խ, քեզ կարօտ եմ:

Ես Րապպ, քո սիրտն էլ հեռըս ցաւո՞ւմ ա,
ս Րապպ, անուշըս միտըդ գալի՞ս ա.
՝ չոր քարերը ձէնս ու սուգս լըսում,
հեռըս խօսում, ո՛չ սիրտըս առնում. ա՛խ, ո՛չ սըրտս

Էդ սուրբ երեսըդ մէկ էլ ես տեսնիմ,
կ էլ մօտդ նըստիմ, մէկ ճըտռվդ ընկնիմ,
ղ էն ժամանակն ես տամ իմ հոգին,
անիմ արևիդ՝ էդ ոտիդ տակին. ա՛խ, էդ ոտիդ տակին:

Նազլուիդ աչքը ճամբան մի՛ թողուր,
զլուդ մի՛ սալանիր, Նազլուդ ջըրատար.
ղ դուրսան ըլի, հասի՛ր Նրան հաւար,
սի՛ր, հողը դի՛ր, հոգին հեռըդ տա՛ր. ա՛խ, հոգին հե-
ռըդ տար:

Խ. ԱԲՈՎԵԱՆ

ՀԱՌԱՋԱՆՔ

Սա տխուր վիճակ տարաբաղդ ազգիս
Ի՜նչ արիւն արցունք կը հոսեցնէ,
Նոր նոր յոյս տածող Հայոցս աչերէ:
Սա մեր անողորմ բաղդին հարուածներ
Քանի՛ սրտառուչ հառաչանքներով
Ճմլեն Հայ սրտերն, դող տան ու երեր:
Ո՞վ Տէր, բաւ չէի՞ն ինչ որ մինչև ցարդ
Կըրեցինք սուր, ցաւ, աւար ու աւեր,
Ո՛վ դու հաշտութեան ծիածան զուարթ:
Մեր ս նետաց երկինք պարզեցիր
Եւ զ զարեւն հայրենի,
Ու աստղէն հայրենի,
Մէկ սիրա, ի, ամէնքս մէկ անուն,
Մէկ յոյս, մէկ ատաք կըրող, մէկ արիւն,
Մէկ ապագայի ա՛ ակնկալու,
Ի՞նչու չմիանանք ի մի յոդ սիրոյ:
Մի՛ զմեզ, Տէր, մի՛ պատժեր անաչառ,
Կեցուր քու չանթելդ բարկութեան արտար·
Զիրար սիրելու, օգնել իրարու
Կ՚ուխտեմք աւասիկ ուխտ սուրբ ի սրտէ,
Եւ խաղաղութեան խո՛ղ գայ հըրեշտակ,
Միութիւն և սէր պահել ի սիրտ մեր:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ի մեսսասաներորդ տարեդարձ Ազգային Սահմանադրութեան Հայոց 1871 Մայիս 30

Մասեաց ազատ բարձրը սարէն
Գայ աղաւնին յոյսն Հայուն·
Զուարթ՝ ի խինդ ձեզ հրաւէր
Սուրբ միութեան կարդայ, Հա՛յեր·
Օ՛ն, միասիրտ եղէք յողջոյն,
Ձի այս ձեր կեանք, ձեր փառք և լոյս·
Հրեշտակք յուսոյ, ողջոյն քեզ, ողջոյն,
Սիրավառ դիմօք կուտայ Հայոց տուն։
Այս՝ մեզ պատգամ վեհ զուարթնոյն,
Զարդիք, Հայեր, զարթիք ՚ի լոյս,
Ծագեց պայծառ արուսեակ նոր
Հէք Հայութեան բերաւ նոր օր·
Ալ բաւ է, բաւ այսչափ տարուան
Սըրտի, մտաց խոր թմրութիւն·
Արիք, գործեցէ՛ք, ձեզ սիրտ ու մէկ կամք·
Ձօսքն է ապարդիւն, գործքն է ձեր փրկանք։
Օ՛ն, յիշեցէ՛ք զուք անվեհեր
Ձեր քաջապանց արի գործքեր,
Ոչ թէ մի օր, այլ միշտ ուժգին
Հնչեն ձայներ այդ սուրբ խմբին,
Որ սարսի ուժն վատ թշնամւոյն,
Փչրին հիմանց թուխքեր անհուն։
Հրեշտակ զուարթ, պատգամդ է քաղցրիկ,
Հապա ալացիր Հայուն մօրն ՚ի դիրկ։

ԵՂԱՆԱԿ· Ն. Թ·Ա.ԵՃՆԱՆ Ա. ՊԱՊԱՃՆԱՆ

ԵՐԳ Ի ԴԷՄՍ ՔԱՋԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Հայրենեաստէր Արամիանք,
Չի՞ կայք ի քուն ընկղմեալ,
Բացէ՛ք զաչս ձեր հոգեկան,
Տեսէք զօրս ձեր ժամանեալ։
Ո՞ւր են փառք ձեր ժիր նախնեաց,
Ո՞ւր են պատիւ վեհ արանց,
Որք պաշտարհ Հայաստանեայց
Լցին փառօք դիւցազանց։
Ճառաջ մատիք ինձ լսել,
Շառաւիղք քաջին Հայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործ վարպանայ։
Որ գլուխ իւր կենօք չափ
Եդ ի փրկանս իւր ազգի,
Եւ կընքեալ գայն իւր արեամբ՝
Եղեւ փրկիչ հայրենի։
Սուրբ խաչ փայլեաց փրկչական,
Հոգւոց ազգիս հայկական,
Պահեա՛ զմեզ, Տէր Աստուած,
Եւ աչխարհիս փորձանաց։
Լուսաւորեաց Հայաստան
Լուսով խաչին փրկչական,
Հնչեա՛ աչխարհ ամենայն
Զփառ մեծի աւետման։
Բարձրացի՛ր արդ, Արարա՛տ,
Պճնեալ ծաղիօք գեղոյդ գագաթ,
Ազգիս Հայոց խնդութեան,
Լեր դու վկայ յաւիտեան։

Ն Ո Ւ Ի Ր Գ

ՁՄՐՄՈՐՊ ՏՓՐՆԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա.

Ահա յերկնից ժպտի Աստուած քաղցր առ մեզ,
Մինչ ձիթենեաց ոստ 'ի ձեռին գանք հանդէս.
Ուխտ 'ի բագին սիրոյ՝ դնենք, ո՛հ, սիրտք մեր,
Իղձք մեր թռչին թո՛ղ ի յուսոյ կամարներ։
Ամպերուն ւմէջէն,
Կիսանուագ աստղեր
Պսակ մեզ սփռեն,
Ու զուարթ նայուածքներ։
Սանո՛ւնք Արամեան, օ՛ն առէք 'ի նուագ
Զահունանաւորութիւնն՝ Հայուն յոյս ու փառք։

Բ.

Զուարճացի՛ք, որդիք սիրոյ հայութեան,
Ահա ձեր ձայնք հասին երկնից 'ի խորան.
Փոխան փշոց՝ վարդք փթթեցան քո դաշտեր,
Եւ իրաւանցդ արդար՝ Սահնան քեզ կոտ Տէր։
Թո՛ղ աչքերդ զարմին
Աբրուանք ցօղելէն,
Զի Հայկայ ճակտին
Աստղք չողչողին։
Որդիք Արամեան, ծագի Արշալոյս,
Դրօշն 'ի ճակատ երկնաճառագ Ծո՛ղյս։

Ա· Յ· ԱՅՎԱԶԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝
Առաջին դու խօսք, ականջիս հասած,

Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչես ու հնչես դու միշտ անդադար։

Ո՛հ, ի՞նչպէս պղտոր է սըրտիս օրը
Երբ պանդուխտ էի օտարի տանը,
Եթէ հարկ էր ինձ այլազգի լեզուով
Իմ միտքը յայտնել օտար բառերով,
Որ երբեք սիրել կարելի չէ ինձ,
Որ ձայն ողջունի բնաւ իակ չեն ինձ։

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցր կը հնչես ինձ դու,
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերուն, հոգւով հայանալ.
Ասես թէ սիրով ահա դիս կանչեն
Պապեր ու հայրեր խօր գերեզմանէն։

Հնչէ՛ դու, հնչէ՛ այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզո՛ւ, բարբառ սիրական,
Արի՛, թօթափիէ՛ փոշիներդ հինցած,
Ո՛ իմ հայ լեզու, վաղուց մոռացուած.
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։

Ամէն տեղ կը փչէ Աստուծոյ չունչը,
Սուրբ է, այո՛, միւս, այլ ձեւ ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ հրանական մտածութիւնքը—
Ապա կը խօսիմ ես մօրըս խօսքը։

Ե· ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԱՅՆ ԵՐԱԶ ԷՐ

Եւ ծանր է վիշտս, և ես քնում եմ, —
Եւ ահա երազ խորին գիշերով·
Այն մեծ երազ է· ես տեսանում եմ.
Հայի մութ աստղը փայլից մի լուսո՛վ։
Եւ ահա Հայերն, նախանձով վառուած,
Դիմում են յառաջ, որպէս այլ ազգեր,
Եւ մտանում է նոցա մէջ Ճառուած,
Բերելով իւր հետ միաւորիչ սէր։
Եւ կարծես, այդ սէրն պէտք է հաստատուի,
Որ վարձաւէրէ արիւնով հոսած
Նոցա արտասուք, և ոգեւորուի
Անծայրիկ կեանքը Հայ-հասարական։
Զարթնում եմ քնից· — ինձ պաշարում են
Նոյն իսկ հոգեկան ցաւի սեւ օձեր,
Եւ Հային չար բազդ ինձ գուշակում են·
Ցաւեցէ՛ք, Հայեր, տեսածս երա՛զ էր։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

Ես Հայոց ազգին մեկ բան եմ ուզում,
Եւ այդ մեկ բանն է՝ հիմնաւոր ուզում։

Հայոց երգնը, սէրը և գինին
Մեր չրջանիցը անպակաս լինին·
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ։

Եղբարք սիրելիք, մեր սրտերու մէջ,
Ինչպէս երկնային արեգակ անչէջ,
Թող պահէ հաստատ երկնային Տէրը
Անգին հայրենեաց բոցալառ սէրը։

Կեցցէ՛ մեր հաւատ, երգենք միաբան,
Մեր ազգայնութեան միակ պահապան,
Նորա մոռացող, ուրացող Հային
Անուանենք ընկեր մատնիչ Յուդային։

Կեցցէ յաւիտեան մեր գանձ թանկագին—
Մեր հայոց լեզուն քաղցրիկ նորածին,
Թո՛ղ նա զօրանայ, ծաղկի և աճի
Ապահովութեամբ Աստուծոյ աչի։

Հայոց երգերը, սէրը և գինին
Մեր չրջանիցը անպակաս լինին·
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ։

ԱԶԻԶ ՄԷՐԻՆ

Ազիզ մերի՛ կ, քեզի Թողի,
Դարդ ունէի, դուրս ընկայ,
Սուրբ վաթանիս ժողովրդի,
Ջէնը կանչեց դուրս ընկայ։

Դուման սարեր, դարդլու սրտեր,
Դարդ ու դարման մեր վաթան,
Ա՛խ, գլուխս քու ուղուրին,
Ա՛խ, մեր անուշ մեր — վաթան···

Է՛լ, Սիս-Մասիս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս-Մասիս, չա՛ն տղերք,
Դուք տասնի չափ — հազարի չափ,
Ջեզի մեռնիմ, չա՛ն տղերք։

Առիւծի պէս առուն կուգայ,
Բաշը տուած քարերին,
Առիւծի պէս, Հայ-ազգրտանք,
Ու՛հ, վրայ տանք դուշմընին։

Մէկ սիրա դառնանք, բիւր սուր դառնանք,
Ջարդենք, փշրենք դուշմընին,
Ջան տվերք, ջան, զարկենք — զարկուինք,
Մեր վաթանի ուղուրին . . .

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ՆՈՒԷՐ ՀԱՅԴՈՒԿԻՆ

Անուշաբոյր, թարմ ծաղիկներ
Հայ օրհորդը ինձ ընծայեց,
Հեռու երկնից՝ անկեղծ նուէր
Իր քոյրերուն ուղարկեց։

Ասա՛ց. «Տո՛ւր այդ փունջն ու ասա՛,
Թէ չի անցնիլ էլ երկար,
Կռուի դաշտում հարս ու փեսայ,
Կը հանդիպինք մենք իրար։

Կռիւ կուտանք, կռիւ արդար,
Կռիւ վերջին ճգնական,
Գօտեպնդուած, հերոսաբար,
Ու կ՚ազատենք Հայաստան,

Դուրս ցայտեցին արցունքներ տաք
Իմ աչերից այդ պահուն,
Լսում էի կարծես անյագ
Ազգութեան պատգամին։

Եւ երդուեցի տանել փունջն այն,
Դէպ ի կարմիր Հայաստան,
Ուր վիրաւոր Հայերն համայն
Սպասում են փրկութեան։

ՎԱՆԵՑԻՈՑ ՁՈՒՆՈՒԱԳԸ

Բա՛ւ է, եղբարք, վիզ ճկել,
Ողորմելի երեւել,
Ժամանակը հասել է,
Մեր դրօշակին ծածանել։

Հայոց լերինք թող թնդան·
Հայոց բերանք թող գոռան,
Հայաստանի դաշտերում,
Քաջ Հայերու վիլ ուռա՛ն։

Արիւն վոթէ թո՛ղ Հայը,
Աղաղակէ միշտ ուռա՛,
Մեր թշնամին այսուհետ,
Սրտի վախէն թո՛ղ դողայ։

Այսուհետեւ արտասունք,
Վախկոտները թո՛ղ հեղուն,
Հայքս արդէն պատրաստ ենք,
Վոթել աղնիւ մեր արիւն։

Ու չենք դադրիլ վոթելու
Մեր Հայ աղնիւ արիւնը,
Մինչեւ ազգը չի ստանայ
Իրա ազատութիւնը։

Ա՛խ ու վա՛խը մենք մոռցանք,
Այժմ պիտենք մենք ուռա՛,
Հա՛յք, գոչեցէ՛ք, միշտ ուռա՛,
Որ թշնամին մեր դողայ։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՄԵՆԱԿԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՍՏՈՒԵՐԻՆ

(եզոր Վ.ռւսամեան)

Բոցկում սարին սև ամպն է չոկեր
Հոմն է հեծեծում Բասենայ դաշտում,
Ոսկի երգերդ, իմ ազիզ ընկեր,
Ին հոմն է երգում Բասենայ դաշտում։

Քայլ ընկերներով կռիւ սլացար,
Ազատ երգերով Արագի դաշտում,
Նամարդ թշնամուն զարկիր, զարկուեցար,
Ընկերներիդ հետ Բասենայ դաշտում։

Ու ժողովուրդը կարօտ քո սիրուն,
Բասենայ դաշտից մինչ Ալաթ ու Մուշ,
Երգում են անվերջ երգերդ սիրուն,
Ու չեն մոռանում երգերդ անո՛ւշ։

Ա՛խ· սուրբ վէրքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անուշ քնացիր,
Թո՛ղ ծանր չթուայ այն հողը վրեդ,
Որ այնպէս հզօր, անհուն սիրեցիր...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

	Էջ
Ազատ Աստուածն այն օրից	3
Ազատութեան աստղը պայծառ	15
Ազատութեան սիրոյն համար	22
Ազատութեան այն վառ սէրը	105
Ազատութի՛ւն, ակո՛ւր հոս	68
Ազգ իմ, որքա՛ն նկուն մնաս	144
Ազիզ մէրիկ, քեզի թողի	215
Ազնիւ ընկեր, մնռանում եմ· Մ· ՇԱՀԱԶ·	29
Ազատութեան քաջ զինուորը պատանին	150
Այ ու ալուան ես գառէ	137
Այիք Սեւ ծովուն տարին պիս	142
Ախ, Հայաստան, Հայաստան,	138
Ախ, վաղապուր· ախուր Հայ· Ս· ԺԱՄԱԿՈՉԵԱՆ	148
Ախ թէ երկինք գէթ մի վայրկեան	145
Անա՛ հրնչաձակ ռակեթետուր Գ· ԱՊՏՈՒԼԼԱՀ	6
Անա՛ բաժակ ուրախութեան Ս· Պ· Պ· ՓԱՓԱԶԵԱՆ	50
Անա՛ ազատին Նոյեան տապանին	55
Անա՛ կ'երթամ, սիրելի մայր	69
Անա՛ յիրկինից ժպիր·	212
Ազօթարանը բացուեցաւ	140
Այն քաջ մարդու չապիկն է	143·
Այն որ ծանօթ է պատմութեան Ազգին	35
Անի քաղաք նստիր կուլայ	59
Անուշ քոյր, թարմ ծաղիկներ	216
Ապառաժուտ լերան մը կող· Մ· ՊԻՇԻԿԹՇ·	136
Ապերախտ ենք մենք Հայերս	147
Ա՛ս ընկալ ի գիրկդ, մայրդ· Ս· Պ· Պ· Փ·	58
Արի՛, եղբայր, ա՛ռ քո զէնքեր	143
Արի՛ք հայկազունք, յառաջ· Յ· Գ· ՍՎԱՃԵԱՆ	48
Արի՛ք, ընկերք, քաջակորովք	141
Արի՛ք, Սանուհիք, որդիք	140

Արի՛ք Հայեր, լուծը թօթուենք 139
Արկած Հայոց ժամանակին· ե· Մելիքեան 8
Արեւ, արեւ, գուրս եկիր· Ս· Սաֆարեանց 180
Ազատութեան սեմին վրայ· Ն· Արշարունի 194
Բա՛մբ, որոտան բարձուսա· Հ· Գ· Ալիշան 75
Բարեաւ եկիր, Հայր պատուական 89
Բարձրէն եղաւ հրամանը 96
Բարով եկար գու սիրուն կռունկ 67
Բարով ես եկել, ծիծեռնակ սիրուն 146
Բաւ է, որդեակք, այսքան տարի 180
Բաւ է, եղբարք, վիզ ճկել· Ք· Քաթիպա 217
Բոցիկու սարին սև ամպն է չոկեր 218
Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ· Մ· Պ· Պ· Փ· 151
Գլգլալով ջուր է իջնում 101
Գոհ ենք քեզնից, ո՛վ բարերար· Ս· Շահազ· 168
Գարունքը բացվել ա, գնչուեր կանաչել 208
Դաշնակցական խումբ, գնանք մենք 31
Դատարանին իմացուցին 98
Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին 131
Դժոխք ի մարտ արշաւեն· Մ· Պէշիկթաշլեան 216
Դու զո՞վ խնդրես, մայր իմ Մ· Պէշիկթաշլեան 25
Եղբայր, մինչև ե՞րբ այսպէս Ն· Մեզպուրեան 197
Եթէ կամիք փրկել թշուառ հայրենիք 169
Եղբայր ենք մենք, Հայ, Թուրք, Պուլկար, Ցոյն 165
Եղբարք, յառաջ լանանք, քայլ 158
Ելէք, եղբարք, բոլորուելու 98
Եկել է գարուն, ոխակը սիրուն 21
Երբ որ ազգին գահը փլաւ 101
Երբ ալեկոծ ծովուն վրայ 106
Երբ որ բացուին դռներն յուսոյ· Ն· Ռոխմին· 63
Երբ որ մայրը երկունքով· Ք·Ամաս-Քաթիպա 154
Երգ սիրոյ, երգ հայրենի, քեզ կ՝ուզուի 161
Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին 117
Ես հանեցի ոտս պատեանէ՛ն 126

Ես հիւսեմ ձեռօքս իմ վեհ քայլերգութիւն 175
Ես գալար ծառ մի անկեալ ի Հայկայ 172
Երգուում եմ ահա այս սուրբ հրացանով 160
Երկիր քաջազանց, քանի՛ սուգ· Ա· Նազարեան 157
Եւ ես երբեմն երգում էի 167
Եւ ծանր է վիշտս 214
Զէյթուն, անկախ գու աշխարհիկ 156
Զինուած, պատրաստուած, Զէյթունի քաջեր 128
Զէյթունցի ենք, ժայռի ձագ ենք 33
Զէնքերս տուր, մայրիկս 149
Զինուոր էի Հայոց ազգին մտերիմ 174
Է՞ր հեռանաս քո մայրենի աչեւ· Յ· Կարինեանց 9
Ընդ աստեղօք օտար ափանց 39
Ընկերք յաղթութեան ժամն է արդ հասեր 152
Թէ իմ ալեւոր հերքս· Ռ· Տ· Գ· Պատկանեան 36
Թէ թեւ ունէի, Ս· Հ· Ֆելէկեան 90
Թէ իմս հայրենեաց » » » 113
Թէ հայրենեաց պսակաղիր 135
Թէ տային ինձի թագ և ադամանդ 155
Թուրքը լսաւ անունդ, Զաւուչ 108
Թոռիր, իմ նժոյգ, սլացիր չուռաով, 153
Թշուառ հայրենիք, ո՛հ, գու լաս հերիք 171
Թո՛ղ պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում 181
Իմ սիրելի զաւակունքս 4
Ի բիւր ձայնից Մ· Պէշիկթաշլեան 5
Ի զուր ամպերն որոտային » » 9
Իմ հայրենեաց հոգիս վարդան 23
Իբրեւ արծիւ սաւառնում եմ 47
Իմ հայրենիք զիս կը կանչէ· Արմ· Հայկունի 21
Ինձ համար չէ գարնան գալը Ք· Պատկանեան 84
Ի զէն, հայեր, ի սուր 159
Ի զո՜ւր են, ի զո՜ւր, բռնաւոր 178
Լուռ են և տխուր դաշտեր 159

Լուսին չկար, մութ գիշեր էր 119
Լռեա՛ Ամպերը եկան ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ 93
Լո՛, լո՛, լո՛. Սիփնայ սեգ սարի վրայ 95
Խաւար եմ ես ինչպէս գիշեր 121
Խնուսից գալող հայ գինուորները 41
Մխիթառնակ, Ծիծեռնակ ՏՈՏՈԽԵԱՆ 54
կախաղանը պատրաստուեցաւ 125
կարկուտ տեղայ Խանասորայ 35
կոկկասի քաջեր, խմբեր կազմեցէք 43
կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ քաջ 30
կռունկ, ուստի կուգաս, ծառայ եմ՝
ՎԱՆԵՑԻ ՏԻՐԱՑՈՒ ՄԿՐՏԻՉ 10
կապուտակ ձին նստեր եմ, Արագին պ՛ ա՛ խ՛ 170
կոտրածն անգութ, Հայերը թող լան 193
Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջ 16
Հայ երիտասարդներ, չուտ չտապեցէք 44
Հայե՛ր, մինչև ե՞րբ արտասուենք 177
Հայաստան երկիր դրախ՝ Տ՛ ՄԻՐԶԱ-ՎԱՆԱՆՑԻ 183
Հայե՛ր, այսօր ազատ կեանքի Ա՛ ՓԱՆՈՍԵԱՆ 189
Հազիւ լրացաւ քսան մէկ տա՛ ԳԻԼԱՌ-ՔԱԹԻՊԱ 192
Հայրենեաց սիրոյն համար խմբեր պատրաստեն 194
Հայաստան, քաղցր իմ Հայաստան 85
Հասաւ արդ ժամ փառաց 133
Հայոց աչխարհում ծագեց նոր հրդեհ 74
Հայոց երգերը, սէրը՝ 214
Հայրենասէր Արամեանք՝ 211
Հայրենեաց սիրով վառուած Ս՛ Պ՛ Պ՛ ՓԻՓՈՒՃԵԱՆ 42
Հայր մեր երկնաւոր՝ սուրբ լա 130
Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք 107
Հեռաւոր երկիր նաւած դու նժդեհ 62
Հերիք, որդեակք, այնքան տարուան 24
Հիմի էլ լռենք, եղբարք, Ռ՛ Տ՛ Գ՛ ՊԱՏԿԱՆԵԱՆ 60

Ո՞ր մահկանացուն այս երկրի վրայ 174
Ով որ քաջ է, Ի՞նչ կը սպասէ 34
Ո՛հ, Ի՛նչ անուշ Մ՛ ՊԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ 53
Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանգ 116
Ո՞վ ես որ գաս առանձին 132
Ո՛վ ծիծեռնակ, վարանած թռչնիկ 190
Ո՛վ մեծասքանչ դու լեզու՝ Ն՛ ՄԵԶՊՈՒՐԵԱՆ 80
Որդիք Հայկայ, որդիք փառաց 91
Ո՞րն է աչխարհ Հայաստան 46
Ո՛վ դու բարեկամ այրած՝ Հ՛ Դ՛ ԱԼԻՇԱՆ 164
Ողջոյն տուէք իմ հայրենեաց՝ Ս՛ ՅԵԼԷԿԵԱՆ 169
Պաշարեցին Խանայ ձորեր 120
Պզտիկ տղայ, չեմ օրօրեր 78
Սա տխուր վիճակ 209
Սասուն ելաւ ապստամբեց 27
Սասուն գաւառ, հին Հայաստան 81
Սար ու ձոր ընկած Խ՛ ԱԲՈՎԵԱՆ 206
Տալորիկի զաւակ եմ զորդ Մ՛ ՏԱՄԱՏԵԱՆ 65
Վայրագ Քրդաց խօլ վայտերը 189
Վարդան մեր քաջ զօրավար 38
Վէրքերով լի չան ֆէտայ եմ 122
Տէ՛ր, ողորմեա՛ Հայոց ազգին 124
Տեսէ՛ք ազատնին Նոյեան տապանին 103
Տէ՛ր, կեցո՛ զու զՀայս 83
Տո՛ւր ձեռդ, եղբայր, ժամ է զարթնելու 178
Օտար տիւնք ցրուած 100
Օտար երկիր թափառած 32
Օտար երկիր, օտար պանդխտա կը հեծեմ 164
Օ՛ն, փութացէք, հասեալ է ժամ 173
Քեզ ողջոյն զուարթուն՝ Մ՛ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ 200

Հիմի էլ խօսինք , եղբարք, Մ· ՆԱԼԲԱՆՏԵԱՆ 64
Հնչակեան վինուոր ուժդին համարձակ 123
Հուր բարկութեան համայն Հայոց 113
Հապա քաջազունք, Հայոց զաւակունք 163
Հայրենիք Սրբազան, իմ· Մ· ՔՈՒՉՈՒԲԻԿԵԱՆ 176
Հեռո՜ւ եմ քենէ, օտար երկրի մէջ 188
Ջայն մի հնչեց էրզուրումի Հայոց 57
Ջայն տուր, ո՛վ ծովակ, Ց· ՄԻԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ 103
Ջայն տուր, ո՛վ ֆէտա 128
Ջայն առէք նուագաց, քընարք Հայկազանց 195
Մայրենի լեզու, մայրենի· 212
Մասեաց ազատ բարձր· 210
Մասիսի ճակտին ամպրոպ պատռեցաւ 191
Մարտի դաշտը սլացէ՛ք, ո՛վ քաջեր 187
Մնասցես բարեաւ, թրգմ· Մ· ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ 72
Մենք անկեղծ վինուոր ենք 94
Մեր սիրուն հայրենեաց 97
Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն 127
Մայր Արաքսի ափերով 11
Մեծ էր կուրծքդ, մեծ սիրտ ունէիր 132
Մռայլ կոպեր թողէ՛ք վիս 134
Մեր սիրուն վայելչական տեղերն 45
Մենք պէտք է կռուինք և ոչ լայց լինենք 40
Մեր հայրենիք թշուառ անտէր Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ 18
Մի լայք, հա՛յր իմ ու մայրիկ· Մ· ՊԷՇԻԿԹԱՇԼ· 162
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր Ս· ՍԱՓԱՐԵԱՆ 181
Յազատն ի վեր ի Մասիս 72
Յուլիս ամսի 25 ին 111
Յառա՛ջ Հայութիւն, յառա՛ջ· Ս· ՇԱՀԱԶԻԶ 202
Նպատակիս գէթ մի մասը կատարուէր 45
Նպատակիս հասնիմ միայն 79
Շիտակեմ գիմ սուրմալին յերկինք 109
Ո՛չ, եղբարք, ո՛չ· Խ· Վ· ԳԱԼՖԱՅԵԱՆ 184

-16725-

ՀՀ Ազգային գրադարան
NL0756480

1
844